ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 2



ԵՐԵՎԱՆ

Մարտ 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

1.1 Ծրագրի համատեքստն ու հիմնավորումը..... 6
1.2 Ծրագրի շրջանակներում բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծում..... 7
2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ 8

2.1 Ծրագրի զարգացման նպատակները 8
2.2 Ծրագրի շահառուները..... 9
2.3 Ծրագրի բաղադրիչները 10
2.4 Ծրագրի ֆինանսավորում..... 11
3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ.....11

4. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ.....12

4.1 Ակնարկ կիրառելի պետական օրենսդրության մասին..... 12
4.2 Բնապահպանական օրենսդրություն..... 13
4.3 Գյուղատնտեսական օրենսդրություն 17
4.4 Սոցիալական օրենսդրություն..... 19
4.5 Շրջակա միջավայրի որակի պահպանության կանոնակարգման հիմունքները 19
4.6Համաշխարհային Բանկի անվտանգության քաղաքականություններ 20
4.7 Բնապահպանական ուսումնասիրություն և դասակարգում 23
4.8 ՀԳՌԿՄ II Ծրագրի շրջանակներում բնապահպանական կառավարման ինստիտուցիոնալ պարտականություններ..... 24
5 ԲԱՂԱԴՐԻՉ 1 - ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 26

5.1Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտություններ և դրանց հավանական ազդեցությունները..... 26
5.2 ԱԿԱԶՊ-ների իրականացման շրջանակում շրջակա միջավայրի վրա ազդող և սոցիալական բացասական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ 32
6 ԲԱՑԱԴՐԻՉ 2 - ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ 35

6.1 Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտությունները և դրանց հնարավոր ազդեցությունները..... 35
6.2 Արժեքային շղթայի աջակցության բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունների համար առաջարկվող մեղմացուցիչ միջոցառումներ 37
7 ԲԱՂԱԴՐԻՉ 3 ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ38

7.1 Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտություններ և դրանց հնարավոր ազդեցությունները..... 38

7.2 Շինարարական աշխատանքների և տեխնիկական աջակցության բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունները մեղմացնող առաջարկվող միջոցառումներ 40
8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ,ԵԿՈՒՑՈՒՄ42
8.1 Անվտանգության երաշխիքների համապատասխանության մոնիտորինգ42
8.2 Անվտանգության երաշխիքների հետ համապատասխանության զեկուցում 43
9 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 44
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ/ՈՒՐՎԱԳԻԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ46
ՀԱՎԵԼՎԱԾ 2 ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ և ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 58
ՀԱՎԵԼՎԱԾ 3 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....69
ՀԱՎԵԼՎԱԾ 4 ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՓՈՔՐԱԾԱՎԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ.....70
ՀԱՎԵԼՎԱԾ 5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՍՏՈՒԳԻՉ ՑԱՆԿ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱՐ83
ՀԱՎԵԼՎԱԾ 6 ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ...87

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԳԾԻԳ	Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ
ՀԳՌԿՄԾ II	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագիր
ՀԳՌԿՊ	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման պլաններ
ԱՄԿ	Անասնաբուժական սպասարկման կենտրոններ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի ազդեցության գնահատում
Էկո-աուդիտ	Որոշակի գործունեության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում՝ նախօրոք հաստատված էկոլոգիական չափորոշիչների միջոցով
ԲԱԳ	Բնապահպանական ազդեցության գնահատման գործընթաց
ԲԱՓ	Բնապահպանության ազդեցության փորձաքննության մասին ՀՀ օրենք (տեքստում օգտագործված է նաև էկո-փորձաքննություն արտահայտությունը)
ԲԿՄՊ	Բնապահպանական կառավարման և մոնիտորինգի պլան – ընդգրկում է ազդեցությունը մեղմացնող միջոցառումները և դրանց հսկողության ցուցիչները
ԲԿՀ	Բնապահպանական կառավարման համակարգ
ԲՍԿՇ	Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթուղթ
ՍԱԱՊՏ	Սննդի անվտանգության և անասնաբուժության պետական տեսչություն
ԴՔ	Դրամաշնորհների քարտուղարություն
ՎԴԻՊ	Վնասատուների դեմ ինտեգրված պայքար
ՆԾՖ	Ներդրումային ծրագրերի ֆինանսավորում
ՄԶԸ	Միջազգային Զարգացման Ընկերակցություն
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ԳԱՄԿ	Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն
ԾԳՓ	Ծրագրի գնահատման փաստաթուղթ
ԾԳՁ	Ծրագրի գործառնական ձեռնարկ
ՎԴՊՊ	Վնասատուների դեմ պայքարի պլան
ՎԴՊԿ	Վնասատուների դեմ պայքարի կարգավորում
ԱԿԱԶՊ	Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ
ԻՍ	Ինքնապաշտպանական սարքավորում
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ԳԱՀԿ	Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն
ՀՀ ՊՏ	Հիգիենիկ և հակա-համաճարակային պետական տեսչության մարզային կենտրոն, ՀՀ ԱՆ
ԲՊՏ	Բնապահպանության պետական տեսչության մարզային կենտրոն
ՀԱՀԱԿ	Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն

ՎԳՊ	Վերաբնակեցման գործողությունների պլան
ՎՔՇՓ	Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթ
ԲՀՊՏ	Բնության հատուկ պահպանվող տարածքներ – ԲՀՊՏ-ների ռեժիմները սահմանված են Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքով
ՀԲ	Համաշխարհային Բանկ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Ծրագրի համատեքստն ու հիմնավորումը

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը մշակել է ,Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակությանե (ՀԳՌԿՄ) երկրորդ ծրագիրը, որը կիրականացվի Համաշխարհային բանկի աջակցությամբ:

ՀԳՌԿՄ 2 ծրագիրը համահունչ է ՀՀ Կառավարության գյուղատնտեսության ոլորտի նպատակների հետ՝ ուղղված գյուղատնտեսության կայուն զարգացմանը, պարենի առավել արդյունավետ ապահովությանը և գյուղական եկամուտների ավելացմանը, ինչպես նշված է ,Գյուղատնտեսության կայուն զարգացմանե ռազմավարությունում: Առաջնահերթությունները հետևյալն են. (ա) շարունակել և խորացնել ագրարային բարեփոխումները, (բ) ապահովել սննդամթերքի անվտանգությունը և բարելավել պարենի ապահովությունը, (գ) խթանել գյուղատնտեսական առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը, (դ) բարելավել կենդանիների առողջությունը, և (ե) նպաստել ագրո-վերամշակմանը, ինչպես նաև մատակարարման ու ծառայությունների բարելավմանը:

Ծրագիրը հիմնված կլինի գյուղատնտեսության ոլորտում Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորված ծրագրերի, մասնավորապես՝ ներկայումս գործող ՀԳՌԿՄ և նախկինում իրականացված Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսական զարգացման (ԳՁՓԱԳԶ) ծրագրերի վրա: Այս ծրագրերը ներառել են համայնքային զարգացման միջոցառումներ, գյուղատնտեսական խորհրդատվական արդյունավետ համակարգի զարգացմանն ուղղված աջակցություն, ինչպես նաև անասնաբուժությանն ու սննդամթերքի անվտանգությանն ուղղված օժանդակություն: Մասնավորապես, ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակներում մինչ օրս պլանային 55 համայնքից 54–ում ստեղծվել են ,Արոտօգտագործողների միավորումե սպառողական կոոպերատիվներ, և 49 համայնքում մասնակցային հիմուքներով մշակվել են ,Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացմանե պլաններ (ԱԿԱԶՊ-ներ): Բացի այդ, և ԳՁՓԱԳԶ և ՀԳՌԿՄ ծրագրերի շրջանակներում իրականացված մրցակցային դրամաշնորհների ծրագրի արդյունքում մինչ օրս մոտ 87 գյուղական բիսնես ծրագրեր ստացել են աջակցություն տեխնիկական նորարարություններ ներդնելու և բիզնես

գործունեությունը բարելավելու համար[1]: Քաղած դասերի հիման վրա առաջարկվում է ավելացնել այն համայնքների թիվը, որտեղ իրականացվում են արոտավայրերի և անասնապահության արդյունավետ համակարգեր՝ շեշտադրում կատարելով համայնքների մասնակցության և վերջիններիս կողմից որոշումների կայացման վրա: Նաև, առաջարկվում է գյուղական բիզնեսների մրցունակության բարձրացման համար կիրառել սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման առավել ընդգրկուն մոտեցումներ և ձևափոխել մրցակցային դրամաշնորհների մոտեցումը Հայաստանի համար կարևոր համարվող հատուկ արժեքային շղթաներին անդրադառնալու համար:

1.2 Ծրագրի շրջանակներում բնապահպանական և սոցիալական խնդիրների լուծում

Ներկայիս ,Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակայինե փաստաթուղթը (ԲՍԿՇՓ), որը մշակվել է ,Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակե ՊՀ-ի կողմից, հանդիսանում է ուղեցույց ծրագրի բոլոր բաղադրիչների մշակման և իրականացման համար՝ հիմք ընդունելով ինչպես պետական բնապահպանական ուղեցույցներն ու չափանիշները, այնպես էլ Համաշխարհային բանկի երաշխիքների ապահովման քաղաքականությունները:

ԲՍԿՇՓ-ի հիմնական նպատակն է ծառայել որպես գործիք առաջարկվող ներդրումների շրջանակներորում հիմնական բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, ակնկալվող բացասական ազդեցությունները մեղմացնող միջոցառումները բացահայտելու, ազդեցությունների կառավարման պլաններ մշակելու (բնապահպանական կառավարման պլաններ և թունաքիմիկատների կառավարման պլաններ) , ինչպես նաև նախատեսված մեղմացուցիչ միջոցառումների իրականացումը վերահսկելու համար: ԲՍԿՇՓ-ի միջոցով սահմանվում են նաև երաշխիքային քաղաքականությունների իրականացման ինստիտուցիոնալ դրանց իրականացման որակի վերահսկման պատասխանատվության շրջանակները: ԲՍԿՇՓ-ում առկա են ձևանմուշներ, որոնք մշակված են օգնելու սահմանված ընթացակարգերի համաձայն պահանջվող երաշխիքային

[1] 2011 թվականի հունիսին մշակված ԳՁՓԱԳՁ ծրագրի Իրականացման վերջնական հաշվետության մեջ նշված է, որ Մրցակցային դրամաշնորհային ծրագրի արդյունքում աճող տարեկան զուտ օգուտները 1 ԱՄՆ դոլար ներդրումից կազմել են միջինում 0.76 ԱՄՆ դոլար, որը ապահովել է 85% ներդրման շահութաբերություն

փաստաթղթերի պատրաստմանը: ԲՍԿՇՓ-ի իրականացման բյուջեն ընդգրկված է ծրագրի ծախսերի աղյուսակում:

ՀԳՌԿՄ 2 ծրագրի շրջանակներորում նախատեսված ֆիզիկական շինարարական աշխատանքները կարող են ունենալ որոշակի բացասական սոցիալական ազդեցություններ, ներառյալ հողի ժամանակավոր կորուստ, շինարարության ընթացքում մուտքի խոչընդոտներ դեպի մասնավոր և հանրային սեփականություն կամ մշակաբույսերի կամ պտղատու ծառերի կորուստ: Այնուամենայնիվ, հողի ձեռքբերման և բնակիչների տեղահանման անհրաժեշտություն չի նախատեսվում: ՀԳՌԿՄ 2 ծրագրի իրականացման համար մշակվել է ,Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթուղթե, որում նկարագրվում են պոտենցիալ վերաբնակեցման խնդիրները և պարունակում է կոնկրետ դեպքերի համար բնորոշ ,Վերաբնակեցման գործողությունների պլաններիե մշակման ուղեցույցներ:

2. ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

2.1 Ծրագրի զարգացման նպատակները

Առաջարկվող ծրագրի զարգացման նպատակն է. ա) շարունակել թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահության համակարգերի արդյունավետության և կայունության բարելավման ապահովումը և բ) անասնապահական մթերքի շուկայահանման ծավալների ընդլայնում և բարձրարժեք ագրոսննդի արժեքային շղթայի մակարդակի բարձրացում: Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է. ա) մշակել և իրականացնել կառավարման պլաններ բարձրադիր տարածքներում գտնվող թիրախային համայնքների արոտավայրերի և անասնապահության համակարգերի արդյունավետության և կայունության բարելավման նպատակով, բ) ապահովել արտադրողների և վերանշակողների կապը շուկաների հետ, շեշտադրում կատարելով ընտրված անասնապահական արտադրանքի (կաթ և միս[2]), ինչպես նաև բարձրարժեք մթերքի վրա (միրգ և բարջարեղեն[3]) և գ) աջակցել պետական հատուկ կառույցների զարգացմանը, որոնք կարևոր դեր են խաղում նշված արտադրանքի շուկայահանման ծավալները ընդլայնելու հարցում:

---

[2] Հիմնականում կաթնամթերք, տավարի և ոչխարի միս

[3] Վերամշակված միրգ և բանջարեղեն (այն համատեքստում, որում Հայաստանն առավելություն ունի)

2.2 Ծրագրի շահառուները

Ծրագրի հիմնական շահառուներն են արոտօգտագործողները, ֆերմերային կառոպերատիվները և ասոցիացիաները, ինչպես նաև սննդի բիզնեսով զբաղվողները (ՍԲՁներ): Ծրագրի իրականացմանը՝ արոտօգտագործողների կոոպերատիվներին անդամակցելու, ինչպես նաև արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլանների մշակման գործընթացում պլանավորելու և իրականացնելու միջոցով կմասնակցեն առնվազն 50,000 արոտօգտագործողներ: Արդյունքում նրանք կշահեն բարելավված արոտավայրերից, ենթակառուցվածքներից, անասնաբուժական ծառայություններից և գյուղատնտեսական տեխնիկայից: Շինարարության ընթացքում օգտագործողներն իրենց կողմից կաջակցեն աշխատանքների կատարման, ինչպես նաև ֆինանսապես՝ իրականացման պլանների ծախսերի համաֆինանսավորման միջոցով: Ընդհանուր առմամբ մոտ 100 ՍԲՁներ՝ ներառյալ գրանցված արտադրական կոոպերատիվներ, ասոցիացիաներ և գյուղական բիզնեսներ կընդգրկվեն արժեքային շղթայի բաղադրիչի շրջանակներում և իրավասու կլինեն դիմելու որպես ենթա-ծրագրերի ֆինանսավորում տրամադրվող դրամաշնորհների համար: ԳՁՓԱԳԶ և ՀԳՌԿՄ ծրագրերի շրջանակներում մրցակցային դրամաշնորհների բաղադրիչի իրականացման արդյունքում ձեռքբերված փորձը ցույց է տալիս, որ կա բավականաչափ հետաքրքրություն և կարողություն՝ հայտերի պատրաստման, ենթա-ծրագրերի իրականացման և պահանջվող առնվազն 50%-ի չափով համաֆինանսավորում տրամադրելու ուղղությամբ: Ծրագրի նախապատրաստական փուլի ընթացքում՝ ռուսական դրամաշնորհի շրջանակներում իրականացվում են առկա ՍԲՁ-ների քանակի և բնույթի գնահատումներ, ինչպես նաև անհրաժեշտություն է առաջացել վերանայել կոոպերատիվների գործունեությունը կանոնակարգող կարգավորումները: Այլ աշխատանքների իրականացման համար կվարձվեն այլ համապատասխան շահագրգիր կողմեր՝ ներառյալ ՀԿներ և խորհրդատուներ, որոնք կունենան բավականաչափ փորձ նմանատիպ աշխատանքների իրականացման հարցում: Հատուկ ջանքեր կգործադրվեն ապահովելու համար, որ ծրագիրը ապահովում է գենդերային հավասարություն և խթանում է կանանց և գյուղի երիտասարդների մասնակցությունը որպես ԱՄ ՍԿների մաս՝ ուսումնական ծրագրերի միջոցով:

2.3 Ծրագրի բաղադրիչները

ՀԳՌԿՄ 2 ծրագիրը կազմված է չորս բաղադրիչներից:

Բաղադրիչ 1 - Համայնքների արոտավայրերի/անասնապահության կառավարման համակարգ (28.09 միլիոն ԱՄՆ դոլար)

Սույն բաղադրիչը նպատակ ունի շարունակելու համայնքի կողմից արդյունավետ և կայուն կառավարվող արոտավայրերի և կերարտադրության վրա հիմված անասնապահական մթերքների արտադրության համակարգի իրականացումն ընտրված այն լեռնային համայքներում, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոցն է հանդիսանում և որոնք շահագրգռված են բարելավելու իրենց արոտավայրերի արտադրողականությունը: ՀԳՌԿՄ ծրագրում ընդգրկված 55 համայնքներին կավելանան նոր համայնքներ: Բաղադրիչի շրջանակներում կֆինանսավորվեն հետևյալ երեք հիմնական միջոցառումները:

(1) Արոտավայրերի/անասնապահության կառավարման պլանների մշակում,
(2) Պլանների իրականացման համայնքային հիմնադրամ, և
(3)Հատուկ աջակցության ծրագրեր ուղղված կանանց/երիտասարդներին

Բաղադրիչ 2 - Արժեքային շղթայի զարգացում (6.99 միլիոն ԱՄՆ դոլար)

Այս բաղադրիչի նպատակն է ընտրված սննդամթերքի՝ կաթի և մսի, ինչպես նաև մրգի և բանջարեղենի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար:

Ծրագիրը կօգնի բացահայտել առկա այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ոչ բավարար գիտելիքները շուկայի պահանջների և որակի չափանիշների վերաբերյալ, սննդամթերքի անվտանգության և արտադրանքի տեղական և/կամ միջազգային չափանիշներին բավարարելու համար անհրաժեշտ կառույցների ու սարքավորումների անհամապատասխանությունը և վերամշակողների ու արտադրողների միջև թույլ կապը: Առկա խնդիրների լուծման նպատակով նպատակային ֆինանսավորում կտրամադրվի մինչև 80 ենթածրագրերի՝ 8,000 ԱՄՆ դոլարից մինչև 50,000 ԱՄՆ դոլար արժեքով:

Բաղադրիչ 3 – Պետական կառույցների կարողությունների հզորացում (2.59 միլիոն ԱՄՆ դոլար)

Բաղադրիչի նպատակն է հզորացնել պետական կառույցների կարողությունները՝ բաղադրիչ 1-ի և 2-ի շրջանակներում աջակցություն ստացող ընտրված արժեշղթաներում բիզնեսի զարգացումը խթանելու և շուկայի հասանելիությունը ապահովելու համար: Բաղադրիչի շրջանակներում կտրամադրվի տեխնիկական աջակցություն, ինչպես նաև կֆինանսավորվեն շինարարական աշխատանքների կատարումն ու ապրանքների մատակարարումը:

Բաղադրիչ 4 – Ծրագրի համակարգում և կառավարում (2.22 միլիոն ԱՄՆ դոլար)

Գյուղատնտեսության նախարարության ,Գյուղատնտեսական ծրագրերի իրականացմանե գրասենյակ պետական հիմնարկը կշարունակի համակարգել ծրագիրը: Ծրագիրը կգործի ներկայումս իրականացվող ՀԳՌԿՄ ծրագրի կառուցվածքի ներքո ֆինանսական կառավարման, գնումների, մոնիտորինգի և գնահատման, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական երաշխիքների ապահովման համար: Այդ նպատակով ծրագրի շրջանակներում կներառվեն ծրագրի կառավարմանն ուղղված լրացուցիչ ծախսեր: Բացի այդ, միջոցներ կհատկացվեն ծրագրի նախապատրաստական փուլում անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկական մասնագետների ներգրավման, տրանսպորտային և դաշտային այցելությունների, ինչպես նաև ազդեցության գնահատմանն ուղղված խորհրդատվության տրամադրման, այդ թվում՝ ծրագրի գնահատումների և աուդիտի իրականացման համար:

2.4 Ծրագրի ֆինանսավորում

Ծրագիրը կիրականացվի ներդրումային ծրագրի ֆինանսավորման (ՆԾՖ) միջոցով՝ ՄԶԸ (IDA) և ՎԶՄԲ (IBRD) միջոցներով: Ծրագրի հիմնական արժեքը կազմում է 39.89 միլիոն ԱՄՆ դոլար, որից 23 միլիոն ԱՄՆ դոլարի ֆինանսավորվումը հանդիսանում է IBRD փոխառություն, 7 միլիոն ԱՄՆ դոլարը՝ ՄԶԸ վարկ, իսկ մնացած գումարը՝ շահառուների և Կառավարության համաֆինանսավորում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Գյուղատնտեսության նախարարության ,Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակը (ԳԾԻԳ) պատասխանատու կլինի ծրագրի ընդհանուր կառավարման,

մասնավորապես՝ գնումների, ֆինանսական կառավարման, զեկուցման, մոնիտորինգի և գնահատման համար: ԳԾԻԳ-ն ունի նմանատիպ ծրագրերի կառավարման զգալի փորձ, այդ թվում՝ ներկայումս իրականացվող ՀԳՌԿՄ ծրագիրը, նախկինում իրականացված ԳՁՓԱԳԶ և Թռչնագրիպի հակազդման ծրագրերը, ինչպես նաև մեկնարկի փուլում գտնվող ,Սննդամթերքի անվտանգության կարողությունների զարգացմանե ԻԶՀ դրամաշնորհային նոր ծրագիրը: Ինչպես և ներկայումս իրականացվող ՀԳՌԿՄ ծրագրի շրջանակներում, անհատ տեխնիկական մասնագետները պատասխանատու կլինեն առանձին բաղադրիչների իրականացման համար:

ՀԳՌԿՄ 2 ծրագրի բնապահպանական և սոցիակալան խնդիրներին (գենդերային հավասարություն և երիտասարդների ներգրավվածություն, բողոքարկման մեխանիզմների իրականացման շուրջ կանխատեսումներ) անդրադառնալու՝ ներառյալ բնապահպանական և սոցիալակն երաշխիքների ապահովման նպատակով ,ԳԾԻԳե-ի կողմից կվարձվի բնապահպանության մասնագետ: Լայնածավալ սոցիալական միջոցառումների իրականացման համար (օրինակ՝ սոցիալական հետազոտություն, հանրային իրազեկման բարձրացում, սոցիալական պատասխանատվության մեխանիզմների մշակու) հնարավոր է սոցիալական ազդեցության մասնագետի/ընկերության լրացուցիչ աջակցության անհրաժեշտություն առաջանա: Այդ դեպքերի համար կվարձի կես դրույքով սոցիալական ազդեցության մասնագետ/ընկերություն, որը կաջակցի ծրագրի իրականացման ընթացքում առաջացած սոցիալական խնդիրների կտրվածքով: Ըստ անհրաժեշտության, կես դրույքով կվարձվի վերաբնակեցման հարցերով մասնագետ, ով կմշակի վերաբնակեցման գործողությունների պլաններ, կհետևի դրանց իրականացմանը և կզեկուցի արդյունքների մասին:

4. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

4.1 Ակնարկ կիրառելի պետական օրենսդրության մասին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (ՀՀ) ապահովում է մարդկային առողջության և բնական միջավայրի վրա տնտեսական գործունեության բացասական հետևանքների նվազեցման հիմունքները: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է Պետության պարտավորությունը ապահովելու բնության պաշտպանությունը և վերարտադրությունը, ինչպես նաև բնական ռեսուրսների խելամիտ օգտագործումը: Սեփականության իրավունքը չպետք է իրականացվի այնպես, որ վնաս

հասցվի բնությանը կամ խախտվի այլ անձանց, հանրության և Պետության իրավունքները և օրինական շահերը: Այն յուրաքանչյուր անձի իրավունք է տալիս ապրել իր առողջության և բարեկեցության համար նպաստավոր միջավայրում, ինչպես նաև ամրագրում է անձամբ, կամ այլ անձնաց հետ համատեղ, բնական միջավայրը պաշտպանելու և բարելավելու պարտավորությունը: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է Պետության պարտավորությունը ապահովելու շրջակա միջավայրի անվտանգությունը ներկա և ապագա սերունդների համար:

4.2 Բնապահպանական օրենսդրություն

1991թ.-ից ի վեր ընդունվել են ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտեր ու կանոնակարգեր բնության պաշտպանության ոլորտում:

Ստորև նշվում և հակիրճ նկարագրվում են շրջակա միջավայրի պաշտպանության մասին օրենսդրական ակտերը, որոնք առնչվելու են ՀԳՌԿՄ 2 ծրագրին.

<u>Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին Օրենքը (1995թ.-ի նոյեմբերի 20-ի).</u>

Համաձայն սույն Օրենքի Հոդված 4-ի, այսպիսի փորձաքննության նպատակն է կանխորոշել, կանխել կամ նվազեցնել գաղափարի և պլանավորված գործունեության վնասակար ազդեցությունը մարդու առողջության, շրջակա միջավայրի, ինչպես նաև տնտեսական ու սոցիալական բնականոն զարգացման վրա: Հոդված 4-ը նախատեսում է փորձաքննության ենթակա գործունեությունների ցանկը: Գյուղատնտեսության հետ առնչվող գործունեությունները՝ հետևյալն են.

1. Աղակալած հողերի բարելավում (ավելի քան 100 հա), ոռոգման և չորացման ցանցերի կառուցում, ճահիճների չորացում;
2. Բերրի հողի պահպանում էրոզիայից, աղակալումից և որակի փոփոխությունից;

Վերոնշյալ գործողությունները կարող են ենթակա լինել բնապահպանական փորձաքննության, այն սահմանային մակարդակները գերազանցելու դեպքում, որոնք ներառված են ,Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասինե (N-193, 1999թ.-ի մարտի 30-ի) Կառավարության Որոշմամբ հաստատված ցանկում.

- Կետ 1-ի համար՝ 100 հա-ից ավելի;
- Կետ 2-ի համար՝ աղակալած հողերի բարելավում (քիմիական մեթոդ), առանց չափերի սահմանափակումների:

Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենքը (2006թ.-ի նոյեմբերի 27-ի).

Համաձայն Օրենքի Հոդված 4-ի, Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքները դասակարգվում են ըստ հետևյալ չորս կարգերի. պետական արգելոց, ազգային պարկ, պետական արգելավայր և բնության հուշարձան, իսկ ըստ նշանակության, դրանք դասակարգվում են երեք առանձին տեսակների. միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքներ:

Հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլաններ պետք է մշակվեն յուրաքանչյուր կարգի համար, և պետք է ներառեն մանրամասն տեղեկատվություն պահպանվող տարածքների, գոտիավորման, կենսաբանական պաշարների տեղաբաշխման, հողօգտագործման և այլ թեմատիկ քարտեզների ու հատակագծերի վերաբերյալ, ինչպես նաև տեղեկատվություն օգտագործողների և շահառուների վերաբերյալ:

ՀՀ Հողային Օրենսգիրք (2000թ.-ի մայիսի 2-ի).

Հողային Օրենսգիրքը սահմանում է պետական հողերի կառավարման հիմնական ուղղությունները, ներառյալ՝ տարբեր նպատակների, ինչպես օրինակ գյուղատնտեսական նշանակության, բնակավայրերի, արդյունաբերության և ընդերքօգտագործման, էներգետիկայի, կապի և հաղորդակցության գծերի, տրանսպորտի և այլ նպատակների համար հատկացված հողերը: Օրենսգիրքը սահմանում է հատուկ պահպանվող տարածքների հողերը, ինչպես նաև այլ հատուկ նշանակության հողերը: Այն նաև սահմանում է հողի պահպանմանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև պետական մարմինների, տեղական իշխանությունների և քաղաքացիների իրավունքները հողի նկատմամբ:

ՀՀ Ջրային Օրենսգիրք (2002թ.-ի հունիսի 4-ի).

Ջրային Օրենսգրքի հիմնական նպատակն է երկրի ջրային պաշարների պահպանության իրավական հիմքերի ապահովումը, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների

բավարարումը, ինչպես նաև ապագա սերունդների համար ջրային պաշարների պահպանության ապահովումը:
Կարգավորվում է ջրամատակարարումը տարբեր նպատակների համար, ներառյալ՝ ոռոգումը և կենդանիների համար ջրարբիացման իրականացումը:

Կենդանական աշխարհի մասին ՀՀ Օրենք (2000թ.-ի ապրիլի 3-ի).

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Օրենքը սահմանում է կենդանական աշխարհի ուսումնասիրությունը, պետական մոնիտորինգը, պետական հաշվառումը, կենդանական աշխարհի մասին կարմիր գրքի մշակման պահանջները և մոտեցումները, կենդանական աշխարհի օբյեկտները նպատակային օգտագործման համար հատկացնելու պայմանները, յուրահատկությունները և սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարման հիմքերը, կենդանական աշխարհի պահպանման և օգտագործման տնտեսական խրախուսման, ինչպես նաև հսկողության իրականացման վերաբերյալ դրույթները:

Բուսական աշխարհի մասին ՀՀ Օրենք (1999թ.-ի նոյեմբերի 23-ի).

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում: Օրենքը սահմանում է բուսական աշխարհի ուսումնասիրության, պետական մոնիտորինգի, պետական հաշվառման նպատակները, ինչպես նաև բուսական աշխարհի մասին կարմիր գրքի մշակման պահանջները և մոտեցումները, բուսական աշխարհի օբյեկտները նպատակային օգտագործման համար հատկացնելու պայմանները, յուրահատկությունները և սահմանափակումները, օգտագործման իրավունքի դադարման հիմքերը, բուսական աշխարհի պահպանման և օգտագործման տնտեսական խրախուսման, ինչպես նաև հսկողության իրականացման վերաբերյալ դրույթները:

Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ Օրենք (1994թ.-ի հոկտեմբերի 11-ի).

Սույն Օրենքի նպատակն է ապահովել մթնոլորտային օդի մաքրությունը, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցումը և կանխումը, ինչպես նաև այս

բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումը: Օրենքը ամրագրում է շարժական և անշարժ աղբյուրներից մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և մթնոլորտային օդի վրա սահմանային թույլատրելի ֆիզիկական վնասակար ներգործությունների նորմատիվները:

Թափոնների մասին ՀՀ Օրենք (2004թ.-ի նոյեմբերի 24-ի).

Օրենքը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքը ամրագրում է թափոնների գործածությունը, պետական քաղաքականության հիմնական սկզբունքները և ուղղությունները, պետական նորմավորումը, հաշվառումը և վիճակագրական տվյալների ներմուծումը, դրանց պահանջների և մեխանիզմների իրականացումը, թափոնների վերամշակման սկզբունքները, թափոնները պետական մոնիտորինգի ներկայացնելու պահանջները, թափոնների քանակի նվազեցմանը ուղղված գործողությունները, ներառյալ՝ բնության օգտագործման համար վճարները, ինչպես նաև թափոնները օգտագործող իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից մարդու առողջությանը և շրջակա միջավայրին հասցված վնասների փոխհատուցումը և պետական մոնիտորինգի ու իրավախախտումների նկատմամբ կիրառվող պահանջները:

Բնապահպանական և բնօգտագործման մասին ՀՀ Օրենք (1998թ.-ի դեկտեմբերի 28-ի).

Օրենքը կարգավորում է **բնապահպանական և բնօգտագործման տարբեր տեսակի վճարները** (այսուհետ՝ վճարներ), վճարների մշակման կարգը, օրենքի խախտման համար պատասխանատվությունը և վճարների հետ կապված այլ հարաբերությունները:

Բնապահպանական դրույքաչափերի մասին ՀՀ Օրենք (2006թ.-ի դեկտեմբերի 12-ի).

Սույն Օրենքը սահմանում է բնապահպանական վճարների (այսուհետ՝ վճար) դրույքաչափերն ու դրանց հաշվարկման կարգը: Օրենքը սահմանում է ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող մարդատար և բեռնատար ավտոմեքենաներից վնասակար նյութերն օդային ավազան

արտանետման համար վճարների դրույքաչափերը: Ավելի բարձր դրույքաչափեր են սահմանվում Երևանի և հատուկ պաշտպանվող տարածքների համար: Օրենքը սահմանում է ջրային ավազաններ վնասակար նյութերի և դրանց միացությունների արտանետման համար վճարների դրույքաչափերը:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ Օրենք (2005թ.-ի ապրիլի 11-ի)

Սույն Օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնապահպանական օրենսդրության իրականացման հանդեպ հսկողության կազմակերպման և իրականացման ապահովման հարցերը, ինչպես նաև սահմանում է հսկողության յուրահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների և հարաբերությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական հսկողության հիմքում ընկած իրավական և տնտեսական հիմունքները:

4.3 Գյուղատնտեսական օրենսդրություն

Անասնաբուժության մասին ՀՀ Օրենք (2005թ.-ի հոկտեմբերի 24-ի).

Սույն Օրենքը կարգավորում է անասնաբուժության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի և Հայաստանի Հանրապետությունում գործող ֆիզիկական և իրավաբանական անձանց հարաբերություններն անասնաբուժության բնագավառում: Օրենքի Հոդված 8-ը նախատեսում է կենդանիների անվտանգության ապահովումը վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններից ՝ կանխարգելիչ և հակատեղաճարակային, պարտադիր ախտորոշման և հիգիենիկ միջոցառումների միջոցով: Հոդված 11-ը սահմանում է անասնաբուժական պետական վերահսկողությունը կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի և լրացակերերի, անասնաբուժական դեղամիջոցների արտադրության, պահպանման, տեղափոխման, իրացման և վերամշակման բոլոր փուլերում:

Գյուղատնտեսական հողերի ամելիորացիայի մասին ՀՀ Օրենքը (2005թ.-ի մայիսի 20-ի)

Սույն Օրենքը կարգավորում է հողերի բերրիության պահպանության և բարձրացման, հողատարումից և աղակալումից պաշտպանման, գյուղատնտեսական շրջանառության մեջ սակավ բերրի հողերի ընդգրկման նպատակով գյուղատնտեսական հողերի մելիորացիայի հետ կապված հարաբերությունները:

Բուսասանիտարիայի մասին ՀՀ Օրենքը (2006թ.-ի նոյեմբերի 27-ի).

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմնի (ՀՀ Գյուղատնտեսության նախարարության) և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունները բուսասանիտարիայի բնագավառում: Օրենքը նախատեսում է բույսերի պաշտպանության միջոցառումներին, թունաքիմիկատներին և պարարտանյութերին, մասնավորապես, դրանց ներմուծմանը և փոխադրմանը, օգտագործմանը, հողի և բույսերի արտադրության մեջ նստվածքների առավելագույն թույլատրելի քանակին առնչվող հարցեր: Օրենքով սահմանվում է նաև գյուղատնտեսական գործունեության մեջ ներգրավված Ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտավորությունները բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի օգտագործման, ինչպես նաև հողի մշակման դեպքերում:

Անասնակերի մասին ՀՀ Օրենքը (2008թ.-ի հունվարի 9-ի).

Սույն օրենքը կարգավորում է անասնակերի, ինչպես նաև կերային հավելումների ներմուծման և արտահանման, արտադրության, պահման, պահեստավորման, փոխադրման, օգտագործման, իրացման, մակնշման և փաթեթավորման հետ կապված հարաբերությունները: Բացի այդ, սույն Օրենքը նախատեսում է սիլոսային կերերի արտադրության, փոխադրման և պահպանման պահանջները:

Օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ Օրենքը (2008թ.-ի ապրիլի 8-ի)

Օրենքը կարգավորում է օրգանական գյուղատնտեսական մթերքի և հումքի արտադրության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները:

Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ Օրենքը (2006թ.-ի նոյեմբերի 27-ի)

Օրենքը կարգավորում է սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, արտադրության, մշակման, վերամշակման, փաթեթավորման, մակնշման, փոխադրման, պահման, իրացման, ինչպես նաև առևտրի և հանրային սննդի ոլորտում ծառայությունների մատուցման փուլերում անվտանգության հետ առնչվող հարաբերությունները:

4.4 Սոցիալական օրենսդրություն

Օրենք ,Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների մասինե (մայիս 20, 2013)

Սույն օրենքի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից:

4.5 Շրջակա միջավայրի որակի պահպանության կանոնակարգման հիմունքները

Շրջակա միջավայրի և մարդկային առողջության պաշտպանության երաշխիքներին աջակցում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների թույլատրելի չափերի հիմնավորված շեմերի սահմանումը, որոնք ապահովում են մարդկային առողջությունը և էկոհամակարգերի կայունությունը: Առավելագույն թույլատրելի մակարդակները հաստատվում են ՀՀ Կառավարության կողմից՝ Բնապահպանության և Առողջապահության նախարարությունների ներկայացմամբ: Առավելագույն թույլատրելի մակարդակները ներառված են տեխնիկական բնույթի նորմատիվ փաստաթղթերում և կազմում են երկրի օրենսդրության մասը: Դրանք հետևյալն են.

- *Օդում, ջրում և հողում աղտոտող նյութերի առավելագույն թույլատրելի քանակները;*
- *Արտանետումների և արտահոսքերի մեջ վտանգավոր նյութերի թույլատրելի քանակները;*
- *Աղմուկի, թրթռման, էլեկտրոմագնիսականության, ռադիոակտիվ ճառագայթման, և որոշ այլ ֆիզիկական ազդեցությունների թույլատրելի մակարդակները;*
- *Սննդամթերքի մեջ քիմիական նյութերի նստվածքների թույլատրելի մակարդակները;*
- *Կիրառվող ագրոքիմիկատներում ակտիվ բաղադրամասերի թույլատրելի մակարդակները;*

- *Սանիտարական անվտանգության գոտիների և քաղաքային պլանավորման կանոնների նվազագույն մակարդակները;*
- *Բնակչության և դրա առանձին խմբերի համար առողջապահական ցուցանիշները:*

Համաձայն ՀՀ Օրենսդրության բնապահպանական պահանջներին, արգելվում է մշակել և իրականացնել ծրագրեր, որոնք կարող են առաջացնել փոփոխություններ շրջակա միջավայրի շրջապատող որակում, ինչպես նաև խափանել բնական հավասարակշռությունը: Գյուղտեխնիկայի շահագործման և սպասարկման, ագրոքիմիկատների օգտագործման, տնտեսությունում կենդանիների պահման և վերամշակման տեխնոլոգիաների օգտագործման ընթացքում, յուրաքանչյուր ֆերմեր պարտավոր է ապահովել համապատասխանությունը սահմանված չափանիշներին և նորմերին՝ կանխարգելիչ և մեղմացնող միջոցառումների պլանավորման և իրականացման միջոցով:

4.6 Համաշխարհային Բանկի անվտանգության քաղաքականություններ

Բնապահպանական և սոցիալական պաշտպանության մասով Համաշխարհային Բանկի պարտականությունները արտացոլվում են իր իսկ մշակած տաս անվտանգության քաղաքականությունների մեջ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Բանկի կողմից աջակցվող յուրաքանչյուր ծրագիր գնահատվում է առ այն, թե անվտանգության ներքոհիշյալ միջոցառումներից որ մեկն է մեկնարկի և իրականացման համար պատրաստ: ՀԳՌԿՄ երկրորդ ծրագիրը հետամուտ է OP/BP 4.01 բնապահպանական գնահատման, OP4.09 վնասատուների դեմ պայքարի և OP/BP 4.12 ոչ հարկադիր վերաբնակեցման ծրագրերի իրականացմանը:

Աղյուսակ 1 – Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականություններ

Քաղաքականություն	Հիմնական պահանջների ամփոփ նկարագիր
OP/BP 4.01 Բնապահպանական գնահատում	Կատարել պոտենցիալ ազդեցությունների նախնական գնահատում և ընտրել հնարավոր բացասական ազդեցությունների գնահատման, նվազեցման և մեղմացման համապատասխան միջոցառումներ:

OP/BP 4.04 Բնական միջավայր	Չֆինանսավորել այն ծրագրերը, որոնք վատթարացնում կամ փոխակերպում են խոցելի բնական միջավայրը: Աջակցություն տրամադրել ոչ խոցելի բնական միջավայրին առնչվող ծրագրերին այն բոլոր դեպքերում, երբ չկան հասանելի այլընտրանքային միջոցներ և/կամ թույլատրելի այլընտրանքային մեղմացուցիչ միջոցառումներ:
OP 4.09 Վնասատուների դեմ Պայքար	Աջակցել վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի մեթոդներին: Որոշել թունաքիմիկատների խմբաքանակը, որոնց օգտագործումը կարող է ֆինանսավորվել ծրագրի շրջանակներում, ինչպես նաև՝ մշակել վնասատուների դեմ պայքարի համապատասխան պլան ուղղված ռիսկերի մեղմացմանը:
OP/BP 4.10 Ազգաբնակչություն	Գնահատումը պետք է նպատակաուղղված լինի ծրագրով նախանշնված տարածքներում ազգաբնակչության թվաքանակի որոշմանը: Քաղաքականության պահանջները որոշում են՝ արդյոք պոտենցիալ ազդեցությունները դրական են, թե՞ բացասական: Կազմել մեղմացուցիչ միջոցառումների և ակնկալվող օգուտների ցուցակ, որոնք կարտացոլեն նաև ազգաբնակչության մշակութային նախասիրությունները:
OP/BP 4.11 Ֆիզիկական և մշակութային ռեսուրսներ	Լրացուցիչ հետազոտել հաշվառման ենթակա մշակութային այն ռեսուրսները, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության: Ներառել մեղմացուցիչ միջոցառումներ այն բոլոր դեպքերում, երբ կենսաֆիզիկական և մշակութային ռեսուրսները կարող են ենթարկվել կողմնակի բացասական ազդեցության:
OP/BP 4.12 Չծրագրված տեղաբնակեցում	Աջակցություն ցուցաբերել նոր տեղաբնակեցված մարդկանց, որոնք սեփական միջոցներով փորձում են բարելավել կամ գոնե վերականգնել իրենց կենսապայմանները: Առավելագույնս խուսափել ոչ ցանկալի տեղաբնակեցումներից կամ փորձել նվազագույնի հասցնել առկա ցուցանիշները: Նոր տեղաբնակեցված մարդիկ պետք է իրենց մասնաբաժինն ունենան ծրագրի օգուտներից:

OP/BP 4.36 Անտառային ռեսուրսներ	Աջակցություն տրամադրել անտառային տնտեսության կայուն զարգացմանն ու պահպանմանը: Չֆինանսավորել և ոչ մի ծրագիր, որը կարող է ենթադրել խոցելի անտառային տարածքների փոխակերպում և վատթարացում:
OP/BP 4.37 Պատվարների անվտանգ կառուցում	Խոշոր պատվարների դեպքում տեխնիկական վերանայումը և անվտանգության պարբերաբար իրականացվող ստուգումները պետք է անցկացվեն պատվարների անվտանգ կառուցման համար պատասխանատու անկախ մասնագետների կողմից:
OP/BP 7.50 Ջրուղիների միջազգային ծրագրեր	Պարզել, թե արդյո՞ք ափամերձ տարածքների համար կան նախատեսված այլ՝ փոխարինող համաձայնագրեր և ապահովել, որ այս շրջանները լավագույնս իրազեկ լինեն այդ համաձայնագրերի մասին, ինչպես նաև չառարկեն ծրագրի կողմից միջամտություններին:
OP/BP 7.60 Վիճարկելի տարածքների ծրագրեր	Ապահովել վիճարկելի տարածքների հայցվորների համաձայնությունը առաջարկվող ծրագրին:

ՀՀ բնապահպանական օրենսդրության պահանջները, որքանով որ դրանք վերաբերում են ՀԳՌԿՄ ծրագրի իրականացման գործընթացներին, հիմնականում համահունչ են ՀԲ քաղաքականության մոտեցումներին: Այնուամենայնիվ, կան նաև մի քանի տարբերություններ պետական օրենսդրությա և ՀԲ քաղաքականության պահանջների միջև, որոնցից առավել մեծ նշանակություն ունեցողները ներկայացված են ստորև: Համաձյան Հայաստանում ընդունված ԲԱԳ տերմինաբանության ,բնապահպանական գնահատումը դիտվում է որպես ուսումնասիրության գործընթաց, որն իրականացվում է ՀՀ Բնապահպանության նախարարության բնապահպանական փորձաքննության կողմից՝ համաձայն ծրագրի պրոպոնենտի հայցադիմումի՝ առաջարկվող միջոցառումների համար փորձաքննական հաստատում ստանալու նպատակով, մինչդեռ ՀԲ OP/BP 4.01 կողմից այդ տերմինն օգտագործվում է նկարագրելու համար բնապահպանական ազդեցության ուսումնասիրությունը, որն իրականացվում է ծրագրի պրոպոնենտի կողմից: ԲԱԳ հայկական օրենսդրությամբ չի պահանջվում դասակարգել գործողություններն ըստ Ա, Բ և Գ բնապահպանական կատեգորիաների, ինչպես դա սահմանված է համաձայն OP/BP 4.01,

չնայած այն դասակարգում է մտցնում ԲԱԳ պահանջող և այդ պահանջին չենթարկվող միջոցառումների միջև: Պետական օրենսդրությամբ չի սահմանվում և չի նախատեսվում ԲԿՊ, սակայն այն պահանջում է, որ ԲԱԳ փաստաթղթում ներկայացված լինի բնապահպանական ազդեցությունների մեղմացման միջոցառումների ցանկը և սահմանված լինեն դրանց իրականացման գործընթացները: ԲԱԳ փաստաթղթերի հանրային իրազեկման տեսանկյունից պետական օրենսդրությունն հիմնականում համընկնում է ՀԲ պահանջների հետ, սակայն չի ենթադրում առնվազն երկու հանրային լսումների իրականացման պահանջ Ա կատեգորիայի ծրագրերի համար, ինչը առկա է ՀԲ Գործառնությունների քաղաքականության մեջ: Այդուհանդերձ, ՀՀ Օրհուսի կոնվենցիայի կողմ է հանդիսանում, հետևաբար հանրային լսումներն իրականացվում են համաձայն Օրհուսի կոնվենցիայի ուղեցույցների: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ՀԲԱԳ շրջանակներում իրականացման ենթակա գործողությունները ենթակա չեն ԲԱ գնահատման, հետևաբար վերոհիշյալ տարբերությունները չեն կարող ազդեցություն ունենալ ծրագրի իրականացման վրա: Վերաբնակեցման խնդիրների հետ առնչվող Հայաստանի օրենսդրության և ՀԲ քաղաքականությունների վերլուծությունը ներկայացված է ,Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթումե:

4.7 Բնապահպանական ուսումնասիրություն և դասակարգում

Առաջարկվող յուրաքանչյուր ծրագրի համար Համաշխարհային Բանկն իրականացնում է բնապահպանական ուսումնասիրություն և որոշում անհրաժեշտ ԲԳ մասշտաբը և տեսակը: Բանկը դասակարգում է ծրագիրը և որոշում, թե երեք կատեգորիաներից որին է այն համապատասխանում՝ հաշվի առնելով ծրագրի տեսակը, իրականացման վայրը, խոցելիության աստիճանը և մասշտաբը, ինչպես նաև հնարավոր բնապահպանական ազդեցության բնույթը և ծավալը: Ա կատեգորիայի ծրագրերը պահանջում են բնապահպանական ազդեցության լայնամասշտաբ և բազմակողմանի գնահատում (ԲԱԳ), այդ թվում բնապահպանական կառավարման պլան (ԲԿՊ): Բ կատեգորիայի ծրագրերը պահանջում են առավել սահմանափակ բնապահպանական գնահատում, իսկ որոշ դեպքերում միայն ԲԿՊ կազմում: Գ կատեգորիայի ծրագրերը բնապահպանական գնահատում կամ բնապահպանական մեղմացուցիչ միջոցառումներ չեն պահանջում, միայն պետք է (որոշ դեպքերում) համապատասխանեն շինարարական պատշաճ գործունեության կամ գործառնական հիմնական մեթոդների պահանջներին: Չորրորդ՝ ՖՀ (ֆինանսավարկային հաստատություն) կատեգորիան հիմնականում առնչվում է այն ծրագրերին, որոնք ներառում են բանկային միջոցների

ներդրում ֆինանսավարկային հաստատությունների միջոցով իրականացնելու ենթածրագրեր, որոնք կարող են հանգեցնել ոչ բարենպաստ բնապահպանական ազդեցությունների:

ՀԳՌԿՄ II ծրագիրը դասակարգվել է որպես բնապահպանական Բ կատեգորիա: Բոլոր ենթածրագրերը, այդ թվում դրամաշնորհային միջոցներով ֆինանսավորվող նախագծերը անհրաժեշտ է ուսումնասիրել և հավաստիանալ, որ չեն պատկանում Ա կատեգորիային և որոշել բնապահպանական գնահատման և/կամ պահանջվող ԲԿՊ (եթե կա այդպիսին) տեսակը: Ա կատեգորիային պատկանող ոչ մի նախագիծ չի կարող ֆինանսավորվել ՀԳՌԿՄ II ծրագրի միջոցներից: Բնապահպանական գնահատումը և/կամ ԲԿՊ-ը ԳԾԻԳ-ին անհրաժեշտ տեղեկատվություն կտրամադրի ապահովելու համար, որ յուրաքանչյուր ենթածրագիր համապատասխանում է ազգային և տեղական համապատասխան մարմինների բնապահպանական պահանջներին, ինչպես նաև համահունչ է Համաշխարհային Բանկի բնապահպանական երաշխիքներին:

4.8 ՀԳՌԿՄ II Ծրագրի շրջանակներում բնապահպանական կառավարման ինստիտուցիոնալ պարտականություններ

ՀՀ Գյուղատնտեսական նախարարությունը հանդիսանում է ՀԳՌԿՄ II Ծրագիրն իրականացնող կառույցը, իսկ ՀՀ ԳՆ-ի ներքո գործող ԳԾԻԳ-ը իրականացնում է Ծրագրի ամենօրյա գործունեությունը, այդ թվում նաև բնապահպանական գործունեությունը: ԾԻԳ-ի կարողությունների շրջանակը պետք է ներառի նաև իր ամենօրյա գործողությունների բնապահպանական և սոցիալական մանրազնին ստուգումների իրականացումը և նույնիսկ կարող է անհրաժեշտության դեպքում ընդգրկել Բնապահպանության և/սոցիալական գծով խորհրդատու(ներ): ԾԻԳ-ը պատասխանատու կլինի Ծրագրի 1, 2 և 3 Բաղադրիչների ներքո առաջարկված բոլոր գործողությունների, ինչպես նաև ծրագրի 1 և 2 բաղադրիչների շրջանակներում ներկայացված դրամաշնորների դիմում-հայտերի գնահատման համար՝ սահմանելով բնապահպանական աշխատանքների շրջանակը, ինչպես նաև դրանց համար անհրաժեշտ բնապահպանական փաստաթղթերի տեսակներն ու ձևաչափերը: Այս փուլում ԳԾԻԳ-ը ցուցակից կհանի այն գործունեությունները, որը իրավասու չեն ֆինանսավորվել ծրագրի միջոցներից (գործունեությունը չի համապատասխանում ծրագրի նպատակների հետ, խախտում է պետական Օրենսդրությունը կամ դասվում է Ա կատեգորիայի ներքո): ԾԻԳ-ը պետք է ապահովի, որ իրականացվի ԲԱԳ ավելի մեծ ռիսկեր պարունակող ենթածրագրերի դեպքում, իսկ փոքրածավալ

շինարարական աշխատանքների համար մշակվել է Բնապահպանական կառավարման Ստուգիչ-ցանկ (կցված է այս ԲՍԿՇ-ին) և ԾԻԳ-ը պետք է ապահովի, որ ԲԱԳ հաշվետվությունների և ԲԿՊ-ների որակը լինի բավարար: ԳԾԻԳ-ը նաև պետք է դասակարգի դրամաշնորհային դիմում-հայտերը՝ ըստ բնապահպանական կատեգորիաների և սահմանի տվյալ տարածքին բնորոշ ԲԿՊ-ների և Վնասատուների դեմ Պայքարի Պլանների մշակման անհրաժեշտությունը (ՎՊՊ): ՀԳՌԿՄ II Ծրագրի իրականացման ժամանակ ԳԾԻԳ-ի հիմնական գործառույթն է հանդիսանում տեղում իրականացնել Ծրագրի բոլոր բաղադրիչների շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների բնապահպանական մոնիտորիգ և կազմել հաշվետվություն մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ:

Ծրագրի 1, 2 և 3 բաղադրիչների ներքո շահառու համայնքները և հաստատությունները, ինչպես նաև Ծրագրի 1 և 2 բաղադրիչի շրջանակներում դրամաշնորհ ստացողները պետք է մշակեն տարածքին բնորոշ ԲԿՊ-ներ և ՎՊՊ-ներ՝ համաձայն ԾԻԳ-ի կողմից սահմանված ներկայիս ԲՍԿՇ-ի և կից ներկայացված ձևանմուշների: ԳԾԻԳ-ի Բնապահպանության գծով մասնագետը կտրամադրի լիարժեք մեթոդաբանական ուղղորդում և աջակցություն: Ծրագրի 1, 2 և 3 բաղադրիչների ներքո շինարարական աշխատանքների կապալառուները և դրամաշնորհ ստացողները պարտավոր են հետևել վերոհիշյալ պլանների կատարմանը և նպաստել ԾԻԳ-ի և իրենց գործունեությունը վերահսկելու իրավասություն ստանձնած այլ պետական անձանց կողմից պլանների իրականացման հսկողությանը:

ՀԳՌԿՄԾ II շրջանակներում գործունեությունների վերահսկողություն կարող են իրականացնել ՀՀ գյուղատնտեսության, առողջապահության և բնապահպանության նախարարությունների պետական տեսչությունները: Պետական մարմինները լիազորված են իրականացնելու վերահսկողություն յուրաքանչյուրն իր իրավասությունների սահմաններում՝ առաջնորդվելով հաստատված տարեկան պլաններով:

Եթե ծրագրի շրջանակներում որևէ գործունեություն պահանջում է էկո-փորձաքննություն և ստանում է դրական եզրակացություն, ապա բնապահպանական վերահսկողության ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության պետական տեսչության համապատասխան տարածքային կառույցը ստուգում է փորձաքննական պահանջների և ՀՀ օրենսդրության բնապահպանական պահանջների կատարումը:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ բնապահպանության պետական տեսչությունը կազմում է արձանագրություններ: Եթե պարզվում է, որ ընթացիկ գործունեությունը պարունակում է ռիսկեր, որոնք խախտում են թույլտվության պայմանները կամ ցանկացած նորմեր և կանոնակարգեր, ապա տեսուչը պարտավոր է գրավոր հանձնարարականներ տալ ուղղիչ գործողությունների վերաբերյալ՝ հստակ ժամկետներով: Եթե արդեն կատարվել են բնապահպանական խախտումներ, տեսուչը արձանագրում է դեպքը (նկարագրելով խախտման տեսակը բոլոր տեխնիկական մանարամասներով), և հաշվարկում է հասցրած վնասի հատուցման գումարը, որպեսզի այն ներկայացվի իրավապահ մարմիններին:

5 Բաղադրիչ 1 - ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

5.1 Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտություններ և դրանց հավանական ազդեցությունները

Բաղադրիչ 1-ի նպատակն է շարունակել իրականացնել համայնքի կողմից կառավարվող արոտավայրերի/անասնակերի վրա հիմնված անասնաբուծական արդյունավետ և կայուն համակարգը ընտրված համայնքներում, որտեղ անասնապահությունը ապրուստի հիմնական միջոցն է, և որտեղ համայնքները լիովին շահագրգռված են բարելավելու իրենց արոտավայրերի կառավարումը:

Շահառու համայքները կընտրվեն զգալի արոտավայրային տարածքներ ունեցող ութ մարզերից: Այս նպատակին կարելի է հասնել քայքայիչ արածեցման կանխմամբ՝ ավելի արդյունավետ օգտագործելով արոտավայրերը, բարելավելով անասնակերի արտադրությունը և կենդանիների կերակրման համակարգերը, ինչպես նաև ավելի արդյունավետ դարձնելով անասնաբուծությունը:

ՀԳՌԿՄ ընթացիկ ծրագիրը ապահովում է այս բաղադրիչի հաջող իրականացման հիմքը ՀԳՌԿՄ II ծրագրում: Բաղադրիչի հաջողությունը, պայմանավորված ընթացիկ իրականացումով, ինչպես նաև տեղական համայնքների շահագրգռվածությունը հիմք են հանդիսացել, որպեսզի Կառավարությունը դիմի Համաշխարհային Բանկին այս բաղադրիչը ՀԳՌԿՄ II ծրագրի շրջանակում շարունակելու համար: Ուստի, ՀԳՌԿՄ II ծրագրի շրջանակում Բաղադրիչ 1-ի հիմնական կառուցվածքում և իրականացման աշխատանքներում փոփոխություն չեն լինի:

ՀԳՌԿՄ II ծրագրի արոտավայրերի և անասնապահության կառավարում բաղադրիչի հիմնական աշխատանքների նպատակն է արոտավայրերի կառավարման բարելավումը ավելի լավ ենթակառուցվածքի և հուսալի կառավարման միջոցով:

Բաղադրիչի շրջանակում կֆինանսավորվեն երեք հիմնական գործունեություն՝

ա) <u>Արոտավայրերի/անասնապահության կառավարման պլանների կազմում (3.67 մլն. ԱՄՆ դոլար):</u>
Համայնքի բոլոր արոտօգտագործողների ներգրավվմամբ կստեղծվեն Արոտօգտագործողների միություններ(ԱՄ) զգալի արոտավայրային տարածքներ ունեցող (ընդհանուր 10 մարզից) ութ մարզերի մինչև 100 համայնքներում: ԱՄ-ները պարտավոր են կազմել և իրականացնել Արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ (ԱԿԱԶՊ). գործընթացին կմասնակցեն նաև Մարզային աջակցության թիմերը (ՄԱԹ) և ԳԾԻԳ-ի տեխնիկական փորձագետները: ԱԿԱԶՊ-ներում պետք է սահմանվեն՝ (ա) արոտավայրերի արտադրողականությունը բարելավելու միջոցներ, ինչպես օրինակ՝ հերթափոխային արածեցում, վերարտադրողական նպատակով արոտավայրերի պահպանում, արոտավայրերի վերականգնում, հեռագնա արոտավայրերի հասանելիության բարելավում, ինչպես նաև լրացուցիչ կերարտադրության համար կարիքների բավարարումը, (բ) խմոցների տեղադրումը առավել հավասարակշռված արածեցման համար, (գ) կենդանիների առողջության ոլորտին ներկայացվող պահանջները և տոհմային աշխատանքների բարելավման միջոցառումները (դ) գյուղ. տեխնիկա խոտի և կերարտադրության համար, (ե) անասնապահական արտադրանքի իրացվելիությունը բարելավելու միջոցառումներ, (զ) ուսումնական դասընթացների կազմակերպման անհրաժեշտություն, և (զ) պլանային միջոցառումների, նպատակների և ցուցանիշների ապահովման համար պարտավորությունները: Պլանների իրականացմանը նաև կաջակցի համայնքային անասնաբույժների մոբիլիզացման գործընթացը:

բ) <u>Պլանների իրականացման համայնքային ֆոնդ (24.00 մլն. ԱՄՆ դոլար):</u> Յուրաքանչյուր ԱԿ-ին կտրամադրվի դրամաշնորհ իր ԱԿԱԶ պլանի իրականացման նպատակով: Դրամաշնորհի միջին գումարը յուրաքանչյուր համայնքի համար կկազմի 200,000 ԱՄՆ դոլար և չի գերազանցի 300,000 ԱՄՆ դոլարը: Դրամաշնորհային միջոցները նախատեսված են հետևյալ աշխատանքների համար՝ (ա) հեռագնա արոտների հասանելիության ապահովման և

օգտագործման համար ենթակառուցվածք, օրինակ՝ ճանապարհների տեղային բարելավում, խմոցներ, փարախներ և կացարաններ, (բ) կաթի հավաքման կետեր և սառեցման սարքավորումներ, (գ) կերի արտադրության և հավաքման գյուղ.տեխնիկա, (դ) դեգրադացված տարածքների վերականգնման միջոցառումներին ուղղված ծախսեր (ցանկապատում, մոլախոտերի և թփուտների դեմ պայքար, վերացանք և այլն), (ե) կերարտադրություն, (զ) համայնքային մակարդակով հիվանդությունների վերահսկման ծրագրեր, այդ թվում՝ շուկան սահմանափակող հիվանդություններ, զոոնոզ և մակաբուծային հիվանդությունների դեմ պայքար, (է) արհեստական սերմնավորում, (ը) ուսուցում և խորհրդատվական ծառայություններ և (թ) ԱՄ-ներին ուղղված աջակցություն, ինչպես օրինակ՝ կառավարման հարցերով ուսուցում, գրասենյակային սարքավորումներ և կահույք:

գ) <u>Կանանց/երիտասարդների աջակցության հատուկ ծրագիր (0.42 մլն. ԱՄՆ դոլար):</u>

Ուսուցման և մոբիլիզացման հատուկ նախագծում կներգրավվեն կանայք և գյուղաբնակ երիտասարդները, որի նպատակն է ընդլայնել նրանց մասնակցությունը ԱՄ-ների աշխատանքներում և համայնքին վերաբերող որոշումների կայացման գործընթացներին անասնապահության և արոտավայրերի կառավարման հարցերում, ինչպես նաև խրախուսել երիտասարդների ներգրավվածությունը անասնաբուծության ոլորտում: Արժեքային շղթայի զարգացման՝ Բաղադրիչ 2-ի շրջանակում ուսուցում կանցկացվի շահագրգռված կանանց և երիտասարդների համար սննդի ոլորտում բիզնես գործունեություն ծավալելու վերաբերյալ, ինչպես նաև օժանդակություն կցուցաբերվի կին կամ երիտասարդ տնտեսվարողներին այս բաղադրիչի շրջանակում դրամաշնորհային ենթածրագրին դիմելու հարցում:

Ժամանակի ընթացքում ակնկալվում է, որ այս բաղադրիչի իրականացումը բնապահպանական դրական ազդեցություն կունենա, թեև շինարարական աշխատանքներում նախատեսվում են մի քանի փոքր և միջին մասշտաբի ենթակառուցվածքային նախագծեր: Շինարարական աշխատանքների ժամանակ հնարավոր են կարճաժամկետ բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա:

Ծրագրի այս ենթաբաղադրիչի իրականացման արդյունքում, հնարավոր են հետևյալ սոցիալական ազդեցությունները՝

- Անձնական դիքորոշում գենդերային հարցերի շուրջ, որը կարող է սահմանափակել կանանց ակտիվ մասնակցությունը և նրանց ձայնի իրավունքի սահմանափակման,
- Անձնական դիքորոշում, որը կարող է սահմանափակել երիտասարդների ակտիվ մասնակցության և նրանց ձայնի իրավունքի սահմանափակման,
- Կանանց և երիտասարդների կողմից կառավարվող ֆերմերային տնտեսությունների կարողությունը կարող է անբավարար լինեն Ծրագրին մասնակցելու համար,
- Ծրագրի շահառուները հնարավոր է, որ չտիրապետեն բողոքների ներկայացման մեխանիզմներին,

Այս ենթաբաղադրիչի շրջանակում հնարավոր են հետևյալ սոցիալական ազդեցությունները՝

- Կողմնակալություն գենդերային հարցերում, որի արդյունքում հաշվի չի առնվում կանանց կարծիքը կամ կանխվում է նրանց ակտիվ մասնակցությունը ԱՄ-ներում,
- Կողմնակալություն, որի արդյունքում հաշվի չի առնվում երիտասարդների կարծիքը կամ կանխվում է նրանց ակտիվ մասնակցությունը ԱՄ-ներում,
- ԱՄ-ների աշխատանքները համակարգվում են հարուստ և ազդեցիկ ֆերմերների կողմից, իսկ աղքատ ֆերմերները ներգրավված չեն այդ աշխատանքներում
- Համայնքների կողմից համաֆինանսավորման պահանջը խոչընդոտում է սակավ ռեսուրսներ ունեցող համայքների մասնակցությունը Ծրագրում
- Շահառուները ծրագրի շրջանակում իրականացվող աշխատանքների վերաբերյալ իրենց բողոքները հայտնելու միջոցներ չունեն

Փոքր և միջին մասշտաբի ենթակառուցվածքային ենթածրագրերի ցանկը տրված է ստորև, ինչպես նաև նշված են յուրաքանչյուր ծրագրի դեպքում ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները:

1. Մուտքային ճանապարհների, նախրապանների կացարանների, կենդանիների գոմերի, կերերի մթերման պահեստների շինարարություն՝
    - հողի բերրի շերտի կորուստ և օդի աղտոտում՝ հողային աշխատանքները սխալ կազմակերպելու պատճառով;
    - շինարարական աղբի կուտակում և շրջակա միջավայրի աղտոտում, շինարարների անփույթ աշխատանքների պատճառով;

- բուսական ծածկույթի քայքայում, լանջերի անկայունություն և էրոզիա, ինչպես նաև լանդշաֆտների դեգրադացիա շինարարական աշխատանքները սխալ կազմակերպելու պատճառով: Այս ազդեցությունները հիմնականում կապված են բետոնախառնիչ հանգույցի տեղադրման, շինարարական նյութերի պահեստների և աղբի կուտակման վայրերի կազմակերպման հետ,
- հողի և ջրի աղտոտում: Շինարարական հրապարակում շինարարական նյութերի, շինաղբի և փորված նյութերի ոչ ճիշտ պահպանումը, ինչպես նաև շինարարության ընթացքում վառելիքի, և նավթամթերքների և այլ նյութերի արտահոսքը կարող է առաջացնել հողի և ջրի աղտոտում: Անհրաժեշտ է նախատեսվող շինարարական աշխատանքները իրականացնել ջրային օբյեկտներից հեռու,
- օդը կարող է աղտոտվել փոշու միջոցով շինարարական աշխատանքների իրականացմամբ պայմանավորված և ներառում է բեռնման ու բեռնաթափման, ծանր մեքենա-մեխանիզմների աշխատանքի իրականացման ժամանակ փոշու առաջացումը, շինարարական աշխատանքների ժամանակ տրանսպորտային միջոցների և մեքենաների շահագործման ընթացքում դիզելային վառելիքի այրումից առաջացած վտանգավոր նյութերի արտանետումը, զոդման, բետոնախառնիչ հանգույցի, ասֆալտափռիչ սարքի շահագործման, ինչպես նաև փխրուն շինարարական նյութերի ոչ ճիշտ պահեստավորման և փխրուն շինարարական աղբի ոչ ժամանակին հեռացման ընթացքում առաջացած արտանետումները:
- Անորակ շինարարական նյութերի օգտագործում, օր.՝ ասբեստի առկայություն շինանյութերի բաղադրության մեջ, որը երկարաժամկետ ընթացքում կհանգեցնի շնչառական հիվանդությունների առաջացմանը:

- Շահառու համայնքի բնակչությանը ժամանակավոր անհանգստության պատճառում՝
  - ✓ Բնակելի տարածքներում գիշերային աշխատանքները չեն թույլատրվի՝ կանխելով աղմուկը: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքային բնականոն ժամերին, այլ պարագայում պետք է տեղադրել խլացուցիչներ, համաձայն հաստատված ընթացակարգի:
  - ✓ Շինհրապարակները պետք է լինեն, ինչպես հարկն է, սահմանազատված և ցանկապատված. պետք է տեղադրված լինեն նախազգուշացնող նշաններ. և

շինհրապարակների մոտ պետք է ապահովվի հետիոտների և փոխադրամիջոցների անվտանգ տեղաշարժը:

- ✓ Խոտհարքերի և արոտավայրերի վրա ազդեցությունը, կենդանիների տեղաշարժը ճանապարհներով կարող է սահմանափակվել շինարարական աշխատանքների պատճառով
- ✓ Մարդկանց մուտքի սահմանափակում դեպի տուն, տնտեսական ռեսուրսների, ինչպես նաև արոտավայրի, ջրի, հանրային ծառայությունների սահմանափակում,
- ✓ Անհատների կամ ընտանիքների վերաբնակեցում կամ հողի ձեռքբերման հարցեր (հանրային կամ մասնավոր, ժամանակավոր կամ մշտական) –ավելի մանրամասն կներկայացվի ՎՔՇ փաստաթղթում,

2. Կենդանիների համար ջրարբիացման կետերի կառուցում.
   - մեծ քանակությամբ ջրառ, բնական աղբյուրի ռեժիմի խախտում, ջրի աղբյուրի հիմքի քայքայում
   - ջրատար շերտի ճեղքում և աղտոտում՝ կառուցման աշխատանքների ընթացքում,
   - ստորգետնյա ջրերի մակարդակի խախտում, որի պատճառով հնարավոր է ճահճացում, չորացում կամ գետի ջրի հավասարակշռության խախտում:
   - շին. հրապարակի աղտոտում շին.աղբի պատճառով:

3. Գյուղամերձ արոտավայրերի լարվածության տեղափոխում ներկայումս չօգտոգործվող հեռագնա արոտավայրերի վրա.
   - ներկայումս չօգտագործվող հեռագնա արոտավայրերի գերարածեցում և դեգրադացիա
   - բուսականության վնասում,
   - կենսաբազմազանության կորուստ՝ այլընտրանքային արոտավայրեր կենդանիների տեղափոխմամբ և արածեցմամբ պայմանավորված:

4. Կերարտադրություն
   - Արոտավայրերի դեգրադացիա, բուսականության կորուստ
   - Անասնակերի ոչ պատշաճ պահեստավորում
   - Անասնակերի կորուստ աճեցման ժամանակ պեստիցիդների օգտագործման, անասնակերի տեղափոխման և պահուստավորման ժամանակ անվտանգության կանոնները չպահպանելու և սխալ պիտակավորելու հետևանքով:

- Գործառնական փուլի ընթացքում երկարաժամկետ բացասական բնապահպանական և սոցիալական ակնկալվող ազդեցություններն են՝ (i) Չվերահսկվող արածեցումը, որը կարող է պատճառել բուսականության կորուստ և բնական խոտհարքների վատթարացում. և (ii) կենսաբազմազանության կորուստ մոլախոտերի դեմ պայքարում թունաքիմիկատների կիրառման պատճառով, (iii) հողի ձեռքբերման հարցեր (մանրամասն կներկայացվի ՎՔՇ փաստաթղթում և ՎԳՊ-ում), (iv) շին. հրապարակի աղտոտում շին.աղբով:

Գործառնական փուլի ընթացքում երկարաժամկետ դրական բնապահպանական և սոցիալական ակնկալվող ազդեցություններն են՝ (i) բուսածածկույթի և կենսաբազմազանության վերականգնում արոտավայրերի հավասարակշռված ծանրաբեռնվածության ապահովման շնորհիվ, (ii) կաթնատվության քանակական և որակական աճ ամենամոտ արոտներում արածելու շնորհիվ, (iii) կենդանիների քաշաճի ապահովում:

5.2 ԱԿԱԶՊ-ների իրականացման շրջանակում շրջակա միջավայրի վրա ազդող և սոցիալական բացասական ազդեցությունները մեղմացնող միջոցառումներ

Վերը նկարագրված ռիսկերից խուսափելու կամ դրանք նվազեցնելու նպատակով նախատեսվում են ազեցությունը մեղմացնող որոշակի միջոցառումներ և գործողություններ՝

- Հողի բերրի շերտի կորուստը կանխարգելու նպատակով նախատեսվել է շինարարական աշխատանքների սկսելուց առաջ՝ նախորոք, հողի բերրի շերտը հանել և պահպանել, և շինարարական աշխատանքներն ավարտելուն պես օգտագործել այն շինարարական վայրի վերականգման համար (ՀՀ հողային օրենսգիրքը Հողի բերրի շերտի վաճառք չի թույլատրում),
- Շինարարական աղբի կուտակումը և շրջակա միջավայրի աղտոտումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է կուտակել աղբը հատուկ փակ տարաներում կամ այդ նպատակով առանձնացված վայրում ծածկի տակ, հետագայում այդտեղից հեռացնելու նպատակով: Շինարարական վայրի ցանկապատումը և սահմանազատումը որևէ այլ հարմար եղանակով նույնպես հանդիսանում են համապատասխան միջոցներ, որոնք շատ կարևոր են տեղում թափոնների արդյունավետ կառավարման համար,

- Բուսածածկույթի քայքայումը, լանջերի անկայունությունը, էրոզիան, լանդշաֆտների դեգրադացիան, ինչպես նաև հողի և ջրի աղտոտումը կանխարգելու նպատակով պետք է երաշխավորել շինարարության աշխատանքային որակյալ նախագծերի առկայությունը և դրանց ծավալաթերթերի ամբողջականությունը, ինչը կապահովի լանջերի կայունության, բուսածածկույթի բնական կամ արհեստական վերականգման և լանդշաֆտների հետ ներդաշնակության ապահովման համար բոլոր անհրաժեշտ պարագաների տրամադրումը: Անհրաժեշտ է ճշգրիտ պլանավորել և մոնիտորինգի ենթարկել կայունացմանն ու վերականգմանն ուղղված աշխատանքներն այնպես, որ դրանք իրականացվեն ճիշտ ժամանակին և ավելի շուտ կատարման հնարավորության դեպքում չհետաձգվեն մինչև այն ժամանակ, երբ աշխատանքները լրիվ կավարտվեն,
- Օդի աղտոտումը կանխարգելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել փոշու նստեցման և օդի աղտոտման կանխմանն ուղղված միջոցառումներ՝ ջուր ցողալով մոտեցնող ճանապարհներին և շինարարական հրապարակներում: Շինարարության ընթացքում, հողային աշխատանքների և մեքենաների շահագործման հետևանքով կավելանա օդի աղտոտվածությունը: Նման գործունեության հիմնական աղտոտող գործոններն են մեքենաների արտանետած գազերը և հողային ու քարային աշխատանքների կատարման ժամանակ առաջացող փոշին: Շինարարության ընթացքում ջուր ցողելը կնստեցնի փոշին, մեղմացնելով դրա ազդեցությունը բանվորների վրա: Օդի որակը կարգավորող լրացուցիչ միջոցառումների շարքին են պատկանում բետոնի պատրաստման և շինանյութերի կուտակման հրապարակների տեղակայումը մեկուսացված վայրերում, ինչպես նաև աշխատանքային մեքենաների վարումը նախապես որոշված ճանապարհներով՝ հետևելով սահմանված ժամանակացույցին: Փխրուն/հոսող շինարարական նյութերով (ինչպիսիք են խիճը, ավազը, հողը և այլն) բեռնված մեքենաները պետք է ծածկված լինեն՝ տեղափոխման ժամանակ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով,
- Ցածրորակ շինարարական նյութերի օգտագործումը կանխելու նպատակով կկատարվի մատակարարված շինանյութի նմուշառում և որակի ստուգում: Եթե տեստը ցույց կտա ասբեստի առկայություն կամ կապարի առկայություն ներկերում, տվյալ շինանյութերի կիարառումը չի թույլատրվի,
- Ջրային ռեսուրսների արդյունավետ գործածման նպատակով անհրաժեշտ է խնայել ջուրը և կրճատել կորուստները մինչև ՀՀ ջրային ռեսուրսների մասին օրենսդրությամբ սահմանված

թույլատրելի քանակ համապատասխան դաշտի համար, ինչպես նաև օգտագործումից հետո ապահովել դեպի ջրային աղբյուր կամ համակարգ հոսող ջրի մաքրումը մինչև այն աստիճան, որ թույլատրվում է ջրային աղբյուր կամ համակարգեր անբարենպաստ նյութեր արտազատելու համար:

- Արոտավայրերի գերարածեցումը, դեգրադացումը, բուսականության և կենսաբազմազանության կորուստը կանխելու նպատակով նախատեսվում է յուրաքանչյուր համայնքի համար մշակել գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման պլան (ՀԳՌԿՄ), որտեղ կհիմնավորվի արածեցման սեզոնայնության, հերթականության, պարբերականության և հերթափոխային արածեցման մեխանիզմները՝ հիմնվելով բնական ռեսուրսների մատչելիության և համայնքի պահանջարկի վրա,
- Արոտավայրերի կենսաբազմազանության կորուստը և հանրային առողջապահությանը հասցվող վնասը կանխելու համար պետք է վնասատուների և թունաքիմիկատների պատշաճ կառավարում իրականացնել անասնակերի արտադրության և արոտավայրերի վերականգնման ժամանակ:
- Ֆերմերների կարողությունների զարգացում, մասնավորապես տրամադրելով խորհրդատվություն և կազմակերպելով հատուկ ուսուցում, որի շնորհիվ ֆերմերները կկարողանան ճշգրիտ որոշել վնասատուներին և նրանց կողմից հասցված վնասը: Նրանք պետք է առնվազ հասկանան՝
  - ✓ Որոնք են հիմնական վնասատուները, որոնք ազդում են ծրագրի շրջանակում ընդգրկված արոտավայրի, կենդանիների կամ պահեստի/վերամշակող ընկերության վրա
  - ✓ վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի կառավարման գործիքները և ռազմավարությունը, որոնցից օգտվում են թիրախային շահառուները հիմնական վնասատուների դեմ պայքարելու համար
  - ✓ Յուրաքանչյուր հիմանական վնասատուի դեմ գործածվող թունաքիմիկատ
  - ✓ Տեղեկատվություն տեղական թունաքիմիկատների վերաբերյալ
  - ✓ Վնասատուների հետ առնչվող ռիսկեր, ինչպես օրինակ հարաբերական տոքսիկություն և ամբողջ աշխարհում սահմանափակված/արգելված թունաքիմիկատներ
  - ✓ Անհրաժեշտ է ԻՊՍ (Ինքնապաշտպանական սարք)- պետք է գործածվի-որոշակի թունաքիմիկատների դեպքում

- Թունաքիմիկատների օգտագործման և մարդու առողջության վրա դրանց ազդեցության վերաբերյալ հանրության ուշադրության և մտահոգության մեծացում:
    - Ապահովելու համար կանանց և երիտասարդների հավասարաչափ մասնակցությունը Ծրագրում, ԾԻԳ-ը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այս նպատակային խմբերին, մասնավորապես ենթածրագրերի կազմման գործընթացում և ընտրության չափանիշների մասով,
    - Համայնքներում շահառուների ընտրության գործընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն ֆերմերային տնտեսություններին, կոոպերատիվներին, կամ սննդի ոլորտի կազմակերպություններին, որոնք կառավարվում են կանանց կողմից: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ աշխատանքներ կտարվեն այս նպատակային խմբերի հետ,
    - Հանրային իրազեկման և խորհրդակցային հանդիպումների կազմակերպման ժամանակ ապահովել, որ մասնակիցների 50%-ից ավելին լինեն կանայք:

6 ԲԱՑԱԴՐԻՉ 2 - ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

6.1 Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտությունները և դրանց հնարավոր ազդեցությունները

Բաղադրիչ 2-ի նպատակն է Հայաստանում գյուղմթերք արտադրողների և վերամշակողների կարողության բարձրացումը՝ բավարարելու համար ներքին պահանջարկը և օգտվել միջազգային շուկա մուտք գործելու հնարավորություններից կերերով սնված կենդանուց ստացված կաթի և մսի, ինչպես նաև վերամշակած բանջարեղենի և պտղի արժեքային շղթաներում, որտեղ Հայաստանը ունի առավելություն: Իրականացման ընթացքում կորոշվեն արժեքային շղթաներում առկա խոչընդոտները, ինչպես օրինակ, շուկայի պահանջների և որակի չափորոշիչների մասին իրազեկվածության պակաս, արտադրանքի ազգային և/կամ միջազգային արտադրանքի չափորոշիչներին և սննդամթերքի անվտանգության պահանջներին համապատասխանելու համար ոչ պատշաճ պայմաններ և սարքավորումներ, ինչպես նաև վերամշակողների և արտադրողների միջև առկա թույլ կապեր:

Նշված խոչընդոտները հաղթահարելու համար, դրամաշնորհների տեսքով կտրամադրվի ենթածրագրային նպատակային ֆինանսավորում հետևյալ նպատակներով՝ (i) աջակցել արտադրական կոոպերատիվներին իրենց արտադրությունը

ստանդարտացնելու, որակի ապահովման և գյուղատնտեսական պատշաճ գործունեության բարելավման հարցերում, (ii) մեծացնել շուկաների և շուկայի պահանջների, այդ թվում սննդամթերքի անվտանգության վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, (iii) կիրառել սննդամթերքի անվտանգության փորձ և համապատասխանել Վտանգների վերլուծության և կրիտիկական վերահսկողության կետերի համակարգի պահանջներին, (iv) բարելավել վերամշակման, պահպանման, փաթեթավորման, շուկայահանման գործընթացները և արտադրանքի որակը, (iv) գրանցել ապրանքանիշը և ձեռքբերել հավաստագրում, այդ թվում օրգանական սննդամթերքի հավաստագիր; և (v) բարելավել գործընթացի կառավարումը:

Ենթածրագրերի ֆինանսավորումից բացի, բաղադրիչի շրջանակում կֆինանսավորվեն առաջնահերթությունները սահմանող աշխատաժողովները, հրապարակայնության ապահովումը, տեխնիկական ուսումնասիրությունը և հայտերի ընտրությունը, երկու մասնագետից բաղկացած քարտուղարությունը, որոնք կուսումնասիրեն հայտերը և կստուգեն առաջընթացը, անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեխնիկական մասնագետներ և ֆինանսավորված ենթածրագրերի ազդեցության գնահատում:

ԾԻԳ-ի կազմում կգործի Արժեքային շղթայի քարտուղարություն (այսուհետ՝ Քարտուղարություն), որը կկառավարի ծրագիրը, կկազմակերպի առաջնահերթությունների որոշմանն ուղղված աշխատաժողովները, կապահովի ծրագրի հրապարակայնությունը, այդ թվում կազմակերպելով ազգային ցուցահանդես երկու տարին մեկ անգամ, որով հանրությանը կներկայացվի բաղադրիչի աշխատանքները և հաջողված ենթածրագրերի արդյունքները, կուսումնասիրի հայտերը, ստուգելով դրանց համապատասխանությունը սահմանված չափանիշներին, կկազմակերպի տեխնիկական ուսումնասիրության և ընտրության գործընթացները, կկազմի պայմանագրեր, մոնիտորինգի կենթարկի ենթածրագրերը և կկազմակերպի յուրաքանչյուր ենթածրագրի վերջնական գնահատումը: Քարտուղարության կազմում կաշխատեն Գլխավոր մասնագետը և նրա օգնականը, և կազմում անհրաժեշտության դեպքում կընգրկվեն նաև կարճաժամկետ պայմանագրային մասնագետներ, ինչպես օրինակ՝ Կաթնամթերքի, Այգեգործության գծով մասնագետներ տեխնիկական աջակցություն և մոնիտորինգ իրականացնելու նպատակով: Քարտուղարության կազմում պետք է ընգրկել նաև Բնապահպանական և սոցիալական ազդեցության մասնագետ նույնպես:

Դրամաշնորհներ կարող են տրամադրվել հետևյալ հավակնորդներին՝ գրանցված ընկերություններ և տնտեսվարողներ, կոոպերատիվներ և միություններ և գրանցված ձեռնարկություններ: Հայտերի ընդունման գործընթացը իրականացվում է երկու փուլով:
Սկզբում պետք ներկայացվի փաստաթուղթ, որտեղ նշված կլինի հայտատուի մասին հիմնական տեղեկություններ և գործունեության թեման: Քարտուղարությունը կգնահատի դրանք և կստուգի համապատասխանությունը սահմանված չափանիշներին: Այնուհետև բոլոր հայտատուները պետք է ներկայացնեն ավելի մանրամասն հայտեր, ներառելով բիզնես պլան, որը կուսումնասիրվի տեխնիկական գրախոսի կողմից և կհաստատվի յոթ անձից բաղկացած Հանձնաժողովի կողմից, որի կազմում կլինեն աշխատակիցներ Նախարարությունից և տեխնիկական փորձագետներ: Հայտերը կուսումնասիրվեն խմբաքանակներով այն հերթականությամբ, որով ստացվել են, և բոլոր ընտրված հայտերի համար կհատկացվի ֆինանսավորում ծրագրի բյուջեում առկա դրամական միջոցների սահմաններում: Հանձնաժողովի հանդիպումից հետո Քարտուղարությունը պետք է այց կատարի ընտրված հայտատուներին և հավաստիանա, որ հայտում նշված տեղեկատվությունը և ռեսուրսները համապատասխանում են իրականությանը:

Բաղադրիչ 2-ի շրջանակում բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցություններն են՝

- Հողի և այլ բնական ռեսուրսների վրա լրացուցիչ ազդեցության հավանականություն,
- Լրացուցիչ թունաքիմիկատներ գործածելու դեպքում հողի, ջրի և սննդի աղտոտման հավանականություն,
- Կենդանական ծագման, օրգանական և վտանգավոր լրացուցիչ թափոնների գոյացում,
- Կանանց և երիտասարդների կողմից կառավարվող կազմակերպությունների ոչ հավասար ներգրավվածություն,
- Բողոքարկման մեխանիզմի ոչ պատշաճ ներկայացում, մասնավորապես աղքատ համայնքներում:

6.2 Արժեքային շղթայի աջակցության բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունների համար առաջարկվող մեղմացուցիչ միջոցառումներ

Կանխելու կամ նվազեցնելու համար ռիսկերը, ազդեցության մեղմացման հետևյալ միջոցներն ու գործողություններն են առաջարկվում՝

- Արտադրական գների բարձրացման վերահսկում, ինչը կանխում է հողի ինտենսիվ շահագործումը, արդյունքում

առաջացնելով հողի էրոզիա և հողում կուտակված ածխածնի արտազատում:

- Կանխել ավելի մեծ թվով թունաքիմիկատների գործածումը, ինչը տեղի է ունենում վերավաճառողների կողմից պահանջվող ավելի բարձր որակ ապահովելու հիմնավորմամբ, սակայն սա կարող է առաջացնել ջրի աղտոտում և առողջական խնդիրներ աշխատողների մոտ
- Տեղի բնական ռեսուրսների (անտառ, հող և ջուր) կառավարման և շահագործման հետ կապված գործընթացների կարգավորում
- Տնտեսությունում կազմել արժեքային շղթայի տարբեր հատվածներում օգտագործված ռեսուրսների, առաջացած թափոնների, և փոխադրամիջոցներից առաջացող արտանետումների ցուցակ:

7 ԲԱՂԱԴՐԻՉ 3 - ՀԱՆՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

7.1 Բաղադրիչի շրջանակում ակնկալվող միջամտություններ և դրանց հնարավոր ազդեցությունները

Ծրագրի Բաղադրիչ 3-ի շնորհիվ կուժեղացվեն հանրային ոլորտի կառույցների կարողությունները՝ նպաստելով բիզնեսի զարգացմանը և ապահովելով մուտք դեպի շուկա բաղադրիչ 1 և 2-ի շրջանակում ընտրված արժեքային շղթաներում: Բաղադրիչի շրջանակում ֆինանսավորվում են հետևյալ գործունեությունները՝ (i) Կենդանիների առողջության ծառայություններ, այդ թվում մոբիլիզացում, ուսուցում, շուրջ 100 համայնքային անասնաբույժներին գործիքների տրամադրում և Անասնաբուժական աջակցության չորս կենտրոնների հիմնում, որոնք պատկանելու են և գործարկվելու են համայնքային անասնաբույժների կողմից, (ii) Սննդամթերքի անվտանգություն, այդ թվում մարզերի և համայնքների սննդամթերքի անվտանգության տեսուչների կարողությունների ընդլայնում թեստավորման պարզ գործիքներ և ուսուցում տրամադրելու միջոցով, ինչպես նաև արժեքային շղթայի ստորին օղակում, այդ թվում արտադրողների և մանր վերամշակողների՝ սննդամթերքի անվտանգության չափորոշիչների և համակարգերի մասին գիտելիքների և հմտությունների ընդլայնում, (iii) Աջակցել Բանջարաբոստանային եվ տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնին աճեցնելու բազմացման և սելեկցիայի իրենց ծրագրով տեղական պայմաններին հարմարեցված բանջարեղենի բարձրորակ սերմեր և տնկիներ, և (iv) ներդնել Գյուղատնտեսական

պատշաճ գործունեություն, այդ թվում աջակցելով Ագրոքիմիական ծառայություն պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ վերլուծության ենթարկելու հողերը և քիմիական նյութերը:

Համայնքի անասնաբուժական ծառայությունների բարելավմանն ուղղված նկարագրված աշխատանքները հիմնականում ներառում են տեխնիկական աջակցություն, ինչպես նաև շինարարական աշխատանքների իրականացում և ապրանքների մատակարարում: Այս բաղադրիչի շրջանակում շինարարական աշխատանքների բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցություններն են՝

- Հողի և ջրի աղտոտում: Շինարարական նյութերի, շինաղբի և փորված նյութերի ոչ ճիշտ պահպանումը, ինչպես նաև շինարարության ընթացքում վառելիքի, և նավթամթերքների և այլ նյութերի արտահոսքը կարող է բերել հողի և ջրի աղտոտմանը. ինչպես նաև շինարարական ծանր մեքենա-մեխանիզմների օգտագործումը կարող է առաջացնել հողի և ջրի աղտոտում:
- օդը կարող է աղտոտվել փոշու միջոցով շինարարական աշխատանքների իրականացմամբ պայմանավորված և ներառում է բեռնման ու բեռնաթափման, ծանր մեքենա-մեխանիզմների աշխատանքի իրականացման ժամանակ փոշու առաջացումը, շինարարական աշխատանքների ժամանակ տրանսպորտային միջոցների և մեքենաների շահագործման ընթացքում դիզելային վառելիքի այրումից առաջացած վտանգավոր նյութերի արտանետումը, զոդման, բետոնախառնիչ հանգույցի, ասֆալտափռիչ սարքի շահագործման, ինչպես նաև փխրուն շինարարական նյութերի ոչ ճիշտ պահեստավորման և փխրուն շինարարական աղբի ոչ ժամանակին հեռացման ընթացքում առաջացած արտանետումները:
- Շահառու համայնքի բնակչության ժամանակավոր անհանգստության պատճառում՝
    - ✓ Բնակելի տարածքներում գիշերային աշխատանքները չեն թույլատրվի՝ կանխելով աղմուկը: Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն աշխատանքային բնականոն ժամերին, այլ պարագայում պետք է տեղադրել խլացուցիչներ, համաձայն հաստատված ընթացակարգի:
    - ✓ Շինհրապարակները պետք է լինեն, ինչպես հարկն է, սահմանազատված և ցանկապատված. պետք է տեղադրված լինեն նախազգուշացնող նշաններ. և շինհրապարակների մոտ պետք է ապահովվի

հետիոտների և փոխադրամիջոցների անվտանգ տեղաշարժը:

- ✓ Մարդկանց մուտքի սահմանափակում դեպի տուն, տնտեսական ռեսուրսների, ինչպես նաև արոտավայրի, ջրի, հանրային ծառայությունների սահմանափակում,
- ✓ Անհատների կամ ընտանիքների վերաբնակեցում կամ հողի ձեռքբերման հարցեր (հանրային կամ մասնավոր, ժամանակավոր կամ մշտական) –ավելի մանրամասն կներկայացվի ՎՔՇ փաստաթղթում,

Բաղադրիչ 3-ի տարբեր ենթաբաղադրիչների շրջանակում սոցիալական հնարավոր ազդեցություններն են՝

- Կանանց և երիտասարդների մասնակցության սահմանափակումը ուսուցումներին և տեխնիկական աջակցության բաղադրիչների աշխատանքներում, պայմանավորված իրազեկվածության պակասով և անբավարար կարողություններով,
- Բողոքների ներկայացման մեխանիզմների բացակայությունը, մասնավորապես աղքատ համայնքներում:

7.2 Շինարարական աշխատանքների և տեխնիկական աջակցության բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունները մեղմացնող առաջարկվող միջոցառումներ

Վերը նկարագրված ռիսկերից խուսափելու կամ դրանք նվազեցնելու նպատակով նախատեսվում են ազեցությունը մեղմացնող որոշակի միջոցառումներ և գործողություններ՝

- Շինարարական աղբի կուտակումը և շրջակա միջավայրի աղտոտումը կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է կուտակել աղբը հատուկ փակ տարաներում կամ այդ նպատակով առանձնացված վայրում ծածկի տակ, հետագայում այդտեղից հեռացնելու նպատակով: Շինարարական վայրի ցանկապատումը և սահմանազատումը որևէ այլ հարմար եղանակով նույնպես հանդիսանում են համապատասխան միջոցներ, որոնք շատ կարևոր են տեղում թափոնների արդյունավետ կառավարման համար,
- Բուսածածկույթի քայքայումը, լանջերի անկայունությունը, էրոզիան, լանդշաֆտների դեգրադացիան, ինչպես նաև հողի և ջրի աղտոտումը կանխարգելու նպատակով պետք է երաշխավորել շինարարության աշխատանքային որակյալ

նախագծերի առկայությունը և դրանց ծավալաթերթերի ամբողջականությունը, ինչը կապահովի լանջերի կայունության, բուսածածկույթի բնական կամ արհեստական վերականգման և լանդշաֆտների հետ ներդաշնակության ապահովման համար բոլոր անհրաժեշտ պարագաների տրամադրումը: Անհրաժեշտ է ճշգրիտ պլանավորել և մոնիտորինգի ենթարկել կայունացմանն ու վերականգմանն ուղղված աշխատանքներն այնպես, որ դրանք իրականացվեն ճիշտ ժամանակին և ավելի շուտ կատարման հնարավորության դեպքում չհետաձգվեն մինչև այն ժամանակ, երբ աշխատանքները լրիվ կավարտվեն,

- Օդի աղտոտումը կանխանգելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել փոշու նստեցման և օդի աղտոտման կանխմանն ուղղված միջոցառումներ՝ ջուր ցողալով մոտեցնող ճանապարհներին և շինարարական հրապարակներում: Շինարարության ընթացքում, հողային աշխատանքների և մեքենաների շահագործման հետևանքով կավելանա օդի աղտոտվածությունը: Նման գործունեության հիմնական աղտոտող գործոններն են մեքենաների արտանետած գազերը և հողային ու քարային աշխատանքների կատարման ժամանակ առաջացող փոշին: Շինարարության ընթացքում ջուր ցողելը կնստեցնի փոշին, մեղմացնելով դրա ազդեցությունը բանվորների վրա: Օդի որակը կարգավորող լրացուցիչ միջոցառումների շարքին են պատկանում բետոնի պատրաստման և շինանյութերի կուտակման հրապարակների տեղակայումը մեկուսացված վայրերում, ինչպես նաև աշխատանքային մեքենաների վարումը նախապես որոշված ճանապարհներով՝ հետևելով սահմանված ժամանակացույցին: Փխրուն/հոսող շինարարական նյութերով (ինչպիսիք են խիճը, ավազը, հողը և այլն) բեռնված մեքենաները պետք է ծածկված լինեն՝ տեղափոխման ժամանակ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով,
- Ապահովելու համար կանանց և երիտասարդների հավասարաչափ մասնակցությունը Ծրագրում, ԾԻԳ-ը պետք է հատուկ ուշադրություն դարձնի այս նպատակային խմբերին, մասնավորապես ենթածրագրերի կազմման գործընթացում և ընտրության չափանիշների մասով,
- Ծրագրի իրականացման ընթացքում շահառուները պետք է, ինչպես հարկն է, տեղեկացված լինեն պահանջների ներկայացման ընթացակարգերի մասին (հայտարարություններ տեղական թերթերում, հեռուստատեսությամբ և հասարակական վայրերում)և նրանց պետք է տրամադրվի անհրաժեշտ կոնտակտային տվյալներ:

- Ծրագրի իրականացման ընթացքում շահառուները պետք է ինչպես հարկն է, տեղեկացված լինեն բողոքների ներկայացման ընթացակարգերի մասին և նրանց պետք է տրամադրվի անհրաժեշտ կոնտակտային տվյալներ:

8 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ԶԵԿՈՒՅՈՒՄ

8.1 Անվտանգության երաշխիքների համապատասխանության մոնիտորինգ

ՀՀ ԳՆ-ը ,ԳԾԻԳԵ-ի միջոցով պատասխանատու կլինի ՀԳՌԿՄ 2 ծրագրի համար Համաշխարհային բանկի կողմից և ՀՀ պետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր բնապահպանական և սոցիալական երաշխիքների հետ ծրագրով ֆինանսավորվող բոլոր միջոցառումների համապատասխանության վերահսկման համար: ,ԳԾԻԳԵ-ի կողմից սա կիրականացվի սեփական ուժերով, ինչպես նաև վարձված բնապահպանության և/կամ սոցիալական ազդեցության մասնագետների օգնությամբ: Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգն ենթադրում է կանոնավոր այցելություններ տեղամասեր, որոնց ընթացքում իրականացվում է ծրագրի ֆինանսավորմամբ կապալառուների և ՀԳՌԿՄ 2 ծրագրի ծրագրի շրջանակներում դրամաշնորհ ստացողների կողմից ֆիզիկական գործողությունների վերահսկողություն և ԲԿՊների և ՎԳՊների իրականացման հսկողություն, եթե կիրառելի է: Բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի իրականացման համար մշակված է դաշտային վերահսկողության երկու տեսակ. առաջինը՝շինարարական/վերակառուցման աշխատանքների համար և երկրորդը՝ բոլոր այլ տեսակի ֆիզիկական գործողությունների համար (կերարտադրություն, տնտեսությունների վարում, կենդանիների տոհմային հատկանիշների բարելավում, բերքահավաքից հետո բերքի մշակում և գյուղատնտեսական արտադրանքի վերամշակում, կենդանիների առողջության հետ կապված ծառայությունների մատուցում և այլն):

Համապատասխանությունը ծրագրի ՎՔՇՓ-ի, ԲԿՊների (և ՎՊԿՊ) հետ պարտադիր նախապայման է ՀԳՌԿՄ 2 ծրագրի բոլոր կապալառուների և շահառուների համար: ,ԳԾԻԳԵ-ի կողմից մոնիտորինգ կիրականացվի մեղմացնող միջոցառումների և սույն փաստաթղթում նշված լավագուն փորձի իրականացման նկատմամբ: Անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում այդ մասին կտեղակացնի ենթա-ծրագրի

կապալառուներին/շահառուներին և կպահանջի շտկել թերությունները: Եթե անհամապատասխանությունները չվերացվեն և վտանգի տակ դրվեն ՎՔՇՓ-ի, ԲԿՊների և ՎՊԿՊ-ի պահանջները, ,ԳԾԻԳԵ-ի կողմից կկիրառվի պայմանագրի դրույթներով կամ դրամաշնորհի համաձայնագրով նախատեսված տույժերի իրականացում: ՎՔՇՓ, ԲԿՊներն (և առկայության դեպքում ՎՊԿՊ) կընդգրկվեն աշխատանքների կատարման մրցութային փաստաթղթերում և կկցվեն աշխատանքներ մատուցողների հետ կնքված պայմանագրերին, որպեսզի կապալառուներն այդպիսով իրավաբանորեն պարտավորված լինեն: Դրամաշնորհային համաձայնագրերում կներառվեն նաև դրույթներ ըստ որոնց ստացողները պարտավորվում են հետևել ՎՔՇՓ-ում, ԲԿՊներում և ՎՊԿՊ-ով սահմանված իդրույթներին, որոնք մշակվել են այդ ստացողների կողմից և հաստատվել են ,ԳԾԻԳԵ-ի կողմից նախքան համաձայնագրի մեջ ընդգրկվելը:

8.2 Անվտանգության երաշխիքների հետ համապատասխանության զեկուցում

,ԳԾԻԳԵ-ը պատասխանատու է բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի իրականացման աշխատանքների փաստաթղթավորման, տեղամասերի մոնիտորինգի ձևաչափերի պահպանման և մոնիտորինգի տվյալների վերաբերյալ կանոնավոր նկարագրական հաշվետվությունների պատրաստման համար: Այդ հաշվետվություններում կամփոփվեն տեղամասերում կատարված աշխատանքները, կուսումնասիրվեն հայտնաբերված ընդհանուր խնդիրները, խնդիրների լուծման համար մշակված գործողությունները, որոնք ձեռնարկվել են հաշվետվությանը նախորդող ժամանակահատվածում առաջարկությունների հիման վրա: Հաշվետվության մեջ կընդգրկվեն ոչ միայն բնապահպանական և սոցիալական երաշխիքներին վերաբերող խնդիրներ, այլև առավել լայն ընդգրկում ունեցող բնապահպանական և սոցիալական հարցեր (օրինակ՝ գենդերային, բողոքարկման և այլն):

,ԳԾԻԳԵ-ի կողմից կպատրաստվեն հաշվետվություններ բնապահպանական և սոցիալական համապատասխանության կարգավիճակի վերաբերյալ նախքան ծրագրի իրականացմանն աջակցող ՀԲ առաքելությունները, որոնք իրականացվում են տարեկան 2-3 անգամ: ՀԳՌԿՄ 2 ծրագրի տարեկան առաջընթացի հաշվետվության մաս կկազմեն նաև անվտանգության երաշխիքների հետ համապատասխանության վերլուծական տեղեկատվությունը: Հաշվետվությունները կլրացվեն նաև

թվագրված ֆոտո փաստաթղթերով: Տեղամասերի մոնիտորինգի բոլոր ստուգիչ-ցանկերն ու նկարագրական հաշվետվությունները կպահվեն ԳԾԻԳ-ում համակարգված ձևով էլեկտրոնային և/կամ տպագիր տարբերակներով և ՀԲ կներկայացվեն ըստ անհրաժեշտության:

9 ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հանրային լսումներն ու համակարգումը, ինչպես նաև տեղեկատվության հասանելիությունը կանոնակարգող ՀՀ օրենքները ներկաացված են ստորև.

- ,Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմնադրույթներե՝ ապահովում է բնապահպանական իրավիճակի մասին ամբողջական տեղեկատվություն պահանջելու և ժամանակին ստանալու քաղաքացիների իրավունքը:
- Օրենք ,Բնապահպանական ազդեցության գնահատմանե մասին՝ սահմանում է բնապահպանական ազդեցությունների գնահատման գործընթացը:
- Տեղեկատվության ազատության մասին օրենք՝ ապահովում է տեղեկատվության մատչելիության և ազատության սկզբունքները, ինչպես նաև սահմանում է տարբեր կառույցներին դիմումների ներկայացման և տեղեկատվության ստացման կարգը:

Համաձայն ,Բնապահպանական ազդեցության գնահատմանե օրենքի որոշ գործողությունների համար կարող է պահանջվել ԲԱԳ: Օրենքով սահմանված դեպքերում նման գործողությունների նախաձեռնողը պատասխանատու է զանգվածային լրատվամիջոցներով (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր) ԲԳ Կատեգորիայի բոլոր ենթա-ծրագրերի մասին հանրային իրազեկման համար: Նաև պետք է տեղեկացնի տեղական ղեկավարությանը և շահագրգիռ ՀԿ-ներին ծրագրի բնապահպանական ասպեկտների վերաբերյալ՝ հաշվի առնելով հետագայում ծրագրի նախապատրաստման և իրականացման փուլերում դրանց դիտարկումը:

Հայաստանը հանդիսանում է Օրհուսի՝ Ինֆորմացիայի, որոշումների կայացմանը հանրային մասնակցության և բնապահպանական հարցերի շուրջ արդարության հասանելիության մասին կոնվենցիայի մաս, որը ստորագրվել է 1998 թվականին և վավերացվել է 2001 թվականին: Այս կոնվենցիայով նաև ՀՀ կառավարությունը պարտավորվում է հանրայնացնել բնապահպանական

տեղեկատվությունը: Նույնը պահանջվում է նաև ՀԲ անվտանգության քաղաքականություններով:

ԳՆ-ն ԳԾԻԳ-ի միջոցով պատասխանատու է լինելու ՀԳՌԿՄ II ծրագրի շրջանակում մշակված բնապահպանական և սոցիալական փաստաթղթերի համար հանրային լսումներ ապահովելու համար: Դրանց թվում են սույն ԲՍԿՇ փաստաթուղթը, ինչպես նաև ՎՔՇ փաստաթուղթը և բոլոր տարածքներին բնորոշ ԲԿՊ-ները, ենթածրագրերի համար կազմված ՎԿՊ-ները, ՎԳՊ-ները: Ծրագրի շահառուների, հատկապես տեղական համայնքների հետ խորհրդակցությունը պարտադիր է ԲՍԿՇ, ՎՔՇ փաստաթղթերի և ԲԿՊ/ՎԿՊ/ՎԳՊ-ների մշակման գործընթացում: Հանրության կողմից դիտարկումները հաշվի կառնվեն այս փաստաթղթերի նախագծերում դրանք վերջնական տեսքի բերելուց առաջ: ԲՍԿՇ սույն փաստաթուղթը հայերեն և անգլերեն լեզուներով կտեղադրվի ԳՆ վեբկայքում և կտարածվի այլ համապատասխան լրատվամիջոցներով և կքննարկվի ՀԳՌԿՄ II ծրագրի բոլոր շահագրգիռ կողմերի հետ: Յուրաքանչյուր համայնքի համար կազմված ԲԿՊ/ՎԿՊ/ՎԳՊ-ները նույնպես քննարկման նպատակով ժամանակին հասանելի կլինեն ծրագրի ազդեցությանը ենթարկված խմբերի և տեղական ՀԿ-ների համար այն ձևաչափով և լեզվով, որն ընկալելի է և հասանելի համապատասխան խմբին: Յուրաքանչյուր ենթածրագրի դեպքում իրականացվելու է հանրային լսում մինչ տվյալ ենթածրագրի տարածքում աշխատանքները մեկնարկը: Հանրային լսումների արձանագրությունները պետք է կցվեն առկա ԲՍԿՇ փաստաթղթին և բոլոր ԲԿՊ/ՎԿՊ/ՎԳՊ-ներին:

10 Հավելված 1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ/ՈՒՐՎԱԳԻԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս նկարագրի նպատակն է տրամադրել շրջանակ՝ որոշելու, թե որքանով են տարբեր գործողություններն ազդելու բնական և սոցիալական միջավայրի վրա, ինչպես նաև ապահովել, որ հայտատուները միավորեն բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ իրենց առաջարկած ենթածրագիրը ՀՀ օրենսդրությանը և Համաշխարհային բանկի երաշխիքային քաղաքականություններին համապատասխանեցնելու համար:

Բնապահպանական վտանգներ և առաջարկվող մեղմացման միջոցառումներ ակնկալվող գործունեության տեսակների համար

Բնապահպանական վտանգներ և առաջարկվող մեղմացման միջոցառումներ ակնկալվող գործունեության տեսակների համար

Տնտեսության վարման, այգեգործության և գինեգործության հետ կապված միջոցառումների մեծ մասը քիմիկատների օգտագործման միջոցով հողի և ջրի ոչ պատշաճ կառավարման արդյունքում զգալի ազդեցություն կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա: Միջին ծավալ ունեցող գյուղատնտեսությունը (լայնածավալ արտադրության տակ գտնվող >50 հա կամ > 10հա տարածքները, ինչպես օրինակ՝ ջերմոցները), որտեղ կիրառվում են պարարտանյութեր, թունաքիմիկատներ և այլ քիմիկատներ, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության պոտենցյալ վտանգ է պարունակում, և հետևաբար դրանց ազդեցությունների մեղմացման համար անհրաժշետ է բնապահպանական կառավարման պլանավորում (Բ կատեգորիայի միջոցառումներ), իսկ ավելի փոքրածավալ գործողությունները (<50հա) միջավայրի համար շոշափելի վտանգներ չեն պարունակում և հետևաբար հատուկ մշակված մեղմացուցիչ միջոցառումների կիրառություն չեն պահանջում (Գ կատեգորիայի միջոցառումներ): Ագրո-վերամշակող ձեռնարկություններին, կենդանիների բազմացմամբ զբաղվող տնտեսություններին և փոքրածավալ շինարարական աշխատանքներին բնորոշ են օդը և ջուրը աղտոտող արտանետումները, ինչպես նաև կոշտ թափոնները: Բ կատեգորայի ծրագրերի համար ԲԿՊ-ը պետք է հայտնաբերի այս ազդեցությունները, դրանք կառավարելու համար ձեռնարկվող մեղմացման միջոցառումները և բավարարման ենթակա կիրառելի չափանիշները՝ հիմնվելով պետական օրենքների, տեղական պահանջների և ՀԲ Աղտոտումների կանխարգելման և նվազեցման ձեռնարկը (Օդում արտանետումների և կեղտաջրերի արտահոսքի նկատմամբ պահանջների ամփոփագիր և Արդյունաբերության տվյալ ոլորտի ուղեցույցներ): Որտեղ ազգային/տեղական և Համաշխարհային բանկի կողմից ընդունված միջազգային չափանիշները տարբերվում են միմյանցից, կկիրառվեն առավել խիստ պահանջներ:

Ստորև թվարկված են շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող գործունեության հիմնական տեսակներից մի քանիսը, ինչպես նաև ուրվագծված է մեղմացման միջոցառումների լայնորեն կիրառելի կազմը: Այս միջոցառումները կարող են որոշ չափով վերանայվել և/կամ համալրվեն ենթածրագրային բնորոշ ԲԿՊ-ներ մշակելու

ընթացքում: Այս դեպքում ԲԿՊ-ները պետք է կազմվեն դրամաշնորհային ծրագրով ֆինանսավորվող առանձին Բ կատեգորայի միջոցառումների նպատակներին համաձայն:

Փոքրածավալ շինարարական աշխատանքներ

ՀԳՌԿՄ 2 ծրագրի շրջանակում դրամաշնորհային ենթածրագրերը կարող են աջակցություն ցուցաբերել մինչև 500 մ^2 ընդհանուր տարածքով առկա շինությունների վերանորոգման և նոր շենքերի կառուցման աշխատանքներին: Վերանորոգման/կառուցման աշխատանքների արդյունքում հնարավոր սոցիալական և բնապահպանական բացասական ազդեցությունները նվազագույնին հասցնելու համար լրացվելու է նմանատիպ ենթածրագրերի համար նախատեսված Փոքրածավալ շինարարական և վերանորոգման աշխատանքների Բնապահպանական Կառավարման Աղյուսակը՝ հիմք ընդունելով ԳԾԻԳ-ի առաջարկությունները (տես կից ներկայացված փաստաթուղթը): Այս գործիքով հնարավոր կլինի բացահայտել շինարարական աշխատանքների հետ կապված տվյալ տեղամասին բնորոշ բնապահպանական և սոցիալական պոտենցյալ վտանգները: Այն նաև տարբերակներ է առաջարկում այդ վտանգների մեղմացման միջոցառումների և դրանց իրականացման հետ կապված վերահսկողության պլանի մշակման համար: Եթե սոցիալական գնահատման արդյունքում հայտնաբերվեն օտարման և վերաբնակեցման հարցեր, ապա կմշակվի ,Վերաբնակեցման գործողությունների պլանե (ՎԳՊ):

Կաթի վերամշակման կենտրոններ

Կաթի վերամշակման կենտրոնները կարող են աղտոտել շրջական միջավայրը օրգանական թափոններով : Թափոնների պատշաճ կառավարման հիմնական սկզբունքը կայանում է թափոնների կուտակման նվազեցման և հնարավորության սահմաններում դրանց կրկնակի օգտագործման մեջ: Օրգանական թափոնների բազմաթիվ տեսակներ կարող են օգտագործվել որպես կենդանիների սնունդ անմիջապես կամ կոմպոստավորումից հետո: Օրգանական թափոնները չպետք է կուտակել մոտակայքում և պահել ջրային օբյեկտների անմիջական հարևանությամբ : _Օրգանական թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը պետք է նվազագույնի հասցվի գոմաղբը բետոնե հարթության կամ այլ հարմար հողածածկի վրա ծածկի տակ պահելով: Խորհուրդ է տրվում գոմաղբն ու կավային կախույթն օգտագործել որպես բնական պարարտանյութ: Հարմարության դեպքում, առաջարկվում է օրգանական թափոններն օգտագործել կենսագազի ավտոկլավի միջոցով վերականգնվող էներգիայի ստացման համար:

Կենդանիների օրգանական թափոնների կառավարում

Կենդանապահության, կաթնամթերքի արտադրության և թռչնաբուծության (որոնք ենթադրում են տնտեսություններում տնային կենդանիների կամ թռչունների պահում) ոլորտներում դրամաշնորհների հայտատուները պետք է ներկայացնեն իրենց կողմից կիրառվող օրգանական թափոններից ազատվելու ուղիները: Նման նկարագիրը անհրաժեշտորեն պետք է ներկայացնի հայտատուի կողմից սնուցիչների արտանետումը և վարակների տարածումը կանխարգելող առկա լավագույն փորձի կիրառությունը: Ավելին, արգելվում է գոմաղբ և կավային կախույթ լցնել անմիջապես հոսող ջրերի մեջ: Օրգանական թափոնները չպետք է կիտվեն և պահվեն ջրային տարածքների անմիջապես

հարևանությամբ: Օրգանական թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը պետք է նվազագույնի հասցվի գոմաղբը բետոնե հարթության կամ այլ հարմար հողածածկի վրա ծածկի տակ պահելով: Խորհուրդ է տրվում գոմաղբն ու կավային կախույթն օգտագործել որպես բնական պարարտանյութ: Հարմարության դեպքում, առաջարկվում է օրգանական թափոններն օգտագործել կենսագազի ավտոկլավի միջոցով վերականգնվող էներգիայի ստացման համար:

Սպանդանոցների և մսամթերքի արտադրության արտադրամասերի գործարկում

Անհրաժեշտ է, որ սպանդանոցները և մսամթերքի արտադրության արտադրամասերը ունենան թափոնների կառավարման պլաններ, որը կներառի տարհանումից առաջ մշակում և տարհանում: Թափոնների մշակումը պետք է իրականացնել սահմանված անվտանգության կանոններին համապատասխան, ինչպես նաև անհրաժեշտ է ՀՀ Բնապահպանության նախարարությունից ստանալ թափոնների պահեստավորման թույլտվություն: Սովորաբար կենսաբանական կոշտ թափոնները (կաշի, ոսկոր, եղջյուր, աղիքներ) չեն տարհանվում սպանդանոցներից և մսամթերքի արտադրության արտադրամասերից, այլ վերամշակվում են և օգտագործվում երշիկեղենի արտադրության և կենդանիների կերերի համար: Արյունը նույնպես ենթարկվում է վերոհիշյալ վերամշակման: Իսկ այլ տեսակի հեղուկ թափոնները տեղում ենթարկվում են կենսաջերմային մշակման, որը պետք է իրականացնել նախքան ընդհանուր կոյուղի տարհանելը:

Առողջության և անվտանգության հարցերն աշխատավայրում

Ակնկալվում է, որ դրամաշնորհային հայտերում պետք է նկարագրվեն ենթածրագրի իրականացման ընթացքում աշխատավայրի և անձնակազմի առողջության անվտանգության ապահովման համար ձեռնարկվող միջոցառումները: Կախված առաջարկվող գործողությունների բնույթից՝ առողջության և անվտանգության պլանները կարող են ընդգրկել հրդեհի կանխման միջոցներ, պաշտպանիչ արտահագուստի օգտագործում, օդափոխման/ջերմային ռեժիմի կարգավորման սարքավորումների տեղադրում, աշխատավայրի վարակազերծում, ընդհանուր սանիտարական նորմերի ապահովում և այլն: Դրամաշնորհային առաջարկներում առողջության և անվտանգության հետ կապված առաջարկված ուսուցումների կազմակերպումը ենթածրագրերի գնահատման ընթացքում հանդես կգա որպես առավելություն:

Դիմորդներից պահանջվող բնապահպանական փաստաթղթեր

Դրամաշնորհային ֆինանսավորման ներկայացրած ենթածրագրի նախագիծը պետք է ամբողջությամբ բավարարի ՀՀ Օրենսդրության պահանջները և համապատասխանի ՀԲ անվտանգության քաղաքականություններին: Ազգային օրենքի հետ համապատասխանությունը իր մեջ ներառում է, սակայն չի սահմանափակվում Պետական Էկոլոգիական Փորձաքննության դրական եզրակացության առկայությամբ, շինարարական թույտվությամբ, ջրի օգտագործման թույտվությամբ, աղտոտող նյութերի թույլատրելի խտություն պարունակող ջրերի արտահոսքի և մթնոլորտային արտանետումների թույլտվություններով:

Այն ենթածրագրերի համար, որոնք դասակարգվում են Բ բնապահպանական կատեգորիայի շարքին, պետք է մշակել տարածքին բնորոշ ԲԿՊ-ներ առաջարկված ձևանմուշի համաձայն (տե՛ս կից ներկայացված) և ներառել դրամաշնորհային ֆինանսավորման ներկայացվող վերջնական առաջարկի մեջ:

Այն գործունեությունների հայտերը, որոնք ենթադրում են թունաքիմիկատների կիրառում կամ կարող են հանգեցնել դրանց մեծ քանակությամբ օգտագործմանը, պետք է ներառեն վնասատուների դեմ պայքարի պլան՝ պատրաստված առաջարկված ձևանմուշի համաձայն (տե՛ս կից ներկայացված) և պետք է համապատասխանեն Վնասատուների դեմ Ինտեգրացված Պայքարի (ՎԴԻՊ) հիմնական սկզբունքներին:

Այն գործունեությունների հայտերը, որոնք ներառում են թույլատրելի տարածքում առկա շենքերի վերականգնում կամ նոր շենքերի կառուցում, դասակարգվում են բնապահպանական Բ կատեգորիայի շարքին և պետք է լրացնեն Փոքրածավալ վերանորոգման և շինարարական աշխատանքների բնապահպանական կառավարման ստուգիչ ցանկ (տես կից ներկայացված): Այս ստուգիչ ցանկում ներկայացված են լինելու շինարարական աշխատանքների պոտենցյալ բացասական ազդեցությունները և նրանց մեղմացման միջոցառումները, ինչպես նաև տեղեկություններ է պարունակելու վերանորոգման ենթակա շենքի կամ նոր շինարարության համար հատկացված հողատարածքի նկատմամբ սեփականության վերաբերյալ: Ավելին, տեղեկատվություն պետք է տրամադրվի նաև ներկայումս այդ շենքերի և/կամ հողատարածքների անօրինական օգտագործման վերաբերյալ: Դրամաշնորհային հայտով առաջարկված շինարարական աշխատանքները չպետք է հողի մշտական կորուստների կամ հողի կամ որևէ այլ մասնավոր սեփականություն մուտք ունենալու հնարավորության սահմանափակման և օգտագործման պատճառ հանդիսանան: Ժամանակավոր վերաբնակեցման հարցերի ծագման դեպքում ենթածրագրի համար կմշակվի ՎԳՊ, որը կհաստատվի տեղական իշխանությունների կողմից:

Բնապահպանական ուսումնասիրություն և ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ հայտերի հաստատում
Դրամաշնորհային հայտերի բնապահպանական ու սոցիալական գնահատում և դասակարգում

ԳՇԻԳ-ը և Քարտուղարությունը կիրակացնեն դրամաշնորհային հայտերի նախնական բնապահպանական ուսումնասիրություն հետևյալ նպատակներով. (i) բացահայտելու առաջարկվող գործողությունների հետ կապված բնապահպանական և սոցիալական ռիսկերը, (ii) այդ գործողությունները դասակարգելու ըստ բնապահպանական կատեգորիաների, և (iii) բացահայտելու հայտերի հետագա մշակման համար անհրաժեշտ բնապահպանական աշխատանքը և փաստաթղթերը:
Եթե առաջարկված գործողությունները չեն համապատասխանում ազգային օրենսդրությանը և ՀԲ երաշխիքային քաղաքականություններին, պահանջում են ՀԳՌԿՄ 2 ծրագրով արդեն գործարկված Համաշխարհային բանկի երաշխիքային քաղաքականություններից տարբեր քաղաքականության կիրառում կամ դասակարգվում են բնապահպանական Ա կատեգորիայի շարքին, ապա այս փուլում հայտը կմերժվի : ՀԲ սև ցուցակում ընդգրկված ծրագրերը (ալկոհոլի, ծխախոտի, զենքի արտադրություն),

ինչպես նաև հողի մշտական կորուստներ և վերաբնակեցման հարցեր նախատեսող ծրագրերը այս փուլում կմերժվեն :
Եթե հայտը դասակարգվում է բնապահպանական Գ կատեգորիային, ապա այն բնապահպանական տեսանկյունից և հետագա գործողություններ չեն պահանջվում :
Եթե հայտը դասակարգվում է բնապահպանական Բ կատեգորիային, ԳՇԻԳ-ը հրահանգավորում է հայտատուին հայտի հետագա ընթացքի համար պահանջվող լրացուցիչ փաստաթղթերի և այդ փաստաթղթերի ներկայացման ձևաչափի վերաբերյալ : Բարձր ռիսկայնություն ունեցող Բ կատեգորիայի գործողությունները կարող են բնապահպանական գնահատում պահանջել, միչդեռ Բ կատեգորիայի ցածր ռիսկայնություն ունեցող գործողությունների համար հարկ կլինի տեղանքին բնորոշ ԲԿՊ-ներ մշակել : ԲԿՊ պահանջվում է այն գործողությունների համար, որոնք ենթադրում են թունաքիմիկատների կիրառում կամ նրանց օգտագործման քանակի հավանական ավելացում :

Հայտերի բնապահպանական և սոցիալական գնահատումն ու ռիսկերի վերլուծությունը պետք է հիմնված լինի ենթածրագրի իրականացման վայրի և առաջարկված գործողությունների, այդ թվում՝ աշխարհագրական տեղանքի, էկոհամակարգի տեսակի ու լանդշաֆտի/բնատեսարանի, կարևոր բնական միջավայրերին մոտիկ գտնվելու (անտառներ, ճահիճներ և այլն), բնական ռեսուրսների օգտագործման պահանջարկի, օդի աղտոտման վտանգի, առաջարկվող տեխնոլոգիաների որակի ու անվտանգության, հողի սեփականության ու օգտագործման, առաջարկվող միջոցառումների տնտեսական հիմնավորման և, ըստ անհրաժեշտության, այլ հանգամանքների համապատասխան սոցիալական և բնապահպանական բնութագրիչների վրա: Հայտերը պետք է գենդերային տեսանկյունից խոցելի չլինեն և չեն կարող որևէ կետ պարունակել երեխաներին որպես աշխատուժ օգտագործելու և գենդերային անհավասարության վերաբերյալ:

Դիմում-հայտերի բնապահպանական դասակարգումը պետք է հիմված լինի ՀԲ OP/BP 4.01 *Բնապահպանական գնահատման* ուղեկցող սկզբունքների վրա, մասնավորապես.

Ա Կատեգորիա (բնապահպանական բարձր ռիսկեր) – երկարաժամկետ և տարբեր էական և/կամ անդառնալի ազդեցություններ շրջակա միջավայրի վրա ենթածրագրի իրականացման վայրի սահմաններում և դրանից դուրս: Ա Կատեգորայի ենթածրագրերը Դրամաշնորհով չեն ֆինանսավորվի:

Բ Կատեգորիա (բնապահպանական միջին ռիսկեր) – միջին աստիճանի ազդեցություններ շրջակա միջավայրի վրա իրականացման վայրի սահմաններում՝ անդառնալիության ցածր տոկոսով կամ ընդհանրապես առանց նման ռիսկի, պետք է կիրառել մեղմացնող միջոցառումներ: Անհրաժեշտ է մշակել ԲԿՊ և իրականացման ընթացքում մոնիտորինգի ենթարկել դրա պահպանումը:

Գ Կատեգորիա (բնապահպանական նվազագույն կամ ոչ մի ռիսկ) – աննշան կամ ոչ մի ազդեցություն շրջակա միջավայրի վրա: Գնահատումից հետո որևէ գործողության իրականացման անհրաժեշտություն չկա:

Բնապահպանական Բ Կատեգորիայի հավանական ենթածրագրերը ներառում են (սակայն կարող են չսահմանափակվել).

Սկզբնական Արտադրանք

- 50 և ավելի հա զբաղեցնող գյուղատնտեսություն, այգեգործություն, խաղողագործություն,
- ոռոգման համակարգերի անցկացում և/կամ գործարկում,
- 10 կամ ավելի հա զբաղեցնող ինտենսիվ գյուղատնտեսական արտադրություն (օրինակ, ջերմոցներ),
- բնական միջավայրերի օգտագործում (օր.՝ արոտավայրեր) գյուղատնտեսական նպատակներով,
- 5 և ավելի հա տարածության վրա թունաքիմիկատների օգտագործման կամ դրանց օգտագործման ձևի փոփոխություն առաջարկող որևէ ծրագիր:

Ագրովերամշակում

- պարենի, սերմերի, մանրաթելերի վերամշակում (տարեկան ավելի քան 200 տոննայից ավելի),
- ոչ-ալկոհոլային խմիչքների արտադրություն (տարեկան ավելի քան 5 միլիոն լիտր արտադրական հզորությամբ),
- պահածոների արտադրություն (տարեկան 3000 – 5000 տոննա հումքի վերամշակման հզորությամբ),
- գյուղատնտեսական արտադրանք և պարենի պահեստավորման հնարավորություններ (առևտրային մակարդակով),
- մուտքի (մուտքային) ճանապարհներ կամ կամուրջներ,
- թռչնաբուծական և անասնաբուծական տնտեսություններ առևտրային նպատակներով, որոնք տնային տնտեսության մակարդակից վեր են,
- կաթնամթերքի արտադրություն,
- կենդանիների մնացորդների վերամշակում,
- կաշվի արտադրություն,
- սպանդանոցներ և մսի փաթեթավորման արտադրամասեր,
- ծխեցվող կամ չորացվող սննդի արտադրություն,
- շաքարավազի արտադրություն,
- ածիկի/թթխմորի արտադրություն:

Բնապահպանական Գ Կատեգորիայի հավանական ենթածրագրերը ներառում են (սակայն կարող են չսահմանափակվել).

Սկզբնական Արտադրանք

- երկրագործություն, այգեգործություն, խաղողագործություն - 50 հա-ից պակաս տարածքների վրա,

- ինտենսիվ գյուղատնտեսություն (օրինակ ջերմոցներ) – 10 հա-ից պակաս տարածքների վրա,
- 50 հա-ից քիչ տարածք զբաղեցնող տնտեսությունների ոռոգման համակարգերի բարելավում:

<u>Ագրովերամշակում</u>

- պարենային սերմերի, մանրաթելերի վերամշակում (տարեկան 200 տոննա-ից պակաս հզորությամբ),
- ոչ-ալկոհոլային խմիչքների արտադրություն (տարեկան 5 միլիոն լիտրից պակաս արտադրական հզորությամբ),
- թռչնամսի և անասնամթերքի արտադրություն տնային տնտեսության մակարդակում,
- պահածոների արտադրություն (տարեկան 3000 տոննայից քիչ հումքի վերամշակում),
- գյուղատնտեսական արտադրանք և սննդի մթերում (տնային տնտեսությունների մակարդակում):

Լրացուցիչ Նշումներ

- Դրամաշնորհային ծրագրերը չեն աջակցում գենետիկորեն մոդիֆիկացված և այլ կենսաբանական վերափոխումներ առաջացնող նյութերի արտահանմանը կամ ներկրմանը, ինչպես նաև՝ թունաքիմիկատներ ներկրողներին:
- Դրամաշնորհային ծրագրերը չեն աջակցում ալկոհոլային խմիչքների և ծխախոտների արտադրությանը:
- Դրամաշնորհները կարող են բացառապես ծառայել այն թունաքիմիկատների ձեռքբերման և օգտագործման համար, որոնց օգտագործումը պաշտոնապես թույլատրված է Հայաստանում:

Բնապահպանական և սոցիալական գնահատում և դրամաշնորհային հայտերի հաստատում

Բնապահպանական կամ սոցիալական տեսանկյունից անհամապատասխան կամ Ա կատեգորիայի հայտերի մերժումը կատարվում է հայտերի մշակման գնահատման փուլում: Գ կատեգորիայի հայտերի բնապահպանական հաստատումը նույնպես կատարվում է այդ փուլում: Հետագա լրամշակման համար հաստատված Բ կատեգորիայի հայտերի համար անհրաժեշտ կլինի բնապահպանական գնահատում EIA հաշվետվություն կամ առանձին ԲԿՊ/ՎԴՊՊ ներկայացնելուց հետո և լրացուցիչ այլ անհրաժեշտ փաստաթղթեր, որոնք կպահանջվեն տվյալ ենթածրագրի համար: ԳԾԻԳ-ը և Քարտուղարությունը կվերանայեն այդ փաստաթղթերը և կգնահատեն դրանց որակը: Որոշ դեպքերում կարող է նպատակահարմար համարվել կատարել դաշտային այցելություն դեպի ենթածրագրի իրականացման վայր, եթե կարիք կա ճշտելու բնապահպանական փաստաթղթերում ներկայացված տեղեկությունները կամ այլ անհրաժեշտության դեպքում: EIA զեկույցը/ԲԿՊ ու այլ անհրաժեշտ բնապահպանական փաստաթղթերը ԳԾԻԳ-ի և Քքարտուղարության համար ընդունելի լինելուն պես, հայտի

բնապահպանական և սոցիալական գնահատումը կհամարվի ավարտված և կտրվի երաշխիքների հաստատումը:

Բնապահպանական և սոցիալական գնահատումը հանդիսանում է դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում դրամաշնորհի ֆինանսավորման վերաբերյալ որոշում կայացնելու բաղկացուցիչ մաս: Ոչ մի հայտ ֆինանսավորում չի ստանա, քանի դեռ բնապահպանական և սոցիալական գնահատումը չի ավարտվել և բնապահպանական հաստատում չի տրվել:

Բնապահպանական և սոցիալական համապատասխանության մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում

Եթե Բ կատեգորիայի ենթածրագիրը ֆինանսավորվում է դրամաշնորհային մեխանիզմով, ապա դրա իրականացման ընթացքում անհրաժեշտ կլինի անցկացնել բնապահպանական մոնիտորինգ՝ համաձայն բնապահպանական մոնիտորինգի պլանների: Ենթածրագրի մոնիտորինգի շրջանակը և մեթոդոլոգիան կախված կլինեն ենթածրագրի բնույթից, չափսից և պոտենցյալ ազդեցությունից և կբնութագրվի բնապահպանական մոնիտորինգի պլանում:

Դրամաշնորհ ստացողների պարտավորություններ

Դրամաշնորհ ստացողները պարտավոր են հետևել ԲԿՊ-ներին/ՎԴՊՊ-ներին ենթածրագրի իրականացման ողջ ընթացքում և աջակցել ԳԾԻԳ-ի կողմից ԲԿՊ/ՎԴՊՊ մոնիտորինգի անցկացմանը՝ տրամադրելով անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ, ինչպես նաև համագործակցել ԳԾԻԳ-ի ներկայացուցիչների հետ ենթածրագրերի իրականացման տարածքներ մոնիտորինգային այցելություններ կատարելու ժամանակ: Դրամաշնորհ ստացողներին այս պարտավորությունների հետ պետք է ծանոթացնել նախքան համաձայնագրի ստորագրումը:

Հաշվետվություններով պետք է հիմնավորվի, որ մեղմացնող միջոցառումներն ու մոնիտորինգն իրականացվում են համաձայն հաստատված պլանի և, որ յուրաքանչյուր բնապահպանական խնդիր ժամանակին կարգավորվում է (ազդեցությունը կանխարգելվում կամ նվազեցվում է)՝ առանց հակասելու գործող օրենսդրության բնապահպանական պահանջներին: Եթե գործողությունների բնապահպանական կարգավորումը հաշվետվությամբ չի հիմնավորվում, հնարավոր է բնապահպանական աուդիտի անցկացման կամ բնապահպանական կառավարման պլանի վերանայման անհրաժեշտություն առաջանա:

Դրամաշնորհային ծրագրի համակարգողի պարտավորություններ

ԳԾԻԳ-ը և Քարտուղարությունը հավասարապես պատասխանատու են իրականացման ընթացքում ենթածրագրերի բնապահպանական համապատասխանության ապահովման համար: Դրամաշնորհի համակարգողը կհետևի դրամաշնորհ ստացողի գործունեությանը բնապահպանական տեսանկյունից՝ համաձայն մոնիտորինգի պլանի, այնուհետև կկատարի համապատասխան արձանագրություն նշված մեղմացուցիչ միջոցառումների իրականացման վերաբերյալ այնքան հաճախակի, որքան անհրաժեշտ է մոնիտորինգի համար՝ ընտրված ցուցանիշի և համաձայնեցված ձևաչափի համապատասխանությունը պարզելու նպատակով: ԳԾԻԳ-ում մոնիտորիգնի

հետ կապված փաստաթղթերը պետք է լինեն կանոնակարգված և մատչելի, ինչպես նաև դրանք ըստ անհրաժեշտության պետք է տրամադրվեն ՀԲ-ին: Դրամաշնորհով ֆինանսավորվող միջոցառումների բնապահպանական մոնիտորինգի արդյունքներն ու դրանց վերլուծությունը պետք է տեղ գտնեն ՀԳՌԿՄ 2 ծրագրի իրականացման վերաբերյալ ԳԾԻԳ-ի կանոնավոր հաշվետվություններում:

Համաշխարհային Բանկի վերահսկողություն

ՀԲ կողմից կդիտարկվի և կգնահատվի դրամաշնորհային մեխանիզմների բնապահպանական և սոցիալական վերահսկողության որակը՝ որպես ՀԳՌԿՄ 2 ծրագրի կանոնավոր աջակցության բաղկացուցիչ մաս: Այն ներառում է ՀԳՌԿՄ 2 ծրագրի իրականացմանն աջակցող առաքելությունների ընթացքում ԳԾԻԳ-ի կողմից պատրաստված և ներկայացված բնապահպանական և սոցիալական մոնիտորինգի հաշվետվությունների ուսումնասիրություն, ինչպես նաև ԳԾԻԳ-ում դրամաշնորհային փաստաթղթերի դիտարկում և այցելություններ պատահական ընտրված ենթա-ծրագրերի իրականացման վայրեր:

ԲԿՊ ԵՎ ԴԱՇՏԱՅԻՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՁԵՎԱՆՄՈՒՇ

(փոքրածավալ շինարարական աշխատանքներից և ենթակառուցվածքների վերականգնումից բացի դրամաշնորհով ֆինանսավորվող այլ միջոցառումների համար)

Բնապահպանական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների պլան

Գործողություն	Ակնկալվող բացասական ազդեցություն	Մեղմացնող միջոցառում	Մեղմացման ցուցանիշ	Մեղմացնող միջոցառման նախնական արժեք	Մեղմացնող միջոցառման պատասխանատու
1.					
2.					
…					
n.					

Բնապահպանական մոնիտորինգի պլան

Գործողություն	**Ի՞նչ** (պարամետր պետք է մոնիտորինգի ենթարկվի)	**Որտե՞ղ** (պարամետր պետք է մոնիտորինգի ենթարկվի)	**Ինչպե՞ս** (պարամետր պետք է մոնիտորինգի ենթարկվի)	**Ե՞րբ** (Սահմանել հաճախականությունը/ կամ շարունակելի է)	**Ինչո՞ւ** (պարամետր պետք է մոնիտորինգի ենթարկվի	**Ո՞վ** (պատասխանատու մոնիտորինգի համար)
1.						
2.						
…						
n.						

Տեղանքի մոնիտորինգի ձևանմուշ

Դրամաշնորհի համարը և ենթածրագրի անվանումը				
Մոնիտորինգի իրականացման ամսաթիվը				
Մոնիտորինգ իրականացնող անձի անունը				
Գործողություն	**Ակնկալվող Բնապահպանական Ազդեցություն**	**Առաջարկվող Մեղմացնող Միջոցառումներ**	**Մեղմացնող միջոցառման իրականացման կարգավիճակ**	**Դրամաշնորհ ստացողին ուղղված նշումներ և առաջարկություններ**
1.				
2.				
3.				
n.				

Հավելված 2 Վնասատուների և Թունաքիմիկատների դեմ Պայքարի Ուղեցույց

Ծրագրի աշխատանքներում Վնասատուների դեմ պայքարի պլանի կիրառում (ՎԴՊՊ)

Սույն ուղեցույցը ներառում է հիմնական սկզբունքներ այն մասին, թե ինչպես պետք է ապահովել թունաքիմիկատների ռացիոնալ և անվտանգ մշակումը և կիրառումը: Ակնկալվում է, որ ՀԳՌԿՄ 2 ծրագրով նախատեսված դրամաշնորհի շրջանակներում գյուղատնտեսական հիմնական արտադրանքի շուկային առավելագույնս ինտեգրվելու համար անհրաժեշտ ռեսուրսներն ապահովելուց զատ, կխթանի ֆերմերների համար տարբեր ներդրումների ներգրավումը, այդ թվում նաև՝ թունաքիմիկատները: Որպես ծրագրով նախատեսվող ծախս դիտարկվում է գնումների և թունաքիմիկատների կիրառման ֆինանսավորումը: Ի հավելում, ծրագրի այլ տեսակի ներդրումները կարող են հանգեցնել թունաքիմիկատների օգտագործման փորձերի մեջ փոփոխությունների, այդ թվում նաև՝ թունաքիմիկատների լայն կիրառմանը, կամ թունաքիմիկատների ներմուծմանը, կամ այն մեթոդների կիրառմանը, որոնք մինչ այդ չէին օգտագործվել մարդկանց կողմից կամ տվյալ տարածքում: Հետևաբար, ծրագիրը սկիզբ է դնում Համաշխարհային բանկի Գործառնական Քաղաքականության Վնասատուների դեմ պայքարի կառավարմանը (4.09 կետ), ըստ որի վստահեցվում է, որ թունաքիմիկատների օգտագործումը վնաս չի պատճառում մարդկանց առողջությանը և շրջակա միջավայրին: Ամփոփելով՝ կարևոր է նշել.

- ֆերմերները թունաքիմիկատների օգտագործման վերաբերյալ կայացնում են հստակ ձևակերպված և գիտականորեն հիմնավորված որոշումներ,
- Վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի կառավարման սկզբունքները տարածվում են ծրագրի շահառուների շրջանում և հնարավորության սահմաններում իրականացվում, և
- թունաքիմիկատները մշակվում են համաձայն ազգային օրենսդրության, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի կարևորագույն սկզբունքներին լիովին համապատասխան:

Սույն ուղեցույցն իրականացնում է գործողությունների նախագիծ, ինչը կապահովի ԳՔ-ի 4.09 կետին համապատասխան ծրագրի իրականացումը, այդ թվում նաև՝ տարբեր իրավիճակներում կիրառելի անհրաժեշտ մեղմացուցիչ միջոցառումների, ԳԾԻԳ-ի և Ծրագրի շահառուների համապատասխան դերի և

պարտականությունների վերաբերյալ նկարագրությունները: Նախատեսվում են երեք սցենարներ.

ա) Ենթածրագրի շահառուները չեն օգտագործում ՀԳՌԿՄ 2 Ծրագրի միջոցները թունաքիմիկատների ձեռքբերման համար, այլ օգտագործում են այլ աշխատանքների իրականացման համար, որոնց արդյունքում թունաքիմիկատների օգտագործման ծավալը կմեծանա, կամ էլ թունաքիմիկատների օգտագործման փորձերի մեջ այլ փոփոխություններ կկատարվեն: Այս դեպքում ԳԾԻԳ-ը Ծրագրի շահառուներին կտրամադրի տեղեկատվություն և խորհրդատվություն վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի (ՎԴԻՊ), ինչպես նաև թունաքիմիկատների անվտանգ մշակման գծով (օր.՝ ծրագրի շրջանակներում թռուցիկներ պատրաստելու, իսկ ավելի խոշոր ծրագրերի դեպքում ուսուցումներ կազմակերպելու վերաբերյալ): Ենթածրագրի՝ Բ կատեգորիայի մաս կազմելու դեպքում բնապահպանական կառավարման պլանի (ԲԿՊ) անհրաժեշտություն կառաջանա, քանզի ԲԿՊ ներառում է յուրաքանչյուր վնասատուի/թունաքիմիկատի դեմ պայքարի կառավարման խնդիրները (այսինքն՝ առանձին ՎԴՊՊ անհրաժեշտություն չկա):

բ) Ենթածրագրի շահառուները օգտագործում են ՀԳՌԿՄ 2 ծրագրի միջոցները՝ ձեռք բերելու թունաքիմիկատներ 1 հա չգերազանցող տարածքում կիրառելու համար: Այս դեպքում դիմորդները պետք է նշեն, թե ինչ թունաքիմիկատներ են նրանք մտադիր ձեռք բերել և ինչ նպատակով (պետք է նշվի օգտագործման թույլտվություն ունեցող և հաստատագրված մշակաբույսերի/վնասատուների ցանկում), իսկ ԳԾԻԳ-ը կտրամադրի տեղեկատվություն և խորհրդատվություն վնասատուների դեմ ինտեգրացված պայքարի (ՎԴԻՊ), ինչպես նաև թունաքիմիկատների անվտանգ մշակման գծով (օր.՝ թռուցիկները կարելի է ձեռք բերել ՀԳՌԿՄ ծրագրից):

գ) Ենթածրագրի շահառուները օգտագործում են ՀԳՌԿՄ 2 ծրագրի միջոցները՝ ձեռք բերելու թունաքիմիկատներ 1 հա և ավելի մեծ տարածքում կիրառելու համար: Այս դեպքում դիմորդները, ինչպես նշված է ստորև, պետք է պատրաստեն հատուկ ենթածրագիր՝ ՎԴՊՊ, որպես դրամաշնորհային դիմում-հայտի մի մաս, իսկ ԳԾԻԳ-ը կապահովի, որ ՎԴՊՊ առաջնորդվի ՀՀ-ում օգտագործման համար թույլատրելի թունաքիմիկատների ,դրական ցանկովե և ներգրավի ՎԴԻՊ սկզբունքները և թունաքիմիկատների անվտանգ մշակման փորձերը:

Քաղաքականություն և Կանոնակարգման Համակարգ

ՀՀ-ի պետական քաղաքականության նպատակն է վերահսկել երկրում թունաքիմիկատների օգտագործումը՝ արգելելով ամենաթունավոր թունաքիմիկատների կիրառումը և տրամադրելով օգտագործման թույլտվություն ունեցող թունաքիմիկատների ,դրական ցանկըե: Թույլատրելի թունաքիմիկատների

ցանկը համաձայնեցվում է ՀՀ գյուղատնտեսության, առողջապահության և բնապահպանության նախարարությունների միջև և պաշտոնապես գրանցվում որպես *ՏԵՂԵԿԱՏՈՒ (երկրորդ լրամշակված հրատարակություն - 2007 թ.) բույսերի պաշտպանության նպատակով մշակաբույսերի վնասատուների, հիվանդությունների և մոլախոտերի դեմ կիրառվող թույլատրված քիմիական և կենսաբանական միջոցների վերաբերյալ:*

Օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների անվանացանկը նորմատիվ փաստաթուղթ է, հաստատվում է ,ՀՀ-ում բույսերի պաշտպանության քիմիական, կենսաբանական միջոցների և կենսաբանական ակտիվ նյութերի գրանցմանե միջգերատեսչական հանձնաժողովի կողմից և համապատասխանում է 2007 թ. թույլատրված թունաքիմիկատների ցանկին: Բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների պահպանմանը, փոխադրմանը, կիրառմանը և վաճառքին ներկայացվող անվտանգության պահանջները սահմանվում են ,Թունաքիմիկատների (պեստիցիդների) պահպանման, փոխադրման, կիրառման և վաճառքիե ՄՆ N 2.2.5-004-05 սանիտարական կանոններով և նորմերով:

Թունաքիմիկատների արդյունավետ և անվտանգ օգտագործման պետական վերահսկումն իրականացվում է Գյուղատնտեսության, Բնապահպանության և Առողջապահության նախարարությունների կողմից՝ յուրաքանչյուրն իր ոլորտի իրավասությունների շրջանակներին համապատասխան:

Վնասատուների դեմ ինտեգրացված պայքար

Վնասատուների դեմ ինտեգրացված պայքարը (ՎԴԻՊ) իրենից ներկայացնում է վնասատուների դեմ պայքարի ռազմավարություն, որը կիրառում է բազմաթիվ լրացուցիչ ռազմավարություններ, այդ թվում՝ մեխանիկական միջոցներ, ֆիզիկական միջոցներ, գենետիկ/ծագումնաբանական, կենսաբանական, մշակութային պայքար, ինչպես նաև քիմիական պայքար: Մինչ վնասատուների դեմ քիմիական պայքարը երկար ժամանակ հանդիսանում էր վնասատուների դեմ պայքարի գլխավոր գործիք, Խորհրդային միության ժամանակ նաև հանրային ֆինանսավորմամբ որոշ հետազոտություններ իրականացվեցին վնասատուների դեմ պայքարի կենսաբանական և մեխանիկական միջոռացումների կիրառման վերաբերյալ, որի արդյունքում կենսաբանական և մեխանիկական պայքարի սահմանափակ քանակությամբ ապրանքներ արտադրվեցին:

Հետ-խորհրդային ճգնաժամի ժամանակ և հետագայում՝ շուկայի տնտեսության զարգացման տարիներին, հնարավոր էր նաև ոչ պետական միջոցներով ընդլայնել

վնասատուների դեմ ինտեգրացված պայքարը: Սակայն ՎԴԻՊ վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը համեմատաբար ցածր էր, որի արդյունքում պահանջարկը ցածր էր, և չկար համապատասխան խթան մասնավոր ներդրումների համար: Այսպիսով, ՎԴԻՊ սկզբունքների վերաբերյալ տեղեկատվության տարածումը, ինչպես նաև ՎԴԻՊ կառույցների ընդլայնումը ծրագրի շահառուների շրջանում հանդիսանում է ԳԾԻԳ-ի հեռանկարային և կարևորագույն խնդիր:

ՀԳՌԿՄ 2 Ծրագրի Շրջանակներում Վնասատուների և Թունաքիմիկատների դեմ Պայքար

Սոցիալիստական անցյալում բերքի քանակն առավելագույնին հասցնելու համար խրախուսվում էր մեծ քանակության թունաքիմիկատների կիրառումը, մինչդեռ գյուղատնտեսության կայուն զարգացման սկզբունքները և նույնիսկ այն վտանգը, որ թունաքիմիկատների մնացորդները կարող են հայտնվել սննդամթերքի մեջ, անուշադրության էին մատնվում: Հետ Խորհրդային ճգնաժամի ընթացքում, երբ գյուղատնտեսական նեդրումների մատակարարման նախկին շղթան քանդվեց, ստեղծվեց թունաքիմիկատների ստվերային շուկա, որը տրամադրում էր անորակ, արգելված և/կամ չհավաստագրված ապրանքների մեծ քանակություն: Ներկայումս, ՀՀ-ում վնասատուների և թունաքիմիկատների դեմ արդյունավետ պայքարի նպատակը թույլատրելի թունաքիմիկատների ռացիոնալ և ճիշտ կիրառմանը հասնելն է՝ նվազեցնելով մարդկանց առողջությանն ու շրջակա միջավայրին սպառնացող վտանգները:

ԳԾԻԳ-ը առաջատար դեր կունենա ծրագրի կողմից ֆինանսավորվող աշխատանքների շրջանակներում թունաքիմիկատների օգտագործման համապատասխանությունը ՎԴԻՊ գլխավոր սկզբունքներին, ազգային օրենսդրությանը և միջազգային լավագույն փորձի հետ ապահովելու գործում: Թունաքիմիկատների կիրառումը հիմնականում ակնկալվում է Ծրագրի դրամաշնորհային բաղադրիչի շրջանակներում: ԳԾԻԳ-ը պատասխանատու կլինի դասակարգելու ենթածրագրով ստացված դիմումները և առանձնացնելու այն հայտերը, որոնք վերաբերում են թունաքիմիկատների ձեռքբերմանը կամ աջակցում այն աշխատանքներին, որոնք ուղղված են թունաքիմիկատների լայն օգտագործմանը կամ վնասատուների դեմ պայքարի փորձերի մեջ այլ կարևոր փոփոխություններ կատարելուն: Այնուհետև, ԳԾԻԳ-ը պետք է որոշի, թե որ դիմումների համար պետք է պատրաստվեն ՎԴՊՊ-ներ կամ վնասատուների և թունաքիմիկատների դեմ պայքարի հետ առչվող որ հարցերին պետք է ուշադրություն դարձվի: ԳԾԻԳ-ի այլ պարտականություններն են՝ երաշխավորել, որպեսզի միայն ,օգտագործման թույլտվություն ունեցողե թունաքիմիկատները ֆինանսավորվեն ծրագրի միջոցներով, օգնել դիմորդներին մշակելու ՎԴՊՊ-ներ ստորև ներկայացված ձևանմուշին

համապատասխան, բարելավել ծրագրի շահառուների կարողությունները (տեղեկատվության տարածում և տեխնիկական աջակցություն), ինչը նպաստում է թունաքիմիկատների անվտանգ օգտագործման ապահովմանը և գյուղատնտեսական գործելակերպերում ՎԴԻՊ ներգրավմանը, ինչպես նաև մոնիտորինգի ենթարկել այս բոլոր միջոցառումների իրականացումը և ազդեցությունը:

Դիմորդների կողմից ենթածրագրերի համար կպատրաստվեն դրամաշնորհով ֆինանսավորվող ենթածրագրային հատուկ ՎԴՊՊ-ներ, որը ենթադրում է թույլատրելի թվաքանակը գերազանցող թունաքիմիկատների ձեռքբերում: ՎԴՊՊ-ներում կնշվեն օգտագործման ենթակա թունաքիմիկատները և կնկարագրվեն վնասատուների դեմ պայքարի համար օգտագործվելիք փորձերը՝ շեշտը դնելով ՎԴԻՊ կարևորագույն էլեմենտների յուրացման գործում արտադրողներին խթանելու վրա: Ի աջակցություն այս նպատակի՝ ենթածրագրի հատուկ ՎԴՊՊ-երի նմուշներում պահանջվում է տեղեկատվություն տրամադրել մշակաբույսերի, տեղական պայմանների և առաջարկվող ստանդարտ և հատուկ թունաքիմիկատների օգտագործման հիմնապատճառի վերաբերյալ: Օրինակ՝ դիմորդներին խնդրում են նկարագրել, թե ինչպես նրանք կգնահատեն իրենց դաշտերում/այգիներում ֆիտոսանիտարական պայմանները և որոշեն, թե երբ են կիրառելու թունաքիմիկատները, և արդյոք նրանք պլանավորում են դիմել որևէ օժանդակ մասնագիտական օգնության թունաքիմիկատների մշակման ժամանակացույցը կազմելու համար: Թունաքիմիկատներից առաջացող ռիսկի և դրանց անվտանգ օգտագործման հանդեպ պահանջների մասին իրազեկվածության, գիտելիքների մակարդակները բարձրացնելու համար ՎԴՊՊ-երը կներառեն նաև մանրամասն տեղեկատվություն առ այն, թե ինչպիսին պետք է լինի թունաքիմիկատների ֆիզիկական տեսքը (հեղուկ, հատիկ, փոշի և այլն), ինչ տեխնիկա/սարքավորումներ պետք է օգտագործվեն դրանց կիրառման համար, և որտեղ և ինչպես մնացորդային թունաքիմիկատները և փաթեթավորման նյութերը պետք է պահվեն, պատրաստվեն, օգտագործվեն (այդ թվում նաև՝ պաշտպանիչ հագուստի և անհրաժեշտության դեպքում այլ անվտանգության սարքավորումների օգտագործում) և տարհանվեն:

Վնասատուների դեմ պայքարի կարգավորում

Վնասատուների դեմ պայքարի կարգավորումը ներառում է սկզբունքներ, որոնք վերաբերում են թունաքիմիկատների օգտագործման պատճառների հիմնավորմանը և ներառում են դրանց անվտանգ մշակման և օգտագործման մանրամասն նկարագրությունը: Ներկայումս գյողատնտեսությունում օգտագործվող թունաքիմիկատների տեսականին կազմում է մի քանի հարյուր միացություններ՝ հազարից ավել պատրաստուկային ձևերով:

Թունաքիմիկատների անվտանգ մշակման և կիրառման հիմունքներ

Թունաքիմիկատները հանդիսանում են բույսերի պաշտնապության համար շատ կարևոր միջոցներ, ինչը թույլ է տալիս ստանալ մեծ քանակության բարձրորակ բերք, չնայած թունավորության բարձր տոկոս պարունակող, ժամկետնանց կամ փոխարինող պատրաստուկների կիրառումը, ինչպես նաև առաջարկված թունաքիմիկատների ոչ ճիշտ օգտագործումը կարող են վնասակար լինել մարդկանց առողջության և բնական միջավայրի համար:

ԱՀԿ դասակարգմամբ ըստ տոքսիկության աստիճանի թունաքիմիկատները բաժանվում են չորս խմբի.

- խիստ թունավոր ՄՆ50 – 5-40 մգ/կգ,
- ուժեղ թունավոր ՄՆ50 – 50-400 մգ/կգ,
- միջին թունավոր ՄՆ50 –500-4000 մգ/կգ և
- թույլ թունավոր ՄՆ50 – 4000 մգ/կգ-ից ավել:

Ներկայումս ՀՀ-ում թունաքիմիկատների դեմ պայքարի անվտանգ փորձերի կիրառումը բավարար չէ (լավագույն դեպքում՝ թունաքիմիկատների օգտագործման կանոնակարգման գործադրումն է անհատ խոշոր տնտեսություններում): Թունաքիմիկատների կիրառման անցանկալի դեպքերից խուսափելու համար անհրաժեշտ է, որ թունաքիմիկատների հետ գործ ունեցող յուրաքանչյուր անձ ծանոթ լինի ստորև ներկայացված թունաքիմիկատների անվտանգ կիրառման հիմնական սկզբունքներին: Դրանք են՝

1. Թունանյութերի հետ գործ ունեցող անձինք նախապես պետք է տեղեկանան թունանյութերի հետ վարվելու կանոնների մասին, պարբերաբար ենթարկվեն բժշկական ստուգման, ապահովվեն անհրաժեշտ արտահագուստով, ռետինե ձեռնոցներով, պաշտպանական ակնոցներով, շնչադիմակներով:
2. Թունանյութերի հետ գործ ունենալ չի թույլատրվում 18 տարեկանից ցածր տարիքի երեխաներին, հղի, կրծքով կերակրող կանանց և բաց վերքեր ունեցող մարդկանց:
3. Թունանյութերով աշխատելու վայրում չի թույլատրվում պահել սննդամթերք, ջուր, անասնակեր և ընտանեկան օգտագործման առարկաներ: Թույներով աշխատելիս արգելվում է ոգելից խմիչքների գործածումը և աշխատանքից հետո արտահագուստը տուն տանելը:
4. Թունանյութերով աշխատելիս թունավորումից խուսափելու համար անհրաժեշտ է պահպանել անհատական անվտանգության կանոնները՝ աշխատանքի ժամանակ չուտել, չծխել, ուտելուց առաջ արտահագուստը հանել, ձեռքերը և երեսը լվանալ, բերանը ողողել, որի համար պետք է տեղում ունենալ ջուր, օճառ և սրբիչ:
5. Պտղատու ծառատեսակների և այլ մշակաբույսերի ծաղկելու ժամանակ թունանյութերի կիրառումը պետք է դադարեցնել: Մեղուների նկատմամբ

վտանգավոր թունանյութերի կիրառման ժամանակ աշխատանքներն սկսելուց 4-5 օր առաջ հարևան հողատերերին և գյուղապետին հարկավոր է նախազգուշացնել փեթակները տվյալ վայրից 5-6 կմ հեռացնելու կամ որոշ ընդմիջումներով արկանոցները փակ պահելու միջոցով պաշտպանելու համար:

6. Թունանյութեր տեղափոխելու ժամանակ արգելվում է թույների հետ փոխադրել սննդամթերք, անասնակեր կամ այլ ապրանքներ ու նյութեր: Թունանյութեր բարձող ու դատարկող անձինք պետք է ապահովվեն անհրաժեշտ արտահագուստով: Կտրականապես արգելվում է կողմնակի մարդկանց օգտվել թունանյութեր փոխադրող միջոցներից: Փոխադրումներն ավարտելուց հետո փոխադրամիջոցները պետք է խնամքով մաքրել, միշտ լվանալ, և հետո միայն օգտագործել այլ նպատակով:

7. Թունանյութերի պահպանման ժամանակ անհրաժեշտ է ունենալ առանձին պահեստ, բնակելի տներից, սննդի օբյեկտներից և անասնապահական ֆերմաներից առնվազն 200 մ հեռավորության վրա: Պահեստը պետք է լինի չոր, ընդարձակ, հարթ ասֆալտապատ կամ բետոնապատ հատակով: Թունանյութերի պահպանման լավագույն ջերմաստիճանը՝ 0–35^{0}C: Կտրականապես արգելվում է թունանյութերի տարան օգտագործել սննդամթերք, անասնակեր կամ ջուր պահելու և փոխադրելու համար:

8. Սերմերի ախտահանումը որպես կանոն պետք է կատարել բաց օդում, բնակելի շենքերից և ֆերմաներից հեռու: Սերմերի՝ թունանյութով հավասարաչափ ծածկելն ապահովելու համար անհրաժեշտ է ախտահանումը կատարել մեքենաների միջոցով՝ նվազեցնելով թունավորման հնարավորությունը: Ախտահանված սերմերը պետք է մեքենայից դատարկել պարկերի մեջ: Կտրականապես արգելվում է ախտահանված հատիկն օգտագործել իբրև կեր՝ մարդկանց, անասունների և թռչունների համար, անգամ՝ լվանալուց, օդափոխելուց կամ այլ կերպ թունանյութերը հեռացնելուց հետո: Ախտահանված սերմացու պարունակող պարկերի վրա պետք գրել ,ախտահանված էե և մինչև ցանելը պահել սննդամթերքից, անասնակերից առանձին: Արգելվում է ախտահանված սերմացուն դաշտ փոխադրել վնասված տարայով կամ մեքենայի թափքի մեջ շաղ տված վիճակում: Չի թույլատրվում կողմնակի մարդկանց նստել սերմերով լցված պարկերի վրա կամ ճանապարհորդել այդ փոխադրամիջոցներով:

9. Թունանյութերով մշակված վայրերում արգելվում է բանջար հավաքել կամ անասուններ արածեցնել: Մշակված այգիների և դաշտերի բերքից օգտվելու ժամանակ թունավորումից խուսափելու համար պետք է խստորեն պահպանել սպասման ժամկետները:

10. Մշակաբույսերի թունանյութերով մշակումը բարձր որակով կատարելու և մարդկանց թունավորման հնարավորությունը վերացնելու նպատակով մշակումները պետք է կատարել սրսկիչ և փոշոտիչ մեքենաներով: Ամեն կերպ խուսափել քիմիական մշակումները ձեռքով կատարելուց: Թունանյութերով մշակված

դաշտերում, այգիներում և այլ տեղերում պետք է տնկել նախազգուշացնող հայտարարություններ:

11. Թունավոր աշխատանքային հեղուկներ և գրավչանյութեր պատրաստելու աշխատանքն ավարտելուց հետո հարկավոր է պատրաստման վայրն անվտանգ դարձնել՝ փորելու կամ վարելու միջոցով:

12. Թունանյութերն օգտագործել առավոտյան և երեկոյան հով ժամերին, քամու արագությունը 3-4 մ/վրկ-ը չգերազանցելու դեպքում:

13. Գյուղատնտեսական մշակաբույսերի դաշտերում և բազմամյա տնկարկներում թունանյութեր կիրառելիս նրանց թունավոր ազդեցությունից մարդկանց անվտանգությունը ապահովելու համար անհրաժեշտ է խստորեն պահպանել մշակումից հետո դաշտային աշխատանքներ կատարելու համար տվյալ պատրաստուկի համար սահմանված ժամանակը:

Մոնիտորինգ և Գնահատում

ՀԳՌԿՄ 2 ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում ԳԾԻԳ-ը և Քարտուղարությունը պատասխանատու են ՎԴՊ պլանների իրականացումը մոնիտորինգի ենթարկելու, ինչպես նաև մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվություններ պատրաստելու համար: ԳԾԻԳ-ը պետք է սեզոնին առնվազն մեկ անգամ դաշտային այցելություն կատարի դեպի ենթածրագրի իրականացման վայր, ինչը պահանջում է ՎԴՊՊ-ի մշակում և իրականացում: Առավել ուշադրություն պետք է դարձնել այն ենթածրագրին, որի իրականացման ընթացքում առաջին դաշտային արցելության ժամանակ արձանագրվել են ՎԴՊՊ-ի պահանջներից էական շեղումներ: ԳԾԻԳ-ը և Քարտուղարությունը հետագայում էլ առաջատար դեր կունենան այն բանում, որ ապահովեն ՎԴՊ պլանների ժամանակին և պատշաճ ձևով պատրաստումը՝ վերանայելով հաշվետվությունները դրամաշնորհ ստացողների կարիքներին համապատասխան, ինչպես նաև տեղում ծրագրի իրականացման հետ կապված պարբերաբար ստուգումներ կատարեն:

ՎԴՊԿ-ներ պահանջող ենթածրագրերի համար ներկայացված դրամաշնորհային հայտերը պետք է ընդգրկեն հետևյալ կարևոր տեղեկատվությունը.

1) Արդյո՞ք նախաձեռնողը ներկայումս օգտագործում է կամ մտադիր է ձեռք բերել որևէ թունաքիմիկատ, որը ծրագրի ֆինանսավորման ենթակա չէ:

2) Արդյո՞ք նախաձեռնողը լիովին կամ մասամբ առաջնորդվում է քիմիական նյութերով վնասատուների դեմ պայքարի մոտեցումով և չի կիրառում ՎԴԻՊ այլ մոտեցումներ:

3) Արդյո՞ք նախաձեռնողն ունի (կամ չունի) համապատասխան կառույցներ թունաքիմիկատների անվտանգ պահեստավորումն ապահովելու համար:

4) Արդյո՞ք նախաձեռնողը մշակել է համապատասխան պլան թունաքիմիկատների ավելցուկի և դատարկ տարաների տարհանման համար:

5) Արդյո՞ք նախաձեռնողը կատարում է գրառումներ բնապահպանական գործողությունների կատարման կամ այլ կարևոր պարտավորությունների վերաբերյալ բնապահպանական տույժերի, իրավական որոշումների և այլ բաների վերաբերյալ, որոնք ուղղված են բնապահպանական ազդեցությունների, դրանց հետևանքների նվազեցմանը: Եթե այո, հարկ է մանրամասն բացատրել:

Այս կարևոր տեղեկատվությունն օգտագործվում է գոյություն ունեցող ճեղքվածքները, խոցելի հանգույցները և հնարավոր վտանգները բացահայտելու նպատակով, ինչը ԳՕԻԳ-ին հնարավորություն կտա նպատակային աջակցություն տրամադրել հայտատուներին ՎԴՊԿ-պլանների պատրաստման գործում:

Ենթածրագրին Բնորոշ Վնասատուների դեմ Պայքարի Պլանների Մշակման Ձևանմուշ

Ենթածրագրի անվանումը

Ենթածրագրի նկարագիր - *(սարքավորումների ձեռք բերման, շինարարական աշխատանքների իրականացման, առկա կառույցների քանդման, թունաքիմիկատների ձեռք բերման կամ օգտագործման համար անհրաժեշտ ներդրումների նկարագիր):*

Ենթածրագրի իրականացման վայրի նկարագիր - *ենթածրագրի իրականացման վայրի կամ դրան կից օգտագործվող հիմնական հողատարածքի նկարագիրը, բնակ. վայրերի տեղանշում (գյուղեր, քաղաքներ և այլն), հարևանությունը որևէ ջրային մակերեսների հետ (լճեր, գետեր և այլն), որևէ տարածք, որն իրենից ներկայացնում է մարդկային կամ բնապահպանական կամ մշակութային արժեք (հիվանդանոցներ, դպրոցներ, եկեղեցիներ, կառավարության կամ միջազգային համաձայնագրերի պահպանության տակ գտնվող բնական տարածքներ և այլն):*

Դրամաշնորհ ստացողի կողմից օգտագործման ենթակա թունաքիմիկատների ցանկ

№	Մշակաբույս	Վնասատու	Թունաքիմիկատ		Օգտագործման տարածք (հեկտար)	Օգտագործման թույլատրելի նորման (ծավալ/հեկտար)	Փաթեթի չափը (լիտր, կգ)	Ձեռքբերման ենթակա քանակ
			Հատուկ անուն	Ակտիվ բաղադրիչ				
1	2	3	4	5	6	7	8	9
1								
2								
3								
No.								

Թունաքիմիկատների ընտրության և օգտագործման հիմնապատճառը - *(նկարագրել օգտագործման տրամաբանությունը և թունաքիմիկատ(ների) ընտրության համար կատարած դիտարկումները, ինչպես նաև թունաքիմիկատների օգտագործման ժամկետների, չափաբաժինների անդ հաճախականության մեթոդաբանությունը:)*

Թունաքիմքիկատների օգտագործման մեթոդաբանությունը -*(նկարագրել թունաքիմիկատի ֆիզիկական վիճակը, ինչպես պետք է այն նախապատրաստել օգտագործման համար և լցնել սարքավորման/գյուղ.տեխնիկայի մեջ, ով պետք է կիրառի թունաքիմիկատները (տարիք, համապատասխան փորձ) և ինչ եղանակային պայմաններում, ինչ պաշտպանական հագուստ պետք է կրի անձնակազմը):*

Թունաքիմիկատների պահպանությունը և տարհանումը - *(նկարագրել այն հարմարությունները, ուր պահվելու են թունաքիմիկատները, մնացորդային թունաքիմիկատների և դատարկ փաթեթավորումների տարհանման միջոցները):*

Հավելված 3
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համառոտ ակնարկ *(հինգ էջից ոչ ավել)*

Ներածություն
Բնապահպանական վերահսկողության արդյունքներ
Ծրագրի նկարագիր
Այլընտրանքների վերլուծություն
Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մեթոդաբանություն
Բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալներ
Ակնկալվող բնապահպանական և սոցիալական ազդեցություններ
Ազդեցությունների մեղմացում
Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան

ԳԼՈՒԽ 1 – Ներածություն

ԳԼՈՒԽ 2 – Իրավական և քաղաքականության շրջանակ

ԳԼՈՒԽ 3 – Տեխնիկական և բնապահպանական չափանիշներ և կարգավորումներ

ԳԼՈՒԽ 4 – Ծրագրի նկարագիր

ԳԼՈՒԽ 5 – Այլընտրանքների վերլուծություն

ԳԼՈՒԽ 6 – Բնապահպանական վերահսկողություն

ԳԼՈՒԽ 7 - ՇՄՍԳ մեթոդաբանություն

ԳԼՈՒԽ 8 – Ֆիզիկական և բնական շրջակա միջավայր

ԳԼՈՒԽ 9 – Պոտենցիալ բնապահպանական և սոցիալական ազդեցություններ

ԳԼՈՒԽ 10 – Ազդեցությունների մեղմացում

ԳԼՈՒԽ 11 – Բնապահպանական և սոցիալական կառավարման պլան
(ինստիտուցիոնալ և զեկուցման կարգավորումներ)

Հավելված 1 – Բնապահպանական և սոցիալական կառավարման աղյուսակ (մեղմացման պլան և մոնիտորինգի պլան)
Հավելված 2 – Հանրային իրազեկում
Հավելված 3 - Հղումներ
Հավելված 4 – Քարտեզներ, գրաֆիկներ, նկարներ
Հավելված 5 -ՇՍԱԳ խմբի կազմը

Հավելված 4
Շինարարական և վերակառուցման փոքրածավալ աշխատանքների բնապահպանական կառավարման ստուգիչ-ցանկ

<u>ԲԿՊ ստուգիչ-ցանկի օգտագործման ընդհանուր ուղեցույցներ</u>

ԷԿԱ անվտանգության թիմը մշակել է ներկայիս ԲԿՊ-ի այլընտրանքային փաստաթուղթ ցածր ռիսկայնությամբ այնպիսի տոպոլոգիաների համար, ինչպիսիք են դպրոցի և հիվանդանոցի վերանորոգման աշխատանքները: Սա հնարավորություն է տալիս առողջապահության, կրթության և հանրային ծառայությունների ոլորտներում շենքերի կառուցման փոքրածավալ աշխատանքների համար ԲԿՊ-ների մշակման նպատակով կիրառել առավել նպատակասլաց մոտեցում: Ստուգիչ-ցանկի ձևաչափը մշակվել է ,հաջողված փորձի օրինակներե ներկայացնելու նպատակով: Այն նաև մշակվել է օգտագործման մեջ պարզ, ինչպես նաև անվտանգության պահանջներին համահունչ լինելու համար:

ԲԿՊ ստուգիչ-ցանկի միջոցով փորձ է արվում անդրադառնալ շինարարական աշխատանքների արդյունք հանդիսացող փոքր, տեղայնացված ազդեցությունների մեղմացման մոտեցումներին: Ընդունելի է, որ տվյալ ձևաչափով ներկայացվեն Բնապահպանական Կառավարման Պլանի (ԲԿՊ) կամ Բնապահպանական Կառավարման Հայեցակարգի (ԲԿՀ) հիմնադրույթները՝ Համաշխարհային բանկի Բնապահպանական Գնահատման պահանջները ԳՔ 4.01 կետին համապատասխան բավարարելու համար: Ներկայիս ստուգիչ-ցանկը պետք է որպես ուղեցույց կիրառվի փոքրածավալ աշխատանքներ կատարող կապալառուների համար, ինչպես նաև հանդես գա գնառաջարկի փաստաթղթերի բաղկացուցիչ մաս Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում փոքրածավալ շինարարական աշխատանքներ իրականացնող կապալառուների համար:

Ստուգիչ-ցանկը բաղկացած է երեք մասից.

Մաս 1 - ներառում է նկարագիր, որով բնութագրվում և մանրամասն շարադրվում են ծրագրի ինստիտուցիոնալ և օրենսդրական հիմնավորումները, ծրագրի տեխնիկական բովանդակությունը, կարողությունների զարգացման ծրագրի պոտենցիալ անհրաժեշտությունն ու հանրային խորհրդատվության գործընթացը (նկարագիրը չպետք է գերազանցի 2 էջը): Անհրաժեշտության դեպքում որպես լրացուցիչ տեղեկություն կարող են ներկայացվել կից փաստաթղթեր:

Մաս 2 - ներառում է բնապահպանական և սոցիալական վերանայման ստուգիչ-ցանկ, որտեղ գործողություններն ու պոտենցիալ բնապահպանական խնդիրները կարող են ստուգվել ,Այո/Ոչ պարզագույն ձևաչափով: Եթե որևէ գործողություն/խնդիր մեկնարկում է ,Այոե բառի նշումով, ապա հղում պետք է արվի հետևյալ աղյուսակին համապատասխան, որտեղ հստակ ձևակերպված են կառավարման և մեղմացուցիչ միջոցառումները:

Մաս 3 - ընդգրկում է շինարարության և ծրագրի իրականացման ընթացքում ձեռնարկվող գործողությունների մոնիտորինգի պլանը: Այն պետք է մշակվի Բանկի կողմից առաջարկվող Բ կատեգորիայի ծրագրերի և Բանկի պահանջներին բավարարող ԲԿՊ-ների համար ընդունելի ձևաչափով: Այս ստուգիչ-ցանկի նպատակներից է բխում, որ Մաս 2 և Մաս 3-ն ընդգրկվեն կապալառուների գնառաջարկի փաստաթղթերում, գնահատվեն գնառաջարկի ներկայացման ընթացքում և մանրակրկիտ վերահսկողության ենթարկվեն աշխատանքների կատարման ողջ ընթացքում:.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա) Ընդհանուր տեղեկություններ ծրագրի և շին.հրապարակի վերաբերյալ

Բ) Տեղեկություններ անվտանգության պահանջների վերաբերյալ

Գ) Մեղմացուցիչ միջոցառումներ

Դ) Մոնիտորինգի պլան

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ			
Երկիր	Հայաստան		
Ծրագրի վերնագիր	Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության ծրագիր		
Տեղանքին բնորոշ գործողությունների շրջանակ			
Ինստիտուցիոնալ կարգավորումներ (ՀԲ)	Խմբի ղեկավար:	Անվտանգության գծով մասնագետ Դարեջան Կապանաձե	
Իրականացման կարգավորումներ (ՀՀ)	Իրականացնող կառույց Գյուղատնտեսության նախարարություն	Աշխատանքների վերահսկող (tbd)	Աշխատանքների կապալառու (tbd)
ՏԵՂԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ			
Հաստատության անունը, որի տարածքը պետք է վերականգնվի			
Հաստատության հասցեն և տեղանքը, որի տարածքը պետք է վերականգնվի			
Ո՞ւմ է պատկանում հողը: Ո՞վ է օգտագործում հողը (պաշտոնական/ոչ պաշտոնական):			
Տեղանքի ֆիզիկական և բնական միջավայրի նկարագիր			
Նյութերի աղբյուրներից՝ հատկապես ագրեգատներից,			

ջրից, քարերից հեռավորությունն ու տեղանքը	
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ	
Պետական և տեղական ինչպիսի օրենսդրական կարգեր և թույլտվություններ են կիրառվում ծրագրի գործունեության համար	
ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ	
Երբ/որտեղ են իրականացվում հանրային իրազեկման գործընթացները:	
Կցված փաստաթղթեր	
Առդիր 1 – Տեղանքի քարտեզի նկար Առդիր 2 – Շինարարության թույլտվություն (ըստ անհրաժեշտության) Առդիր 3 – Շինարարական աղբի տարհանման թույլտվություն Այլ – ըստ անհրաժեշտության	

Աշխատանքների վերահսկողի, աշխատանքներ տրամադրողի (կապալառուի) մասին տեղեկություններ, ինչպես նաև առդիրները կտրամադրվեն ավելի ուշ, նախքան ընտրված աշխատանքներ մատուցողի մոբիլիզացումը տեղամասում

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ / ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ			
	Գործողություն/խնդիր	**Կարգավիճակ**	**Մեկնարկած Գործողություններ**
Արդյո՞ք շին.հրապարակում իրականացվող աշխատանքները ենթադրում են.	Ա. Շենքի վերակառուցում	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Ա
	Բ. Շինարարական նոր աշխատանքներ	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Ա
	Գ. Կեղտաջրերի անհատական մաքրման համակարգ	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Բ
	Դ. Պատմամշակութային արժեք ներկայացնող շինություններ և տարածքներ	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Գ
	Ե. Հողի ձեռքբերում	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Դ
	Զ. Վնասակար կամ թունավոր նյութեր[4]	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Ե
	Է. Ազդեցությունն անտառների և/կամ պաշտպանվող տարածքների վրա	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Զ
	Ը. Բժշկական թափոնների կառավարում/մշակում	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Ը
	Թ. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն	[ ] Այո [ ] Ոչ	Տես Մաս Թ

[4] Թունավոր/վնասակար նյութերը ներառում են, սակայն չեն սահմանաձակվում ասբեստով, թունավոր ներկերով, վնասակար լուծիչներով, կապարի սպիտակաղեղի թափոններով և այլն:

ՄԱՍ Գ - ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
0. Ընդհանուր պայմաններ	Տեղեկությունների տրամադրում և աշխատողների անվտանգություն	ա. Տեղական շինարարական և բնապահպանական տեսչություններն ու համայնքները տեղեկացվել են սպասվող միջոցառումների վերաբերյալ: բ. Հասարակությունն աշխատանքների վերաբերյալ տեղեկացել է նաև լրատվամիջոցների և/կամ հասարակական վայրերի միջոցով (ներառյալ աշխատանքների կատարման տարածքը): գ. Ձեռք են բերվել շինարարականն/կամ վերանորոգման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բոլոր օրինական թույլտվությունները: դ. Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները իրականացվեն անվտանգ և կանոնավոր կերպով, որոնք հատուկ նախատեսված են հարևան բնակիչների ու շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նվազեցնելու համար: ե. Աշխատողների ԱԱՍ (անձնական անվտանգության սարքավորումներ) պայմանները կհամապատասխանեն միջազգային լավագույն փորձին (ըստ անհրաժեշտության դիմակներ և անվտանգության ակնոցներ, անվտանգության գոտիներ և կոշիկներ) զ. Համապատասխան ցուցասյուների տեղադրումը շին.հրապարակում թույլ կտա աշխատողներին ծանոթանալ հիմնական կանոնների ու կանոնակարգերի հետ, որոնց պետք է հետևել:
Ա. Վերանորոգման ընդհանուր աշխատանքներ և/կամ շինարարական աշխատանքներ	Օդի որակ	ա. Ներքին վերանորոգման աշխատանքների ժամանակ առաջին հարկի վրա պետք է տեղադրվի աղբի իջեցման հատուկ հարմարանք: բ. Շինարարական աղբը պետք է պահվի վերահսկվող տարածքներում և ցողվի ջրով՝ գոյացած փոշին նվազեցնելու համար: գ.Պնևմատիկ հորատում կատարելիս/պատ քանդելիս առաջացած շինարարական փոշու տարածումը պետք է կանխվի ջրի շիթերի ցողումով և/կամ տարածքում համապատասխան ցանկապատերի տեղադրումով: դ. Շրջակա միջավայրը (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշու գոյացումը կանխելու համար: ե. Շին.հրապարակում շինարական թափոնների բացօթյա այրում չի իրականացվելու: զ. Շին. տեխնիկան երկարատև պարապուրդի չի մատնվի:

	Աղմուկ	ա. Շինարարության ընթացքում առաջացած աղմուկը թույլատրելի է միայն նախապես համաձայնեցված ժամերին: (a) բ. Աշխատանքի ընթացքում գեներատորների, օդի կոմպրեսորների և այլ մեխանիկական սարքերի շարժիչները պետք է ծածկված լինեն և տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու:
	Ջրի որակ	(a) ա. Շին.հրապարակում պետք է իրականացվի էրոզիայի և նստվածքի առաջացման դեմ պատշաճ վերահսկողություն, օրինակ՝ հակերի և / կամ տիղմից ցանկապատերի տեղադրում՝ շին.հրապարակից նստվածքի արտահոսքը և հարևանությամբ գտնվող գետերի աղտոտումը կանխելու համար:
	Թափոնների կառավարում	ա. Շինարարական և քանդման աշխատանքների արդյունքում առաջացած աղբի հիմնական տեսակների համար կհատկացվեն աղբի հավաքման և տեղափոխման ուղիներ ու տարածքներ: բ. Շինարարության և քանդման աշխատանքների արդյունքում գոյացած ոչ-օրգանական թափոնները կառանձնացվեն հիմնական աղբից, օրգանական, հեղուկ կամ քիմիական թափոններից հենց տեղում տեսակավորման միջոցով և կպահվեն համապատասխան կոնտեյներներում: գ. Շինարարական աղբը կհավաքվի ու պատշաճ կերպով կհեռացվի լիցենզավորված աղբահավաքների կողմից: դ. Թափոնների հեռացման մասին գրանցումները կպահվեն որպես դրանց պատշաճ տեղայնացման երաշխիք: (a) ե. Բոլոր հնարավոր դեպքերում կապալառուն պետք է կրկնակի անգամ օգտագործի պիտանի նյութերը (բացի ասբեստից):
Բ. Կեղտաջրերի անհատական մաքրման համակարգ	Ջրի որակ	ա. Շին.հրապարակում (տեղադրում կամ վերանորոգում) գոյացած կենցաղային թափոնների ու կեղտաջրերի հեռացման կարգը պետք է հաստատվի տեղական իրավասու մարմինների կողմից: բ. Նախքան ջրընդունիչ կայան թափվելը, կոյուղու անհատական համակարգերի կեղտաջրերը պետք է մաքրվեն՝ զտման արդյունքում ջրի որակի և կեղտաջրերի մաքրման համար պետականորեն հաստատված պայմաններին բավարարելու համար: գ. Կիրականացվի կեղտաջրերի մաքրման նոր համակարգերի (առաջ/հետո) մոնիտորինգ: դ. Շին.մեքենաներն ու տեխնիկան կլվացվեն միայն այդ նպատակով հատկացված տարածքներում, ուր ջրի հոսքի հետևանքով չեն աղտոտվի վերգետնյա բնական ջրամբարները:
Գ. Պատմական շինություն(ներ)	Մշակութային ժառանգություն	ա. Եթե տվյալ շինությունը ունի պատմական նշանակություն կամ գտնվում է պատմամշակութային արժեք ներկայացնող տարածքում, ապա ծանուցում պետք է արվի և

		համաձայնություն/թույլտվություն ստացվի տեղական իրավասու մարմիններից, իսկ շինարարական բոլոր տեսակի աշխատանքները պետք է իրականացվեն տեղական ու պետական օրենսդրությանը համապատասխան: բ. Պետք է երաշխավորել, որ հողափորման/քանդման կամ շինարարական աշխատանքների ընթացքում հայտնաբերված մշակութային գտածոները կամ այլ ,գտնված իրերը ուշադրության են արժանացել և գրանցվել, համապատասխան պաշտոնատար անձինք տեղեկացվել են այդ մասին, իսկ այդ գտածոները աշխատանքների ժամանակավոր դադարեցման կամ ընթացքի փոփոխության արդյունք են հանդիսացել:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ	ՑՈՒՑԱՆԻՇ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԻՉ-ՑԱՆԿ
Դ. Հողի ձեռքբերում	Վերաբնակեցում և հողի ձեռքբերման գնահատում	ա. Հայտատուն պետք է երաշխավորի, որ այն տարածքը, որի վրա իրականացվելու է ծրագիրը, պատկանում է համայնքին : բ. Ծրագրի իրականացման արդյունքում ենթածրագրի իրականացման տարածքից չպետք է տեղափոխվի որևէ այլ երրորդ կողմ, որը պաշտոնապես կամ ոչ-պաշտոնապես զբաղեցնում կամ օգտագործում է այդ տարածքը: Եթե հողի օտարում չէր ակնկալվում, սակայն անհրաժեշտ է, կամ օրինական/անօրինական հողօգտագործողների եկամուտները չէր ակնկալվում, որ կվտանգվեն, բայց դառնում է հնարավոր տարբերակ, ապա Բանկի Աշխատախմբի Ղեկավարը պետք է անմիջապես խորհրդակցի այդ հարցի շուրջ:
Ե. Թունավոր նյութեր	Ասբեստի կառավարում	ա. Եթե տարածքում առկա է ասբեստ, ապա այդ մասին պետք է հստակ նշագրում արվի: բ. Հնարավորության դեպքում ասբեստը պատշաճ ձևով կփակվի ու կկնքվի՝ կողմնակի ազդեցությունները նվազեցնելու համար: գ. Նախքան ասբեստի հեռացումը (եթե դա անհրաժեշտ է) այն կմշակվի խոնավացնող նյութով՝ ասբեստից առաջացած փոշու քանակությունը նվազեցնելու համար: դ. Ասբեստը կօգտագործվի ու կտեղափոխվի հմուտ և փորձառու մասնագետների կողմից: ե. Ասբեստը ժամանակավոր պահելու դեպքում թափոնները պետք է զգուշությամբ տեղադրվեն փակ տարաների մեջ և նշագրվեն: Անվտանգության միջոցներ կձեռնարկվեն անթույլատրելի տարհանումների դեմ: զ. Հեռացված ասբեստը կրկնակի օգտագործման ենթակա չէ:

	Թունավոր/վնասակար թափոնների կառավարում	ա. Թունավոր և վնասակար բաղադրություն ունեցող բոլոր նյութերի ժամանակավոր պահպանումը պետք է իրականացվի բաղադրության, հատկությունների և օգտագործման միջոցների վերաբերյալ տեղեկություններ տրամադրող պիտակով փակցված տարաներում: բ. Վնասակար նյութերով լցված տարաները պետք է տեղադրվեն հերմետիկ տարաների մեջ, որպեսզի դրանք չթափվեն: գ. Թափոնները պետք է տեղափոխվեն հատուկ լիցենզավորված բեռնատարներով և թափվեն համապատասխան լիցենզարվորված վայրերում: (a) դ. Թունավոր բաղադրանյութեր պարունակող ներկերն ու լուծիչները օգտագործման ենթակա չեն:
Զ. Վնասված անտառներ, ճահիճներ և/կամ պաշտպանվող տարածքներ	Պաշտպանություն	ա. Շին. տարածքի հարևանությամբ գտնվող բոլոր հայտնի բնական միջավայրերը, խոնավ հողերը և պաշտպանվող տարածքները ենթակա չեն վնասման կամ օգտագործման: Աշխատողներին կարգելվի որսորդության, կերի հայթայթման, անտառահատման և այլ վնասակար գործունեության ծավալումը: բ. Շին. տարածքի մոտակայքում գտնվող մեծ ծառերը պետք է հաշվառվեն և ցուցակագրվեն: Մեծ ծառերը պետք է նշվեն ու ցանկապատվեն, արմատային համակարգը պետք է պաշտպանվի, իսկ հասցվող ցանկացած վնաս՝ կասեցվի: գ. Հարակից խոնավ հողերն ու գետերը պետք է պաշտպանվեն շինարարական աղբից հակերի և տիղմից ցանկապատերի տեղադրման միջոցով՝ էրոզիայի և նստվածքների դեմ պատշաճ վերահսկողություն սահմանելու համար: դ. Հարակից և հատկապես պաշտպանվող տարածքներում չլիցենզավորված հորերի, քարհանքերի կամ աղբանոցների ստեղծումը արգելվում է:
Է. Բժշկական թափոնների տարհանում	Բժշկական թափոնների կառավարման ենթակառուցվածք	Համաձայն պետական կանոնակարգերի, կապալառուն պետք է երաշխավորի նորակառույց և / կամ վերանորոգված առողջապահական կառույցներում բժշկական թափոնների հեռացման համապատասխան ենթակառուցվածքի առկայությունը, որը ենթադրում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. • Հատուկ հարմարություններ բժշկական թափոնները (ներառյալ աղտոտված գործիքներ և մարդկային հյուսվածքներ կամ լուծույթներ) այլ թափոններից առանձնացնելու համար, և

		• Համապատասխան պահեստների առկայություն բժշկական թափոնների համար, և • Վերամշակման միջոցառումների տեղում իրականացման դեպքում համապատասխան պայմանների առկայություն:
Ը. Երթևեկության և հետիոտնի անվտանգություն	Շինարարական աշխատանքների կողմից հանրային երթևեկությանը և հետիոտներին հասցված ուղղակի կամ անուղղակի վտանգ	Համաձայն պետական կանոնակարգերի կապալառուն պետք է երաշխավորի շին.հրապարակի անվտանգությունն ու շինարարության հետ կապված երթևեկության կանոնակարգումը: Սա ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. • Ցուցայուների, նախազգուշացնող նշանների, արգելապատերի տեղադրում և երթևեկության ուղիների փոփոխություն: Շին. տարածքը ամբողջությամբ տեսանելի պետք է լինի, իսկ հասարակությունը նախազգուշացված՝ բոլոր հնարավոր վտանգների մասին: • Երթևեկության կանոնակարգման համակարգ և անձնակազմի ուսուցում ուղղված շին.հրապարակ մուտքի կարգավորմանը և այդ տարածքում առկա ծանրաբեռնված երթևեկությանը: Հետիոտների համար անվտանգ անցումների և խաչմերուկների ապահովում այն վայրերում, ուր շին. մեքենաների մուտքը թույլատրելի է: • Աշխատանքային ժամերի համապատասխանեցում տեղի երթևեկությանը, օրինակ՝ խուսափում տրանսպորտային հիմնական փոխադրումներից ընտանի կենդանիների տեղափոխության կամ երթևեկության թեժ ժամերին: • Ծանրաբեռնված երթևեկության կարգավորում հմուտ անձնակազմի կողմից՝ անվտանգ ու հարմար տեղափոխություն ապահովելու համար: • Վերանորոգման աշխատանքների ընթացքում ապահովել անվտանգ և անխափան մուտք դեպի գրասենյակային տարածքներ, խանութներ և բնակության վայրեր:
I Անբարենպաստ ազդեցություն խոցելի մարդկանց վրա (օրինակ, տարեց աղքատ	Որոշումների կայացման գործընթաց ռեսուրսների բաշխման նպատակով	Ա) Ապահովելով, որ կանայք և երիտասարդները դուրս չեն մնացել տղամարդկանց կողմից ղեկավարվող համայնքի որոշումների կայացման կառույցներից և գործընթացներից Բ) տրամադրել ուսուցում և տեղեկատվություն կանանց և երիտասարդներին և բարձրացնել նրանց մասնակցությունն ու ներգրավվածությունը ԱՄ ՍԿ-ներում Գ) Նախատեսվում է գենդերային հարցերով չհամակարգված տվյալների հավաքագրում

թոշակառուների, ֆիզիկական խնդիրներ ունեցող, այրիների կամ այն կանաց, ովքեր ընտանիքի գլխավորն են և այլն), ովքեր ապրում են այդ տարածքում:		նույնպես

ՄԱՍ Դ - ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Գործողություն	**Ո՞ր** ցուցանիշներն են ենթակա ստուգման	**Որտե՞ղ** են ստուգվում ցուցանիշները	**Ինչպե՞ս** են ստուգվում ցուցանիշները	**Ե՞րբ** են ստուգվում ցուցանիշները (ժամկետներ և հաճախականություն)	**Ինչու՞** են ստուգվում ցուցանիշները	**Ու՞մ կողմից** են ստուգվում ցուցանիշները (պատասխանատվություն)
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ						
1.						
2.						
n.						
ԳՈՐԾԱՐԿՄԱՆ ՓՈՒԼ						
1.						
2.						
n.						

Հավելված 5 – ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՍՏՈՒԳԻՉ ՑԱՆԿ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱՐ

Տեղանքը					
Կապալառուի անունը					
Վերահսկողի անունը					
Այցելության ամսաթիվը					
Շին. Աշխատանքների կարգավիճակը					
Ուսումնասիրության ենթակա փաստաթղթեր և գործողություններ	Կարգավիճակ				Նշումներ
Կապալառուն ունի բնական պաշարների արդյունահանման լիցենզիա	Այո	Մասնակի	Ոչ	Կիրառելի չէ	
Կապալառուն ունի ցեմենտի/ասֆալտի արտադրամասի գործարկման թույլտվություն					
Կաալառուն թափոնների վերջնական տարհանման համաձայնություն ունի					
Կապալառուն համաձայնագիր ունի ծառայություն մատուցողի հետ՝ տեղանքից տնային տնտեսության թափոնները տարհանելու համար					
Աշխատանքային տեղամասը ցանկապատված է և տեղադրված են նախազգուշացնող նշաններ					
Աշխատանքները չեն խոչընդոտում հետիոտների և մեքենաների երթևեկությանը, կամ ապահովվա Է ժամանակավոր այլընտրանքային մուտք					

Աշխատանքային ժամերին իրականացվում է հսկողություն					
Շին. Մեքենաներն ու սարքավորումները ստանդարդ տեխնիկական վիակում են (ոչ մի լրացուցիչ արտանետում և աղմուկ, վառելիքի կամ քսուքների արտահոսք չկա)					
Շին. Նյութերն ու թափոնները տեղափոխվում են ծածկ ունեցող մեքենայով					
Շին. Հրապարակը ջրվում է մեծ քանակությամբ փոշի առաջացնող աշխատանքների իրականացման դեպքում					
Կապալառուի ճամբարը կամ աշխատանքային բազան ցանկապատված են, նախատեսված են հատուկ տարածքներ թափոնների ժամանակավոր պահպանման և մեքենաների/սարքավորումների սպասարկման համար					
Կապալառուի ճամբարն ապահովված է ջրով և սանիտարական պայմաններով					
Կապալառուի ճամբարը կամ աշխատանքային բազան հագեցած են առաջին օգնության և հրդեհաշիջման պարագաներով					
Աշխատողները կրում են հատուկ արտահագուստ և պաշտպանիչ հանդերձանք՝ տեխնոլոգիական գործողություններ կատարելու համար (ձեռնոցներ, սաղավարտներ, շնչադիմակներ, ակնոցներ և այլն)					

Մեքենաների և սարքավորումների սպասարկումն ու լիցքավորումը վառելիքով կատարվում է չջրաթափանց մակերեսի վրա սահմանազատված տարածքում, որը կարող է պարունակել օպերատիվ և վթարային արտահոսքեր					
Մեքենաներն ու սարքավորումները լվացվում են բնական ջրային ռեսուրսների հեռու, այնպես որ արգելափակվի կեղտաջրերի արտահոսքը դեպքի բնական ջրային ռեսուրսներ					
Շին. թափոնները թափվում են բացառապես հատուկ հատկացված տեղամասերում					
Բնական շինանյութի արդյունահանումն իրականացվում է լիցենզիայով սահմանված հստակ պայմանների համաձան					
Ավելորդ նյութերը և հողը փորելուց առաջացած ավելցուկը պահվում են առանձին և օգտագործվում են տեղանքը վերակազնելու նպատակով					
Աշխատանքները պետք է դադարեցնել, եթե հայտնաբերվեն մշակութային արժեք ներկայացնող նյութեր. այդ մասին պետք է տեղեկացնել մշակութային ժառանգության պահպանմամբ զբաղվող պետական մարմիններին					
Տեղամասում ֆիզիկական գործողությունների ավարտից հետո, կապալառուի աշխատանքային բազան մաքրվում են և տարածքը համապատասխանեցվում է շրջակա					

միջավայրին					

Հավելված 6 – ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի» (ՀԳՌԿՄ 2) «Տարաբնակեցման քաղաքականության փաստաթղթի» և «Բնապահպանության և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթի» հանրային լսումները կայացել են երկու փուլով:

- Առաջին ոչ-պաշտոնական քննարկումները շահագրգիռ կողմերի հետ կազմակերպեվ ԳԾԻԳ-ի կողմից 2014թ-ի մարտի 11-ին: Քննարկման նպատակն էր ներկայացնել և քննարկել ՎՔՇՓ և ԲՍԿՇՓ ներկայացված նախնական մոտեցումները:
- Երկրորդ պաշտոնական լսումները տեղի ունեցան 2014թ-ի մարտի 21-ին երկու փաստաթղթերի հայերեն և անգլերեն տարբերակների հրապարակայնացումից հետ:

Ոչ-պաշտոնական իրազեկում

Ամսաթիվ: 2014թ-ի մարտի 11
Վայր: Երևան, «Օրհուս» կենտրոն – Բնապահպանության հանրային տեղեկատվական կենտրոն, ՀՀ ԲՆ
Ժամը: 12:00 - 14:30

Օրակարգ:

1. «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման» գրասենյակ (ԳԾԻԳ) պետական հիմնարկի տարաբնակեցման գծով խորհրդատուի կողմից մշակված ՎՔՇ փաստաթղթի ներկայացում և քննարկում
   Ներկայացրեց – Զարուհի Հայրապետյան

   Վերաբնակեցման գծով խորհրդատու, ՀԳՌԿՄ 2 ծրագրի նախապատրաստական թիմի անդամ

2. Բնապահպանության և սոցիալական կառավարման մասնագետի կողմից մշակված ԲՍԿՇՓ ներկայացում և քննարկում
   Ներկայացրեց – Ալիսա Սավադյան

   Բնապահպանության և սոցիալական հարցերով խորհրդատու, ՀԳՌԿՄ 2 ծրագրի նախապատրաստական թիմի անդամ

Հանդիպումը կայացել է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական տեղեկատվության հասարակական «Օրհուս» կենտրոնում: Ընդհանուր առմամբ 48 շահագրգիռ կողմեր են մասնակցել քննարկմանը՝ այդ թվում, ՀՀ գյուղատնտեսության և ՀՀ բնապահպանության նախարարությունների, ՀՀ մարզերի գյուղապետերի, ՀՀ գյուղատնտեսության նախարարության ենթակա գիտական կենտրոնների (ԳԿ), ԳԾԻԳ ՊՀ, մարզային աջակցության թիմերի (ՄԱԹ), հասարակական կազմակերպությունների (ՀԿ), անասնապահությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների և «Արոտօգտագործողների միություն» Սպառողական կոպերատիվների (ԱՄ ՍԿ), անկախ գնահատող կազմակերպությունների, Քաղաքային կայուն զարգացման ԾԻԳ-ի, Հյուսիս-հարավ ներդրումային միջանցքի ԾԻԳ-ի ներկայացուցիչներ (մասնակիցների ցուցակը ներկայացված է ստորև):

Բացման խոսք. ԳԾԻԳ ՊՀ տնօրեն Գ. Խաչատրյան

Գ. Խաչատրյանը ամփոփ ներկայացրեց «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ՀԳՌԿՄ) առաջին և երկրորդ ծրագրերը և խոսեց ծրագրերի հիմնական նպատակների, խնդիրների և իրականացման մեխանիզմների, ինչպես նաև ՀԳՌԿՄ առաջին ծրագրում ընդգրկված և ՀԳՌԿՄ երկրորդ ծրագրում ընդգրկվելիք բաղադրիչներով նախատեսված աշխատանքների վերաբերյալ: Ծրագիրը ներկայացնելու հետո պրն. Խաչատրյանը պատասխանեց հարցերի՝ կապված նոր միջոցառումների և ՀԳՌԿՄ երկրորդ ծրագրի հետ առնչվող կարևոր մանրամասների հետ:

Լսեցին.

1. **Կ. Թորոսյանին** – ՀԳՌԿՄ առաջին ծրագրի 1-ին բաղադրիչի համակարգող
2. **Վ. Ղուկասյանին** – ՀԳՌԿՄ առաջին ծրագրի 3-րդ բաղադրիչի համակարգող
3. **Ս. Ծառուկյանին** - ՀԳՌԿՄ առաջին ծրագրի 2-րդ բաղադրիչի համակարգող

Համակարգողները համառոտ ներկայացրեցին բաղադրիչների խնդիրները, ինչպես նաև ՀԳՌԿՄ առաջին և երկրորդ Ծրագրերում ընդգրկված բաղադրիչների գործառույթների և նպատակների տարբերությունները:

<u>Զ. Հայրապետյանը ներկայացրեց ՀԳՌԿՄ 2 ծրագրի ՎՔԾ փաստաթուղթը</u>

Փաստաթղթի նախագծի ներկայացումից հետո հետևյալ խնդիրները բարձրացվեցին.

1. ՀԿ-ների ներկայացուցիչները բարձրացրեցին ծրագրի իրականացման ընթացքում ՀԿ-ների մասնակցության համար ՎՔԾ փաստաթղթով սահմանված սահմանափակ գործառույթների խնդիրը:

2. Գնահատման փորձագետները կարևորեցին որոշ անհամապատասխանություններ, որոնք առկա են մշակված գնահատման մեթոդաբանության և Ստանդարտների և գնահատման ՀՀ օրենքի, հողի գնահատման մոտեցման միջև:
3. Տարաբնակեցման գծով մասնագետն ուշադրություն դարձրեց գնահատման մատրիցայի վրա և առաջարկեց վերանայել իրավաբական հողերի և շինությունների սեփականատերերին տրվող փոխհատուցման մոտեցումները՝ համաձայն ՀՀ օրենքների և կարգավորումների:

Գրանցված արձագանքը ոջունվեց ԳԾԻԳ-ի կողմից և բոլոր բարձրացված հարցերը համապատասխանաբար արտացոլվեցին փաստաթղթում: Մասնավորապես, ինչ վերաբերում է կետ 1-ին, ապա «Հասարակական կազմակերպություններ» 2.6 ենթակետ է ավելացվել գլուխ 2-ում (Ինստիտուցիոնալ շրջանակներ), որտեղ ՀԿ-ների ներգրավվածությունը առավել հստակեցվել է: ՀԿ-ները նաև ավելացվել են Աղյուսակ 1-ում՝ վերաբնակեցման և վերաբնակեցման խնդիրների հետ կապված հիմնական գործող կողմերի նկարագրում: Ինչ վերաբերում է կետ 2-ին, ապա գնահատման մեթոդաբանությունը նորից է մշակվել՝ համաձայն լսումների ընթացքում արված նշումների: Ինչ վերաբերում է կետ 3-ին, ապա գնահատման մատրիցան վերանայվել է համաձայն ՀՀ օրենքների և կանոնակարգերի և լրացուցիչ 15% փոխհատուցում է ավելացվել վերաբնակեցված հողերի և կառույցների դիմաց:

<u>Ալիսա Սավադյանը ներկայացրեց ՀԳՌԿՄ 2 ծրագրի ԲՍԿՇՓ</u>

Ներկայացվեցին ծրագրի զարգացման նպատակն ու ԲՍԿՇՓ հիմնական սկզբունքները: Սահմանավեցին ՀԳՌԿՄ 2 ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի հնարավոր բնապահպանական ազդեցություններն ու դրանց մեղմացման միջոցառումները: Մասնավորապես, նշվեցին ենթակառուցվածքային զարգացման ենթածրագրերի հետ առնչվող բնապահպանական ռիսկերը, մեղմացուցիչ միջոցառումների պարտադիր մշակման ու յուրաքանչյուր ենթածրագրի մոնիտորինգի պլանները: Ալիսա Սավադյանը հստակեցրեց ԲՍԿՇՓ-ի վերջնականացման գործընթացը՝ ներառյալ հանրային լսումները, որը տեղի կունենա 2014թ-ի մարտի 21-ին: Նշվեց, որ փաստաթղթի վերջնական տարբերակը կտեղադրվի ԳԾԻԳ-ի էլ. Կայքում, ինչպես նաև ՀԲ Infoshop-ի միջոցով՝ վերջնական հաստատում ստանալուց հետո:

Տիկին Սավադյանը նշեց, որ փաստաթղթի հանրայնացման նպատակն է տեղեկացնել հանրությանը ՀԳՌԿՄ 2 ծրագրի ԲՍԿՇՓ նախագծի վերաբերյալ, ինչպես նաև ստանալ կարծիքներ ու առաջարկություններ:

Փաստաթղթի նախագծի նախնական ներկայացումից հետևյալ հարցերը բարձրացվեցին.

- Ինչպես կարող են ՀԿ-ներն ու շահառու համայնքները առավել ակտիվ ձևով մասնակցել ծրագրի իրականացման ընթացքում բնապահապանակն ազդեցության մեղմացման միջոցառումների վերահսկման գործընթացին:
- Որտեղ, որ տեղամասում կամ որ թերթում բնապահպանության մասին ողջ տեղեկատվությունը (ԲԿՊ, հաշվետվություններ) կիրապարակվի ծրագրի մեկնարկից հետո:

Բարձրացված հարցերին պատասխանեց ԳԾԻԳ-ի տնօրենը: Նա խրախուսեց տեղական համայնքների մասնակցությունը կապալառուների կողմից իրականացվող աշխատանքներին այն ոլորտները վերահսկելու տեսանկյունից, որոնք տեսանելի են: Սա ներառում է տեղանքներում թափոնների պահումն ու ժամանակին հեռացումը շինարարական տարածքներից, տեղական ճանապարհների պահապնումը շինարարական նյութերից և աղբից և գործունեության այլ նմանատիպ ցուցանիշներ, որոնք ուղղակիորեն ազդում են համայնքների վրա: Եթե խնդիրներ ծագեն, ապա ծրագրից ադզեցություն կրող անձինք կարող են՝ (i) կապ հաստատել կապալառուի ղեկավարության հետ՝ ԳԾԻԳ-ը կերաշխավորի շինարարության կապալառուի կոնտակտային տվյալները փակցված լինեն շին. հրապարակում; և/կամ կապ հաստատեն ԳԾԻԳ-ի հետ՝ օգտվելով բողոքարկման մեխանիզմներից, որը նույնպես պետք է պարտադիր կերպով ապահովվի ԳԾԻԳ-ի կողմից: ԳԾԻԳ-ի տնօրենը և բնապահպանության գծով խորհրդատուն նշեցին, որ նեթակառուցվածքային ենթածրագրերի համար պետք է մշակվեն բնապահպանական կառավարման պլաններ (ԲԿՊներ), որոնցում պետք է հստակեցվեն, թե աշխատանքների ընթացքում ինչ մեղմացնող միջոցառումներ պետք է կիրառվեն: Այդ ԲԿՊ-ների նախագծերը կտեղարդվեն ԳԾԻԳ-ի էլ. կայքում և հասանելի կլինեն տեղական համայնքների կողմից դիտողություններ կատարելու համար:

Մասնակիցների ցանկ

###	Անուն, ազգանուն	Պաշտոն	Կոնտակտային տվյալներ
1	Մարինե Մուխսյան	ԳՇԻԳ ՊՀ Արագածոտնի ՄԱԹ-ի համակարգողի օգնական	094 88-76-89
2	Արտակ Խաչատրյան	ԳՇԻԳ ՊՀ Շիրակի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-41
3	Համլետ Պետրոսյան	ՀՀ Շիրակի մարզ, գյուղ Բասեն, համայնքի ղեկավար	091 03-23-01
4	Զեռվ Վարդանյան	«Շենակերտ – 11» կոպերատիվի նախագահ	091 96-96-23
5	Լիա Ասատրյան	Բնապահպանական ծրագրերի խորհրդատու	093 42-40-79
6	Վահան Ղուկասյան	ԳՇԻԳ ՊՀ 3-րդ բաղադրիչի համակարգող	091 01-35-15
7	Հայկ Կարապետյան	ԳՇԻԳ ՊՀ Իրավաբան	091 01-93-95
8	Մանվել Հարությունյան	ՀՀ Արագածոտնի մարզ, Լեռնապար համայնքի ղեկավար	093 51-20-95
9	Նունե Սարուխանյան	«Կանաչ արահետ» ՀԿ	091 43-82-25
10	Մովսես Մովսիսյան	ՀՀ Շիրակի մարզ, Լեռնակերտ համայնքի ղեկավար	094 82-15-51
11	Արմենակ Հովհաննիսյան	ԳՇԻԳ ՊՀ 3-րդ բաղադրիչի առաջատար մասնագետ	077 31-07-03
12	Հարություն Արտաշեսյան	Շիրակի ՄԱԹ-ի համակարգողի օգնական	077 85-96-85
13	Ռազմիկ Սահակյան	«Սննդամթերքի անվտանգության ռիսկերի գնահատման և վերլուծության» գիտական կենտրոնի կերարտադրության բաժնի վարիչ	093 78-45-06
14	Արթուր Կարապետյան	ՀՀ Արագածոտնի մարզ, Նորաշեն համայնքի ղեկավար	093 22-12-72
15	Արծրունի Կարապետյան	ՀՀ Արագածոտնի մարզ, Նորաշեն համայնքի կոպերատիվի նախագահ	093 77-76-07
16	Սոնա Ծառուկյան	ԳՇԻԳ ՊՀ 2-րդ բաղադրիչի համակարգող	091 01-35-28
17	Իռենա Առուստամյան	ԳՇԻԳ ՊՀ մոնիտորինգի մասնագետ	091 01-93-99
18	Գայանե Սարգսյան	ՀՀ ԳՆ ԲԲՏՄ գիտական կենտրոնի տնօրեն	093 57-62-05
19	Կարեն Թորոսյան	ԳՇԻԳ ՊՀ 1-ին բաղադրիչի համակրգող	091 46-44-42
20	Ալիսա Սավադյան	ԳՇԻԳ ՊՀ	091 20-42-15

		Բնապահպանության գծով խորհրդատու	
21	Արմեն Վանյան	ԳԾԻԳ ՊՀ փոխտնօրեն	091 21-73-32
22	Զարուհի Հայրապետյան	ԳԾԻԳ ՊՀ Վերաբնակեցման գծով խորհրդատու	095 23-59-50
23	Լալա Թևոսյան	Հայկական Հասարակական Տեխնոլոգիական Ակադեմիա, էկոլոգ	099 22-06-42
24	Հրաչյա Սահակյան	ՀՀ Լոռու մարզ, Լորուտի գյուղապետ	093 74-72-44
25	Նորիկ Մկրտումյան	ՀՀ Լոռու մարզ, Քարինջի գյուղապետ	094 17-07-57
26	Արա Գրիգորյան	Դսեղ կոպերատիվի նախագահ	094 99-07-88
27	Անդրանիկ Կարապետյան	ԳԾԻԳ ՊՀ Լոռու ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-44
28	Խորեն Բաղալյան	ԳԾԻԳ ՊՀ Գեղարքունիքի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-26
29	Ռուբիկ Ղուկասյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշենի գյուղապետ	094 20-89-71
30	Ռևիկ Գևորգյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշենի կոպերատիվի նախագահ	093 98-87-44
31	Կարեն Դարբինյան	ՀՀ Տավուշի մարզ, Չինչինի գյուղապետ	093 69-17-49
32	Արամ Նիգարյան	Տավուշի մարզ, Նավուրի գյուղապետ	093 46-36-28
33	Պավել Ցուցուլյան	ԳԾԻԳ ՊՀ Տավուշի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-51
34	Գառնիկ Քոչարյան	Տավուշ կոպերատիվի նախագահ	093 04-29-24
35	Արմեն Սաղաթելյան	ԳԱԱ էկոկենտրոնի տնօրեն	091 41-80-29
36	Արթուր Պետրոսյան	ՀՀ ԳՆ Անտառաբուծության բաժնի պետ	095 56-52-91
37	Կամո Խաչատրյան	ԳԾԻԳ ՊՀ 1-ին բաղադրիչի գլխավոր մասնագետ	091 41-36-74
38	Սիրք Գյուլբուդաղյան	ԵԿՆ ԾԻԳ	099 33-33-09
39	Աշոտ Միրզոյան	«Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ, նախագահ	093 36-73-27
40	Արմինե Եդիգարյան	Հյուսիս-Հարավ ԾԻԳ	091 72-72-45
41	Սոնա Պողոսյան	Հյուսիս-Հարավ ԾԻԳ	093 59-86-85
42	Տիգրան Գրիգորյան	ԱՓԹԱՅՄ ՍՊԸ, Ծրագրի ղեկավար	093 90-05-04
43	Մարգարիտա Կարիմյան	Հանուն կայուն մարդկային զարգացման ՀԿ	093 54-06-97
44	Յուրիկ Բաղդասարյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Լանջաղբյուրի գյուղապետ	055 88-98-38

45	Գագիկ Խաչատրյան	ԳԾԻԳ ՊՀ տնօրեն	010 29-73-01
46	Էմմա Մկրտչյան	ԳԾԻԳ ՊՀ խորհրդատու	099 01-70-30
47	Ռուզաննա Ոսկանյան	Քաղաքային կայուն զարգացման ԾԻԳ, բնապահպանության մասնագետ	094 08-30-88
48	Տատյանա Սարգսյան	Մոնիթորինգի և գնահատման մասնագետ, Քաղաքային կայուն զարգացման ծրագիր	055 58-25-08

Նկարներ

ԲՍԿՇՓ և ՎԿՇՓ ներկայացում

Քննարկումներ, նշումներ, հարցեր և պատասխաններ

Պաշտոնական հանրային լսումներ
Ամսաթիվ՝ 21 մարտի, 2014 թ.
Վայրը՝ Բնապահպանության նախարարության Բնապահպանական տեղեկատվության հասարակական «Օրհուս» կենտրոն
Ժամը՝ 12:30 -14:30

Սոցիալական և բնապահպանական և Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթերի նախագծերի հայերեն և անգլերեն լեզուներով պաշտոնական հրապարակումից հետո (14 մարտի, 2014թ.) Բնապահպանական տեղեկատվության հասարակական «Օրհուս» կենտրոնում ԳԾԻԳ-ի կողմից կազմակերպվեցին պաշտոնական հանրային լսումներ: Հանրային լսումներին ակտիվորեն մասնակցեցին շուրջ 36 շահագրգիռ կողմեր և շահառուներ, այդ թվում՝ ներկայացուցիչներ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունից, ՀՀ մարզերի գյուղապետեր, ԳԾԻԳ ՊՀ մարզային աջակցության թիմերի(ՄԱԹ), հասարակական կազմակերպությունների (ՀԿ), անասնապահությամբ զբաղվող ֆերմերային տնտեսությունների և «Արոտօգտագործողների միություն» Սպառողական կոպերատիվների (ԱՄ ՍԿ) ներկայացուցիչներ (մասնակիցների ցուցակը ներկայացված է ստորև):

Օրակարգ.

1. Սոցիալական և բնապահպանական շրջանակային փաստաթղթի ներկայացում և քննարկում
   Խոսնակ- Ալիսա Սավադյան

   Սոցիալական և բնապահպանության գծով խորհրդատու, ՀԳՌԿՄ II ծրագրի նախապատրաստական թիմի անդամ

2. Վերաբնակեցման քաղաքականության շրջանակային փաստաթղթի ներկայացում և քննարկում
   Խոսնակ- Զարուհի Հայրապետյան

   Վերաբնակեցման գծով խորհրդատու, ՀԳՌԿՄ II ծրագրի անդամ

Տիկին Ա. Սավադյանը ներկայացրեց հանրային լսումների հանդիպման հիմնական նպատակները և հատուկ նշեց, որ լսումների ժամանակ մասնավորապես վերհանվեց

մասնակիցների արձագանքը ՀԳՌԿՄ II ծրագրի յուրաքանչյուր բաղադրիչի հետ կապված հնարավոր սոցիալական ռիսկերի վերաբերյալ և առաջարկվեցին համապատասխան մեղմացման միջոցառումներ: Փաստաթուղթը ներկայացնելուց հետո տիկին Ա. Սավադյանը պատասխանեց հնչեցրած հարցերին:

Հարցեր և պատասխաններ.

i. **Հարց.** Զ. Խաչատրյան – «Կայուն ջրային միջավայր» ՀԿ

Ո՞վ է պատասխանատու լինելու բնապահպանական փաստաթղթերի համար, մասնավորապես ենթակառուցվածքային ներդրումների և դրամաշնորհային ծրագրերի համար ԲՄԿՊ մշակելու գործում: Ավելին, որո՞նք են երկու ենթածրագրերի միջև եղած տարբերությունները:

Պատասխան. Ա Սավադյան

ԳԾԻԳ-ի բնապահպանական և սոցիալական ազդեցության գծով մասնագետները պատասխանատու կլինեն Բաղադրիչ 1-ով նախատեսված ենթակառուցվածքների ենթածրագրերի շրջանակում բնապահպանական գնահատման և ԲՄԿՊ մշակման համար: Յուրաքանչյուր ենթածրագրի համար պետք է մշակվի ԲՄԿՊ, այդ թվում՝ առանձնահատուկ բնապահպանական և սոցիալական ազդեցության մեղմացման միջոցառումներ, որոնք կախված են ենթածրագրի տեսակից (ոռոգման համակարգ, ջրարբիացման համակարգ, ևն): Բաղադրիչ 2-ի շրջանակներում դրամաշնորհները կտրամադրվեն՝ հիմք ընդունելով ներկայացված հայտերը, և եթե ենթածրագիրը ԲԿՊ է պահանջում, ապա հայտատուն պատասխանատու կլինի դրա համար: ԳԾԻԳ-ի բնապահպանության գծով մասնագետը հայտատուներին ուղղություն կտա ԲԿՊ – ների մշակման, ինչպես նաև դրամաշնորհով ֆինանսավորվող ենթածրագրի ընթացքում այդ պլանների իրականացման գործում:

i. **Հարց:** Ն. Սարուխանյան - «Կանաչ արահետ» ՀԿ

Ո՞վ է պատասխանատու լինելու ծրագրի բնապահպանական վերահսկողության համար

Պատասխան. Ա Սավադյան

ՀԳՌԿՄ II ծրագրի շրջանակներում բնապահպանական կատարման ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ԳԾԻԳ-ի վրա: Ծրագրով ֆինանսավորված միջոցառումների բնապահպանական համապատասխանության վերահսկողությունը կիրականացվի բաղադրիչի համակարգողների և ԳԾԻԳ-ի բնապահպանական և սոցիալական գծով մասնագետների կողմից:

ii. **Հարց:** Ա. Հովսեփյան – ԱՋՀ-Հայաստան ՀԿ

Ինչպե՞ս է հանրությունը տեղեկանալու ենթակառուցվածների ենթածրագրերի և նրանց բնապահպանական փաստաթղթերի մասին:

Պատասխան. Ա Սավադյան

Յուրաքանչյուր ենթածրագրի համար պետք է մշակվի և հրապարակվի ԲՄԿՊ: Հանրային լսումների հանդիպման ամսաթվի և ժամի վերաբերյալ հայտարարությունները պետք է տեղադրվեն ԳԾԻԳ-ի ինտերնետային կայքում: Ենթածրագրերի չափից և ծավալից կախված՝ գալիք հանրային լսումների հանդիպման մասին հայտարարությունները կարող են նաև հրապարակվել տեղական թերթերում և հեռուստատեսությամբ:

Տիկին Ա. Սավադյանը լսարանին ներկայացրեց ծրագրի տարբեր բաղադրիչների հնարավոր սոցիալական ռիսկերը: Արդեն նշվել էր, որ ծրագրի իրականացման արդյունքում բացի կարճաժամկետ դրական սոցիալական ազդեցություններից կարող են լինել նաև կարճաժամկետ բացասական ազդեցություններ: Այս ազդեցությունները կարող են զգալի ներգործություն ունենալ ծրագրի իրականացման ընթացքի վրա և ուստի պետք է ուշադրությամբ դիտարկվեն ծրագրի նախագծման փուլում:

Բոլոր բաղադրչների իրականացման ընթացքում մարդկանց առանձին խմբեր՝ հատկապես կանայք, երիտասարդներ, խոցելի խմբեր, հաշմանդամներ և էթնիկական փոքրամասնություններ, կարող են դուրս մնալ ծրագրից: Ուստի, ԳԾԻԳ-ը առանձնահատուկ ուշադրություն է դարձնում այս խմբերին հնարավորություն դարձնելով նրանց մասնակցությունը ծրագրին: Ծրագիրը ոչ միայն չպետք է բացասական ազդեցություն թողնի այս խմբերի վրա, այլև ակտիվորեն պետք է խրախուսվի ծրագրին նրանց լիարժեք մասնակցությունը և ծրագրից նրանց օգուտներ ստանալը:

Տիկին Սավադյանը նաև նշեց, որ կլինի գանգատների բավարարման մեխանիզմ, որը կգործի ծրագրի իրականցման ընթացքում, որպեսզի ծրագրի հետ

կապված մտահոգությունները, հարցերը և հնարավոր դժգոհությունները ներկայացվեն, ընդունվեն, բավարարվեն ժամանակին և կազմակիերպված եղանակով:

Հանդիպման մասնակիցներին խնդրեցին իրենց արձագանքը տալ այն մասին, թե արդյո՞ք նրանք տեսնում են լրացուցիչ սոցիալական ռիսկեր ծրագրի իրականացման ընթացքում, որոնք ներկայացված չեն ներկա Բնապահպանական և սոցիալական կառավարման շրջանակային փաստաթղթում, և ի՞նչ կառաջարկեն այդ ռիսկերի մեղմացման ուղղությամբ:

Հարց ու պատասխան, կարծիքներ և նշումներ

iv. Հարց – Ն. Դարբինյան – Էկոգլոբ ՀԿ

Շատ կարևոր է ծրագրում ընդգրկել աղքատ համայնքների մարդկանց խմբեր և շահառուների տարբեր խմբեր և, այդ իսկ պատճառով, շատ կարևոր է մատուցել լրացուցիչ խորհրդատվություն և կազմակերպեմ բացատրական աշխատանքներ կանանց, երիտասարդների և այլ խմբերի հետ՝ լրացնելու համար տեղեկատվության պակասը: Բոլոր բաղադրիչների շրջանակներում շատ կարևոր է քննարկել կանանք դերի մեծացման խնդիրը՝ հաշվի առնելով, որ կանանց անդամակցությունը կոոպերատիվներին, ներառյալ նրանց ներկայությունը խորհուրդներում պետք է խթանվի և կոոպերատիվների կողմից պետք է լրացուցիչ գործողություններ ձեռնարկվեն իրականացվող միջոցառումներում նրանց մասնակցությունը խրախուսելու համար:

Պատասխան - Գ. Խաչատրյան, Ա. Սավադյան

ՀԳՌԿՄ 2 ծրագիրը նպատակ ունի մեծացնել կանանց մասնակցությունը և մեծացնել նրանց դերը կոոպերատիվներում, սակայն համայնքներն իրենց պետք է առաջարկեն որոշ լուծումներ, քանի որ կան համայնքներ, որտեղ կանայք ոչ մի մասնակցություն չունեն ոչ սոցիալական կյանքին և ոչ էլ որոշումների կայացման գործընթացում:

v. **Նշումներ**

Սյունիք ՄԱԹ համակարգող, Ռ. Սարդարյան

Մեր մարզում կան համայնքներ, որտեղ կոոպերատիվների աշխատանքը կատարվում է և հիմնական կարծիքը ձևավորվում է կանանց կողմից: Օրինակ, Քարահունջ համայնքում գյուղապետը կին է և կանայք մեծ դեր ունեն ու ակտիվորեն մասնակցում են բոլոր խնդիրների լուծման գործում:

iii. **Հարց.** Ն. Դարբինյան – «Էկոգլոբ» ՀԿ

Ինչպես կարելի է խրախուսել կանանց մասնակցել ծրագրերին և կոպերատիվների անունից ընդունել որոշումներ, եթե որոշ համայնքներում կանանց թույլ չեն տալիս նույնիսկ մասնակցել սովորական միջոցառումներին:

Պատասխան. Ա. Սավադյան

Ծրագրի ընտրության չափորոշիչները կարող են մշակվել այնպես, որ խրախուսվի կանանց մասնակցությունը կազմակերպություններին/կոպերատիվներին:

iv. **Հարց.** Ս. Այվազյան – Օրհուս կենտրոնների համակարգող

Ինչ կատեգորիայի հողեր են օգտագործվելու արոտավայրերի ստեղծման համար: Արդյոք չեն իրականացվելու անտառահատման աշխատանքներ:

Պատասխան. Ա. Սավադյան

Արոտները կնդլայնվեն ոչ թե անտառների հատման այլ դեգրադացված հողերը կրկին օգտագործման համար պիտանի դարձնելու նպատակով դրանք բարելավելու միջոցով: Ընդհանուր առմամբ, եթե ակնկալվում է, որ որևէ ծրագիր զգալի ազդեցություն կունենա շրջակա միջավայրի վրա՝ այդպիսի ծրագրի համար մշակվում է շրջակա միջավայրի կառավարման պլան, ռիսկերից խուսափումը կամ պատշաճ մեղմացումը ապահովելու համար:

v. **Հարց.** Ս. Այվազյան

Արդյոք ծրագրի շրջանակներում իրականացվող որևէ գործողության համար կպահանջվի բնապահպանական փորձաքննություն և, եթե այո, ապա ինչպիսի միջոցառումներ կձեռնարկվեն այդ դեպքում:

Պատասխան. Ա. Սավադյան

ՀՀ օրենսդրությամբ սահմանված որոշ դեպքերում, կարող է պահանջվել բնապահպանական փորձաքննություն և գործողությունները կարող են ֆինանսավորվել միայն ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից դրական եզրակացություն տալուց հետո: Նման անհրաժեշտություն կարող է առաջանալ, մասնավորապես, ենթակառուցվածքային ծրագրերի դեպքում: Նման դեպքերում, պետք է հետևել ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգին, ներառյալ՝ ծրագրի կառուցվածքի վերաբերյալ հանրային լսումները: ՀԳՌԿՄ երկրորդ Ծրագիրը չի ֆինանսավորի որևէ գործողություն, որի համար չի ստացել շրջակա միջավայրի ոլորտի Լիազոր մարմնի կողմից տրվող դրական եզրակացությունը, եթե այն պահանջվում է:

Ա Սավադյանը նաև անդրադարձավ բողոքների ներկայացման մեխանիզմի հարցին և խնդրեց պրն Խաչատրյանին մանրամասնել, թե ինչպես է իրականացվելու այս գործընթացը Ծրագրի շրջանակներում:

vi. **Մեկնաբանություններ.** Գ. Խաչատրյան

Յուրաքանչյուր Ծրագրի մշակման փուլում պետք է պատրաստ լինել և հստակ մոտեցում ունենալ շահառուների կողմից բողոքների ներկայացմանը և, բնականաբար, այս Ծրագրի շրջանակներում ևս կառաջանան տարբեր բնույթի բողոքներ և դժգոհություններ:

Այս հարցի կապակցությամբ պրն Խաչատրյանը նշեց, որ ընթացիկ ՀԳՌԿՄ առաջին Ծրագրի շրջանակներում հստակ գործում է բողոքների և դժգոհությունների ներկայացման մեխանիզմը, որը կկիրառվի նաև ՀԳՌԿՄ երկրորդ Ծրագրի համար: Ներկա շահառու կազմակերպությունների ներկայացուցիչները, իրենց համայնքների օրինակների վրա, բացատրեցին, թե ինչպես և որ մակարդակներում է գործում այդ մեխանիզմը: Բողոքների ներկայացման մեխանիզմը մանրամասն կնկարագրվի Ծրագրի Գործառնական ձեռնարկում:

Ստացված կարծիքները ողջունվեցին ԳԾԻԳ-ի կողմից և լսումների ընթացքում բարձրացված բոլոր հարցերը հետագայում արտացոլվեցին ՇՄՍԿ փաստաթղթում: Մասնավորապես, Ծրագրի հնարավոր սոցիալական ազդեցությունների առնչությամբ, վերանայվեց Գլուխ 5, Ենթագլուխ 5.1-ը՝ Բաղադրիչ 1-ին առնչվող լրացուցիչ հնարավոր սոցիալական ռիսկերը արտացոլելու նպատակով: Ենթագլուխ 5.2-ում ներառվեցին լրացուցիչ միջոցառումներ կանանց, երիտասարդների և խոցելի խմբերի ներառումը և մասնակցությունը Ծրագրին խթանելու և ժամանկին տեղեկատվություն տրամադրումը շահառուներին ապահովելու համար:

Գլուխ 6, Ենթագլուխ 6.1-ում ներառվեցին Բաղադրիչ 2-ի համար լրացուցիչ հնարավոր սոցիալական ռիսկերը և դրանց մեղմացման միջոցառումները, համապատասխանաբար, արտացոլվեցին Ենթագլուխ 6.2-ում:

Գլուխ 7, Ենթագլուխ 7.1-ում ավելացվել է տեղեկատվության բացակայության և ոչ բավարար կարողությունների պատճառով կանանց և երիտասարդների սահմանափակ մասնակցության ռիսկը Ծրագրի շրջանակներում տրամադրվելիք ուսուցումներին և Բաղադրիչ 3-ի շրջանակներում կարողությունների զարգացման գործողություններին, ինչը արտացոլված է նաև ՇՄՍԿ-ում, ինչպես նաև համապատասխան մեղմացուցիչ միջոցառումներ են ավելացվել Ենթագլուխ 7.2-ում: Սա ներառում է նաև հնարավոր շահառուների այս խմբերի թիրախումը տեղեկատվության տարածման արշավների ընթացքում, ինչպես նաև բողոքների ներկայացման մեխանիզմների սահուն գործունեության ապահովումը:

vii. **Հարց.**

Ինչու է վերաբնակեցման ծախսերի համար նախատեսված բյուջեն ձևավորվում վարկային միջոցների, այլ ոչ թե տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների հաշվին: Առաջարկում ենք ապահովել բյուջեյի համաֆինանսավորում, ինչպես որ դա արվելու է դրամաշնորհային ծրագրերի դեպքում:

Պատասխան.

Կիրականացվի ամեն ջանք մասնավոր հողերի վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Դրա ապահովման անհնարինությունը, կնշանակի, որ այլ տարբերակներն ավելի թանկ են: Կարծում ենք, որ ընդունված մոտեցումը ավելի արդարացի է և կապահովի, որ համաֆինանսավորման սահմանափակ հնարավորությունների պատճառով, ավելի աղքատ համայնքները դուրս չմնան Ծրագրից:

viii. **Հարց.**

Արդյոք ճշմարիտ է, որ նույնիսկ Ծրագրի կողմից տուժած այն անձինք, որոնք չունեն որևէ գրանցում, կստանան փոխհատուցում ծառերի և մշակաբույսերի համար:

Պատասխան.

Այո, ՎՔՇ փաստաթղթին և ՀԲ ընթացակարգերին համաձայն, Ծրագրի կողմից տուժած անձը, որը օրինական պահանջներ չի կարող ներկայացնել հողի նկատմամբ, կփոխհատուցվի այդ հողի վրա կատարված բոլոր բարելավումների համար, ներառյալ՝ շինությունները, մշակաբույսերը, ծառերը, և այլն:

ix. Հարց.
Ինչ կարգով է հաշվարկվելու հողի համար փոխհատուցումը. կադաստրային, թե փաստացի հողի տեսակի/հողօգտագործման հիման վրա:

Պատասխան.

Որոշումը կայացվելու է Ծրագրի կողմից տուժած անձանց օգտին: Եթե հողի կադաստրային կատեգորիան ավելի բարձր է, քան իրականը (օրինակ՝ դա առևտրային նշանակության հող է, սակայն օգտագործվում է որպես արոտ)՝ հողը կգնահատվի ըստ կադաստրային տեսակի: Եթե հողի փաստացի օգտագործման տեսակը ավելի բարձր է, քան կադաստրայինը (օրինակ՝ արոտը օգտագործվում է որպես այգի), ապա հողի գնահատման ընթացակարգի համար հիմք կհանդիսանա փաստացի օգտագործումը:

x. Հարց.
Ծրագրի իրականացման որ փուլերում կկազմակերպվեն հանրային լսումներ:

Պատասխան.

Հանրային լսումներ կկազմակերպվեն նախագծային փուլում, մինչ շինարարական աշխատանքների մեկնարկը: Հանդիպման արձանագրություններ կպատրաստվեն յուրաքանչյուր հանրային լսման համար:

Մասնակիցների ցանկ

###	Անուն, ազգանուն	Պաշտոն	Կոնտակտային տվյալներ
1	Վանիկ Քառյան	ՀՀ Լոռու մարզ, Ահնիձոր համայնքի ղեկավար	098 04-07-89
2	Արմեն Ավետիսյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ջոլաքար կոպերատիվի նախագահ	077 60-36-99
3	Բենիկ Մաթևոսյան	ՀՀ Լոռու մարզ, Ահնիձորի կոպերատիվի նախագահ	098 53-01-17
4	Բաբիկ Խաչատրյան	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Գեղհովիտի կոպերատիվի նախագահ	077 14-23-44
5	Անդրանիկ Կարապետյան	ԳՃԻԳ ՊՀ Լոռու ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-44
6	Խորեն Բաղալյան	ԳՃԻԳ ՊՀ Գեղարքունիքի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-26
7	Արմեն Վանյան	ԳՃԻԳ ՊՀ փոխտնօրեն	010 29-73-03
8	Ալլա Հովհաննիսյան	ԳՃԻԳ ՊՀ թարգմանիչ	098 73-66-20
9	Սոնա Ծառուկյան	ԳՃԻԳ ՊՀ 2.2-րդ բաղադրիչի համակարգող	091 01-35-28
10	Սիլվա Այվազյան	Երևանում Օրհուս կենտրոնների համակարգող	010 55-13-64
11	Էմմա Մկրտչյան	ԳՃԻԳ ՊՀ խորհրդատու	099 01-70-30
12	Ալիսա Սավադյան	ԳՃԻԳ ՊՀ Բնապահպանության գծով խորհրդատու	091 20-42-15
13	Լևոն Ջանփոլադյան	«Կանաչ արահետ» ՀԿ, PR մասնագետ	010 57-57-79
14	Հրահատ Բարսեղյան	«Կանաչ արահետ» ՀԿ, ագրոնոմ	093 10-09-40
15	Մարինե Մուխսյան	ԳՃԻԳ ՊՀ Արագածոտնի ՄԱԹ-ի համակարգողի օգնական	094 88-76-89
16	Անդրանիկ Շամոյան	ՀՀ Արագածոտն մարզ, Ներքին Սասնաշեն համայնքի ղեկավար	077 18-69-99
17	Իռենա Առուստամյան	ԳՃԻԳ ՊՀ մոնիտորինգի մասնագետ	091 01-93-99
18	Զարուհի Հայրապետյան	ԳՃԻԳ ՊՀ Վերաբնակեցման գծով խորհրդատու	095 23-59-50
19	Հայկ Կարապետյան	ԳՃԻԳ ՊՀ Իրավաբան	091 01-93-95

20	Երանոսյան Արտուշ	ԳԾԻԳ ՊՀ ճարտարագետ-շինարար	091 01-35-48
21	Վարդան Խոստիկյան	ԳԾԻԳ ՊՀ ճարտարագետ-շինարար	091 41-30-84
22	Գագիկ Խաչատրյան	ԳԾԻԳ ՊՀ Տնօրեն	010 29-73-01
23	Արտակ Խաչատրյան	ԳԾԻԳ ՊՀ Շիրակի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-41
24	Հարություն Արտաշեսյան	Շիրակի ՄԱԹ-ի համակարգողի օգնական	077 85-96-85
25	Հայկ Պետրոսյան	ՀՀ Շիրակի մարզ, Բասեն համայնքի կոպերատիվի նախագահ	077 78-37-00
26	Կամո Խաչատրյան	ԳԾԻԳ ՊՀ 1-ին բաղադրիչի գլխավոր մասնագետ	091 41-36-74
27	Կարեն Թորոսյան	ԳԾԻԳ ՊՀ 1-ին բաղադրիչի համակարգող	091 46-44-42
28	Ալբերտ Հարոյան	ՀՀ Արագածոտնի մարզ, Թաթուշի գյուղապետ	098 11-00-59
29	Նունե Դարբինյան	«Էկոգլոբ» ՀԿ, Նախագահ	091 41-83-11
30	Գևորգ Գալստյան	ՀՀ Արագածոտն մարզ, Ավանի գյուղապետ	093 20-95-63
31	Աղարոն Ոսկանյան	ՀՀ Շիրակի մարզ, Ջրառատի գյուղապետ	093 70-40-77
32	Արմենակ Համբարձումյան	ՀՀ Շիրակի մարզ, Աղինի կոպերատիվի նախագահ	096 58-50-18
33	Արևիկ Հովսեփյան	«Երկրի ջրային ոլորտում գործընկերություն» ՀԿ	091 53-02-92
34	Զարուհի Խաչատրյան	«Կայուն ջրային միջավայր» ՀԿ	096 34-35-78
35	Արթուր Պետրոսյան	ՀՀ ԳՆ Անտառաբուծության բաժնի պետ	095 56-52-91
36	Ռուբիկ Սարդարյան	Սյունիքի ՄԱԹ-ի համակարգող	091 01-35-68

Նկարներ

ԲՍԿՇՓ և ՎԿՇՓ ներկայացում

Քննարկումներ, նշումներ, հարցեր և պատասխաններ